



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1638

172

6-14

84

2010

ԽՐԱՏՔ
ԸՆՏԱՆԵԱՅ

884

17
6-14
u.u

Ի Ր Ա Տ Ք

Ը Ն Տ Ա Ն Ե Ա Ց



Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Ի Ի Ն — Ո Ր Դ Ի Ք
Ը Ն Տ Ա Ն Ի Ք

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ա Ց

Յ Ա Կ Ո Ք Ո Ս Կ. Ս Ր Ա Պ Ե Ա Ն

ժ ա ու ն գ աւ ո Ր ա շ ա կ եր ա ս ու ը թ Ղ ե ւ ո ն ղ ե ա ն ց
Գ ի շ եր թ ե ա յ Վ ա թ ժ ա ը ա ն ի ս ու ը թ Վ ա ն ա ց ս



1633

Տ Պ Ա Գ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի Վ Ա Ն Ս Զ. Մ. Ա Ս Տ Ո Ւ Ա Ն Ծ Ա Ն Ի Յ Ա Ր Մ Ա Շ
— 4876 —

Քր. (16)

26885-ՎՂ

Անթրակիտի ԲՈՒՄ
ՎՈՒՄ ԿԱՄԲՈՒՄ ԿԱՐԻՆՈՒՄ

Գրադարանի ԵՐԵՎԱՆ-ԹԵՄ,
հրատարակ. 1911 թ. մայիսի 7.

Գր. 8 ՎՂ.

ՅՍՈՒՋԱԲԱՆ

ՀՐԱՄԱՆԱԻ
ՎԱՆԱՀՕՐ Տ. ԽՈՐԵՆԱՅ
Ս. ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ



5854-57

2002

Մէյնան Շարնի նշանաւոր արքեպիսկոպոսն իր թեմին ընտանեկան բարեկարգութեանց համար այս գիրքն իբրև ԽՐԱՏ ԳՐԻՍՏՈՆԵԱՅ ԸՆՏՈՆԵԱՅ գրած է, որ երեք գլխաւոր հատուածներով նախ՝ Ամուսնութեան վրայ կը խօսի, թէ ի՞նչ է ասոր էական հանգամանքներն և ամուսնանալէ յառաջ և յետոյ ժամանակի մէջ քրիստոնէի մը գործածելիք զգուշութիւններն ի՞նչ են. երկրորդ՝ Որդւոց վրայ, թէ ի՞նչպէս սնուցանելու է և ի՞նչպէս դաստիարակելու. երրորդ՝ Ընտանեաց վրայ, թէ ի՞նչ համամտութեամբ կենցաղավարելու են, ի՞նչպէս աշխատելու և բարեկարգութիւն պահելու են իրենց տանը մէջ:

Որովհետև ընտանիքն առաջին տարերքն է, որ մէն կը գոյանան ազգեր, և ընտանեաց առանձին բարոյական բարեկարգութիւնն համօրէն ազգին երաշխաւորութիւնն է, և ընդ հակառակն, ազգ մը կը կործանի՝ երբ ընտանիք՝ անկարգութեան և անբարոյականութեան մէջ իյնան, հետևապէս ընտանեաց բարեկարգութեան վրայ գրուած խրատներն ամենէն կարևորագոյնն են առ հասարակ ամեն ազգաց համար: Այսպիսի խրատական մը մեր ազգին համար ալ օգտակար ընելու

ՄԱՐԿՈՍԻԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ա.

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՔ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

մտք թաղմանեցի . հեղինակին գրած այն պարբերու-
թիւններն որ մեր ազգին չէին յարմարեր՝ փոխիւնելով
գրել օգտակար համարեցի և իբրև դոյզն ծառայու-
թիւն սիրելի ազգիս մատուցի , փափաքելով՝ որ դար-
մանուին այնչափ անհնարին մլտաներն՝ որովք կը աու-
ժեն ընտանիք , հերքուին այն մոլութիւնք՝ որ իբրև
թոյն ազգին ընդհանուր երակաց , ընտանեաց , մէջ
թափանցելով՝ բոլոր ազգային մարմինն ապականելու
վրայ է :

Աստուած ամուսնութիւնը բարձր աստիճանի մէջ
հաստատեց . բայց մարդկային մոլութիւնները չափա-
զանց նուաստացուցին . ասիկա յիշելով կը զարմանամք
և կը տիրիմք :

Աստուած ամուսնութիւնը դրախտին մէջ սահմա-
նեց՝ մի , սուրբ և անլուծանելի մնալու պայմանաւ :

Սուրբ էր Աստուծոյ հաստատած ամուսնութիւնը .
գի այր և կին իւր պատկերին նման ստեղծեց . Եւ աբբ
Աստուած զորքն ըստ դարձի իբրև : Եւ ա՛ Ագամայ վրայ
նայած ատեն՝ նորա ճակտին վրայ աստուածային փա-
ռաց և մեծ վայելչութեան ճաճանչները կը նկատէր : Ա-
դամ ալ Եւսոյի գիւմաց վրայ զարմանօք նայելով , անոր
վրայ աստուածային գեղեցկութեան , բարերարութեան ,

խանդաղատանաց և սիրոյ ճառագայթը կը փառաւորէր։ Ասոնք զարմանալի ապացոյցքն են զիրենք խնամող Նախանձու թեան՝ որով կը պահպանուէր մարդկային առաջին ընտանիքը = Ո՛րչափ առատ էր այս առաջին ընտանեաց սէրը՝ նոյնչափ առաւել էր ամուսնութեան սրբութիւնը։ Աստուծոյ խորհուրդը բացայայտ կ'երևէր հոն։ Աղամայ և Եւայի միաւորութիւնը սուրբ էր. Ըստ պարկերի էրու՝ . . . պրո և էք պրա զնսս :

Մի էր Աստուծոյ հաստատած ամուսնութիւնը, զի Աղամայ միայն մէկ կ'ին տուաւ :

Բազմակնութիւնն ընտանիք կը խռովէ, զանազան կռիւներու, զաւակաց և կանանց մէջ անընդհատ նախանձու աղէտալի պատճառն է. ամուսնական հաւատարմութիւնը բոլորովին կ'եղծանէ։ Կիներ բոլորովին էրկանն է. այրն ալ բոլորովին կնոջ պարտականը։ Բազմակնութեան մէջ սէրը, որ սրտին ամենէն բուռն ըզգացումն է, անհաղորդ կը մնայ եւ կը բաժնուի. սիրոյ փառարանը մէկ է եւ բոցն անբաժանելի։ Ուրեմն, ամուսնական միութիւնը, թէ՛ արդար, իմաստուն եւ բնական եւ թէ՛ աստուածային օրէնք է։

Մովսէս բազմակնութիւն չը հաստատեց, բայց բոլորովին ջնջելալ չը կարենալով՝ չափաւորեց, աւանայ զիջաւ այս բանին, չէ՛ թէ թոյլ տուաւ։ Եւ Քրիստոսի ըսածին պէս՝ Մովսէս յակամայից բռնադատեալ կարելի եղածը միայն ըրաւ։ Աստուած առժամանակեայ կերպով համբերեց այս բանիս, զի ՚ի սկզբանէ այսպէս հաստատած չէր։ Հիմա Քրիստոնեայ չեղող հասարակութիւնք, բազմակնութեան մէջ, Յիսուսի Քրիստոսի դատապարտած բարոյականին զո՛հ մնացած են։

Քրիստոնէական դրութեան և ասոր արդիւնքն երող բարոյական և ընկերական յառաջադիմութեան ամենէն մեծ խոչընդոտն ամուսնութեան մէջ միութեան

օրէնքը չը պահուին է։ Անլուծանելի էր Աստուծոյ հաստատած ամուսնութիւնը։ Երբ Աստուած Աղամայ կ'ին տուաւ, Աղամայսպէս դուչեց. Այս այժմ ոսկր յոսկերաց էնոյ և մարմնն ՚ն մարմնոյ էնոյ։ Միթէ կարելի՞ է որ մէկն իւր մարմինէն կամ ոսկորներէն բաժնուի։

Առաջին հայեցումով յայտնի կը տեսնուի՝ որ ամուսնութիւնն ըստ ինքեան աննման դաշնադրութիւն մ'է, որ ուրիշ դաշնադրութիւններու պէս դաշնակցաց կամաց համեմատ չը կրնար փոխուիլ, և տեւականութիւնն իւր էական կէտերէն մէկն է։

Երբոր ամուսնութիւնը քակտելի ըլլայ, դաշնաց մէջ հաւասար հաւանութիւնը չը մնար. Միթէ արձակեալ կնոջ մ'երկրորդ օրուան վիճակն իւր էրկանը վիճակին կը հաւասարի՞. Օ՛ժիտ մը բերած է անոր՝ որ այլ ևս չի կրնար հետը տանիլ, այսինքն, իւր կուսական զմայլանքն, իւր առաջին գեղեցկութեան փափուկ ծաղիկն և սիրալից սրտի մ'առաջին դրդիւր։ Ո՛րչափ պիտի նսեմանայ կնոջ արժանիքն՝ երբ այնուհետեւ այս դառն յորջորջումն ընծայուի իւր անուան թողուած . . . ձգուած . . . :

Եթէ ամուսնութիւնը քակտելի ըլլայ, եթէ նորահանգոյցն ուզուած տտեն խղել կարելի ըլլայ, ամուսնութիւնն անհեռակական գործողութիւն մ'եղած կ'ըլլայ՝ գոնէ էրկանը համար, որն որ արդեօք ո՛րչափ թեթեամտութեամբ կը կատարէր այն դաշնադրութիւնը։ Պիտի կարենա՞ր հանդուրժել՝ եթէ կնոջ բարքն իրեն չը յարմարէր, կամ, ինչպէս որ բնական է մարդոց, եթէ սխալ մը գործէր ամուսնական կենաց համակերպութեան պարտուց դէմ։ Այն ատեն ընտանեկան ամենամանր խնդրոց համար վէճեր պիտի ըլլային երկու կողմանէ, և ոչինչ բանի մը համար անմիջապէս

արձակուել պիտի ջանային : Բայց այս ատեն ի՞նչ պիտի ըլլան զաւակները , զորս դաստիարակելը թէ՛ հօր և թէ՛ մօր պարտքն է , և երկուքն ալ իւրեանց յատուկ ազգեցութիւնն ունին այս բանիս մէջ : Եթէ մայրը մի՛նակ ըլլայ , իւր ազգեցութիւնն , որ Աստուծոյ իրեն ամուսին տուած մարդուն ազգեցութեամբը զօրաւոր պիտի ըլլար , կը կորսի : Եթէ հայրը մինակ ըլլայ , զաւակն իւր մօր անուշ գորովանքէն , հսկողութենէն և քաղցր ազգեցութենէն զրկուելով՝ անդադար պիտի հոգայ՝ թէ ի՞նչպէս դաստիարակելու է : Խեղճ տղան իւր ծնողաց բաժնուելէն յետոյ , եթէ հօրն ետեւէն երթայ , պիտի կարենայ՝ պահել մօր վրայ ունեցած սէրն ու մեծարանքը : Երբ մօրը քով ըլլայ , իւր կենաց գըլխաւոր հեղինակին , հօրը , դէմ ինչե՞ր չը պիտի լսէ : Իսկ թէ որ խորթ հօր եւ կամ մօր քով կենայ , ի՞նչպէս պիտի հոգացուի և ի՞նչ վիճակ պիտի ունենայ :

Ո՛հ , կին արձակելը քանի մը բարոյագիրը կը պաշտպանեն , և մարդկային յառաջադիմութեան պատճառ կը սեպեն : Բայց ընդհակառակն Աստուած երբ ընտանիք մ՛երեսէ ձգէ , սոյն պատիժը կ'ուտայ : Քանի մ՛երկիրներ , որոց մէջ կրօնից թուլութեամբ կին արձակելը սովորութիւն եղաւ , անձամբ փորձեցին և տեսան թէ՛ Աստուծոյ ամուսնութեան օրէնքին վրայ դրած հաւատարմութիւնը խտտելն ո՞րչափ ծանր է եղեր : Այն ատեն , ժողովրդեան մէջ , ամուսնութիւնը զողոր հարձակալութիւն մը կը դառնայ , և ընտանիքները փոխանակ միանալու , օր ըստ օրէ ընդհանրացած արձակման հետեւանքովն ասորիներու անդամներն ալ բաղմանալով՝ ատելութիւնները կը շատնան , և մէկ ընտանիքի քնասօր բոլոր գաւառին վրայ կը տարածի :

Առաջին ամուսնութիւնն երեք հիմնական պայմաններուն , այսինքն , միութեան , սրբութեան և ան-

լուծանելիութեան վրայ հաստատուած ըլլալով՝ որ աստիճան երջանիկ ըլլալը , և մարդ իւր անմեղութեան մէջ եղած ատեն ամուսնութենէն ի՞նչ քաղցրութիւն փայելէն և ո՞րքան պարկեշտ և սուրբ հեշտանաց մէջ փափկանալը նկարագրելու համար՝ բաւական չեն դըրախտի փայելմանց վրայ եղած աւանդութիւններն և քրիստոնեայ Միլիտոն բանաստեղծին նուագները , այլ երգ—Էրգոցին աստուածային երգերը հարկաւոր են :

Բայց մեզքն երեւան դալուն պէս , ետեւէն երկու ընկերական առտնին կենաց թշնամիներ ալ երեւան եկան , հեշտախտութիւն և բռնութիւն : Առաջին կինն Աստուծոյ իւր գլուխը կապած պսակը կորսնցուց , և աստիճան աստիճան իջնելով իւր էրկանն աղախին , գերի և սարուկ եղաւ , էրկանը ստացուածոց մէկ մասին վրայ չարաչար ծառայող , ընտանեկան տարժանելի ծառայութեանց ենթակայ և էրկանն անյագ տենչանաց դործի և զոհ եղաւ :

Ըսածներուս կենդանի նկարագիրը դիւրաւ կրնան յիշել Սրեկեքի՝ նա՛ մանաւանդ Սփրիկէի ժողովրդոց բարբըր զիտցողները : Տօթակէզ անապատից մէջէ այր մարդիկ ընտանեօք կը ճանապարհորդեն : Կտաւէ կամ մետաքսէ կապերտով համետեալ ձիու վրայ յանհողս էլիկը կը նստի : Ետեւէն կինը ճանբորդութեան բեռները շալկած , իյնալով ելլելով հետի կը քալէ :

Քաղաքակրթեալ ազգեր , ինչպէս Յոյնք և Հռովմայեցիք , վասն արդարութեան և մարդասիրութեան կնոջ այս ամօթալի և հարստահարեալ վիճակը բարեխառնեցին : Բայց մինչև իսկ կանանց վիճակն ասպահովելու համար հոռոտտեալ ասոնց օրինաց մէջ մէկէն կրնայ տեսնուիլ այնպիսի նշաններ՝ որ դարձեալ կը հաստատեն՝ թէ կինը սարուկ է հեթանոսական ամուսնութեան մէջ : Հռովմայեցւոց ամուսնական դատաս-

տանադիրք ըսուած օրինադիրքը կը հրամայէ՝ որ կնոջ չը վատահի, չարչարէ և հարստահարէ սյրը :

Մովսիսական օրէնքը հեթանոսաց բոլոր օրէնքներէն աւելի կնոջ արժանիքը կը պաշտպանէր . բայց Աստուծոյ առ յանցաւորն էւա ուղղած դատակնքոյն, կան ճիշդը խօսելով, կանխատեսութեան հետեւանքը չէր ջընջած .

Այն դարուց մէջ՝ յորս չէր ծագած Աւետարանին բարերար ըլլալ, թէ ո՛րչափ խոտան և չարաչար փիճակ ունէին կանայք Հռովմի, Յունաստանի և մինչև իսկ Հրէաստանի մէջ՝ ստորագրել շատ դիւրին էր և շատ ալ օգտակար, բայց մեր դիտաւորութիւնն ընդարձակ ճառ յօրինել չէր, այլ պարզ խրատաբանութիւն մը դըրել :

Բ.

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆ ԻՅՐԵՒ ԽՈՐՀՈՒՐԳ

Քրիստոսի փրկչին մերոյ վերապահեալ էր ստրուկ փիճակի մատնուած կինը վերականգնելն և ընտանեաց ու ընկերութեան մէջ կորսնցուցած աստիճանը վերադարձնելը :

Կ'ըսուի, և ճշմարիտ է՝ թէ ժողովրդեան մէջ կանայք աւելի ջերմեռանդ են քրիստոնէութեան : Երբոր մարդոց մէջ ընդհանուր թուրահաւատութիւն կը աիւրէ, կանայք աւելի պինդ և հաստատուն կ'ըլլան հաւատքի մէջ . եւ շատ իրաւամբ, զի այնպէս կ'զգան

թէ Յիսուս Քրիստոս և Եկեղեցի իրենց համար եղած են : Ո՛րչափ երախտագէտ ըլլան, տակաւին չեն կրնար իրենց եղած շնորհքին փոխարէնն ընել : Կանանց ամուսնական արժանեաց երաշխաւորութիւնը քրիստոնէական վարդապետութեան մէջ է :

Տէրն մեր նոր օրինաց մէջ մեծ խորհուրդ մը շինեց ամուսնութիւնը . խորհուրդս այս մէջ է . և անոր զարմանալի և սուրբ հիմը հին և նոր օրինաց ծրագրոյն վրայ հաստատեց . Բայց ես ասեմ 'ի ֆրէստոս և յեկեղեցի . և ո՛չ միայն իւր առաջին և զլիսաւոր խարխիններուն, այսինքն, միութեան, սրբութեան և անլուծութեան վրայ հիմնեց զայն, այլ և խորհրդոց կարգը դասելով՝ աստուածային շնորհք և կատարելութիւն ալ պարզեց :

Ստուգիւ հին և նոր օրինաց մէջ՝ ամուսնութիւնը նկատուած է իբրև ուղղակի Աստուծոյ և նորա պաշտօնեայներէն հաստատեալ դաշինք մը սուրբ Գրոց մէջ : Նոյն ինքն արարիչն երկրաւոր դրախտին մէջ ամուսնութեան սուրբ հիմնարկութիւնն ըրաւ դրական օրէնքով, ըստ այնմ, թողցէ այր զնոր էւր և զնոր էւր և երկեցէ զնոր կնոջ էւրոյ և եղեցին երկուսն 'ի մարմն մի : Բնաւ արձակումն, բնաւ բաղմակնութիւն չիկայ : Քրիստոսի հետեւեալ խօսքերը կ'ապացուցանեն թէ ամուսնութիւնն աստուածային հիմնարկութիւն է, Զոր Աստուծոյ զուգեաց մարդ մ' զնորեացէ : Մովսէս՝ որ հին օրինաց մէջ ամուսնութեան օրինադիրքը կնքեց, Աստուծոյ առաքեալ էր և ոչ թէ հեթանոս օրէնադիր : Յիսուս Քրիստոս ալ աշխարհի իւր յայնամ ճաւաղքին եօթը խորհրդոց մէկն ըրաւ զայն : Սրբազան առաքեալն Պօղոս յայնի խօսքերով կը հաստատէ զայս . խորհուրդս այս մէջ է, Բայց ես ասեմ 'ի ֆրէստոս և յեկեղեցի . ցուցնելով թէ քրիստոնէական ամուսնութեան մէջի էական կէտը խորհրդոյ յատկութիւնն է : Իբրև նկատեմք թէ Յիսուս Քրիստոս

տոս նոր ձև մը տուաւ ամուսնութեան՝ անլուծանելի
 և անփոփոխ միութեամբ բաղկացեալ երկանձնեայ ըն-
 կերութեան վրայ կեդրոնացնելով զայն , և տեսնեմք թէ
 այս միութիւնն անոնց , յախտենականապէս եկեղեցւոյ
 հետ միանալու նշանն է , մէկէն կը համոզուիմք թէ հա-
 ւատացեղոց ամուսնութեան վրայ սուրբ Հոգւոյ շնորհքը
 կայ , և պիտի գովեմք աստուածային բարութիւնն՝
 որ հաճեցաւ մեր սերնդեան աղբիւրն այսպէս սրբա-
 ցընել :

Քրիստոնէական եկեղեցւոյ այս վճռոյն դէմ ո՛րչափ
 ամբարիշտ են այն մարդիկ՝ որ ամուսնութիւնը բոլոր-
 բովին երկրաւոր և սոսկ քաղաքական դաշնադրութեան
 մը պէս կը բռնեն , Ամուսնութեան սրբազան բնու-
 թիւնն ասոր դէմ կ'ուզայ : Մարդկային բնութիւնը
 Քրիստոսի տեսառն մերոյ հաստատած օրինաց հետե-
 ւանքներուն վրայ միայն նախատեսութիւն , կանոնաւոր-
 ութիւն եւ հաստատութիւն մը կրնայ տալ : Նոյն ինքն
 ամուսինք ալ չեն կրնար իւրեանց ամուսնութիւնն
 ուրիշ կերպով հաստատել ուղղափառ եկեղեցւոյ մէջ ,
 բայց եթէ առաջի՝ քահանային եւ եկեղեցւոյ սահմա-
 նած պայմաններովը : Յիսուսի Քրիստոսի խորհրդոց մա-
 տակարարն եկեղեցին է միայն , եւ ո՛վ կրնայ անոր ձեռ-
 քէն խլել խորհրդոց սուրբ արժանիքը պաշտպանելու
 մատակարարութեան գերագոյն իշխանութիւնը . Զ.Ե
 Աստուած գաղթեաց մարդ մի՛ մեկնեացէ :

Երիտասարդ ամուսինք երբ եկեղեցւոյ օրինօք կ'ա-
 մուսնանան՝ հոգինին կը սրբուի , կը մաքրուի , և ստու-
 ծոյ հետ կը բարեկամանան և երկնային ժառանգու-
 թեան կնիք կ'ընդունին . խորհրդոյն զորութեամբ Աս-
 տուծմէ յայտնի օգնութիւն կը գտնեն , միշտ զիրար
 փոփոխակի զգաստ և հաւատարիմ սիրով սիրելու , ա-
 մուսնական կենաց բոլոր նեղութիւններն և բռնները

քաջութեամբ կրելու և իրենց որդւոց բարի կրթու-
 թիւն և սուրբ դաստիարակութիւն մը տալու :

Խորհրդոյն այս շնորհքները յայտնապէս կը ցուցնեն
 ամուսնութեան կարևորութիւնը : Բայց , աւա՛ղ , անոր
 յարգը շատ ուշ կ'իմանան . մարդկային սրտին անհաս-
 տատութիւնն և ինք զինք պաշտպանելու մասին ան-
 զօրութիւնը տխուր վտորձառութեամբ կրնան իմանալ .
 այսինքն , այն ատեն՝ երբ ամուսնական սիրոյ բնական
 յօդակապը կը խզի և ինքնիրեն նուաղելու պէս առա-
 ջին օրուան բոցը կը շիջանի , այլ ևս անոնց կենաց
 վրայ պատած մթութիւնը փարատելու և կենաց ար-
 խուր հետեւանքներն և ցնորքները խափանելու անբա-
 ւական կ'ըլլայ :

Խորհրդոյն շնորհաց վրայ վստահ ըլլալու համար
 հարկաւոր է անկեղծ խոստովանութեամբ և քահանա-
 յին արձակմամբը խիղճը մաքրել , դիտաւորութիւնները
 պնդել , և նմանել երիտասարդ Տուբիսյին՝ որ կ'ա-
 ղօթէր առ Աստուած՝ ըսելով . “ Տէր իմ , դուն գիտես
 թէ ո՛չ թեթեւամտութեան և ո՛չ պոռնկութեան հա-
 մար կ'ուզեմ ինձ ամուսին ընել զայն՝ որ մինչեւ ցարդ-
 ինձի սիրելի քոյր մը համարուած էր . այլ զի միայն կը
 փափաքեմ տէր ըլլալ այնպիսի ընտանեաց՝ յորում՝ քու
 անունդ օրհնուի ” :

Օրիորդ խօսնայրն ալ անոր քով Աստուծոյ այս խօս-
 քերը պիտի ուղղէ . “ Գթա՛՛ ՚ի մեզ , Տէ՛ր , գթա՛՛ ՚ի մեզ
 երանի՛ թէ ես և այս եղբայրս մէկտեղ մինչեւ ՚ի վախ-
 ճան ազատ մնամք ՚ի չարէ ” :

Գ.

ՓՈՒԱՂԱՐՁ ՊԱՐՏԻՔ ԱՌՆ ԵՆ ԿՆՈՋ :

Արարիչն առաջին ամուսնութեան սուրբ ըլլալու սկզբունքն ու օրէնքն այր և կին Աստուծոյ նման ըստեղծուելուն մէջ դրած էր . Յիսուս Գրիստոս վրկիչն մեր ևս աւելի նոր վսեմութիւն մը տալու համար , ամուսնաց միութիւնն իրեն և եկեղեցւոյն մէջ եղած միութեան նմանեցոյց . Յիսուս Գրիստոս իւր եկեղեցւոյն վրայ սէր ու խանդաղատանք ունի , ինք զինք և իւր կեանքն իսկ անոր զոհեց . այս է նախատիպն այն սիրոյն՝ որով այրն իւր կինը պարտաւոր է սիրելու : Փոխադարձաբար , եկեղեցին Գրիստոսի հնազանդ է , կը պատուէ , հաւատարիմ է . այսպէս ալ կինն իւր էրկան հնազանդ , պատուադիր , հաւատարիմ և սիրող ըլլալու է : Գրիստոսնէական ամուսնութեան բոլոր պարտքերն այս նմանութեան մէջ են և վսեմութիւններն ասկէց յառաջ կուգան : Ս. առաքեալն Պօղոս՝ որ Տիբոլմէն սորվածը միայն կը քարոզէր , տեսէ՛ք թէ քրիստոսնէական ամուսնութեան ընութիւնն ի՞նչպէս կը բացատրէ : Առն և կնոջ փոխադարձ պարտքերն այսպէս կը թուէ , ասելով . Ա՛րք , սիրեցէ՛ գինացի յեր , որպէս և Գրիստոս սիրեաց զեկեղեցի :

Սէր . Այրը պէտք է որ սիրէ իւր կինը : Այր մարդ մը եթէ սրտին մէջ սիրոյ հուրն և հրապոյրը չզգար , նա ամուսնութեան համար ստեղծուած չէ , անոր կոչումն ուրիշ է : Որովհետև եթէ մարդ սէր , համբերութիւն , խոստովանեմ և արիւնքիւն չունենայ , անհնար է որ

ամուսնութեան այնչափ ծանրութեանց և փորձանայ դիմանայ : Եթէ երկու կողմանէ այս առաքինութիւնն ները չունենան , մանաւանդ թէ ընդ հակառակն նոյն և մի յանցանքներ դործեն , ի՞նչպէս բոլոր կենօք իրարու հետ բարեկամութեամբ պիտի ապրին , դիշեր և ցորեկ իրարմէ անբաժանելի ըլլալու պայմանին ի՞նչպէս պիտի դիմանան : Սիրեցէ՛ գինացի յեր , ըսած է առաքեալն . այր մարդն իւր կինը պարտաւոր է հաստատուն և հաւատարիմ սիրով սիրել առանց երկպառակութեան և իրարմէ զզուելու : Պէտք է որ անոր անձը սիրէ , և ոչ թէ բերած օժիտը , հարստութիւնը , ցեղական պատիւն և կնոջմէն դալիք օգուտն և շահը :

Գրիստոսնէական ամուսնութեան մէջ ո՛չ հաշիւ կը մտնէ և ո՛չ տուր և առ :

Այրը պէտք է որ իւր կնոջ վրայ այն բանը սիրէ՝ զոր Գրիստոս յանձին եկեղեցւոյ սիրեց , այսինքն է սրբութիւն , առաքինութիւն , սէր , հաւատարմութիւն և գերազանց անձնանուիրութիւն մինչև ՚ի մահ : Հարկաւ գեղեցկութիւնն ալ սիրելի է՝ երբոր առաքինութեան հետ ՚ի միասին պատահին կուսին վրայ , բայց գեղեցկութիւնն առաջին վնասուած բանը չէ :

Գեղեցկութիւնը ծաղիկ մ'է՛ որ շատ շուտ կը թարչամի և չըկրնար սաստկապէս դալիլ սրտի : Ո՛րչափ չքնադադիւտ ըլլայ ծաղիկը , ձեռքդ բռնելէն կը յոգնի , և քիթդ ալ հոտոտելէն կը ձանձրանայ : Ի՞նչ ըսեմ . գեղեցկութիւնը՝ զօրաւոր , բայց վաղանցուկ հրապոյր մ'է , սակայն վտանգաւոր է . և ամենադեղեցիկ ամուրք չեն՝ որ ամենէն երջանիկ ամուսինքն են :

Այրը մշտնջենաւորապէս պէտք է իւր կնոջ քաղցր և զօրաւոր առաքինութիւնները պատուէ և ակնածի անկէց աղոտագոյն սիրով : Աղոտական սիրոյ գեղեցիկ օրինակ է նոյն ինքն Յիսուս Գրիստոս , որ իւր եկեղեցւոյն

համար ամեն զոհողութիւն ըրաւ, ծանրատաղտուկ և ցաւալից կենաց ծանրութիւնները քաշեց, վարդապետութիւնը, օրինակը, խորհուրդը, արիւնը, մէկ խօսքով. իւր ամեն ունեցածը, այսինքն, երկինքն անոր շնորհեց :

Ո՛վ այր մարդիկ, ուրեմն ազնիւ և առատ սէր պարտական էք ձեր կանանց : Սէր մը՝ որ ամեն բանի վրայ պէտք է տարածուի : Առաքելալը ձեզ կը պատուիրէ՝ որ այնպիսի սկար և փափուկ արարած մը հողաք միշտ : Ս, յըր, կ'ըսէ, պէտք է որ իւր կնոջ կեանքը սնուցանէ և դարմանէ : Ո՛րչափ բան կը պարունակի այս քիչ մը խօսքերուն մէջ :

Բայց կի՞ն կը դարմանեն և կը սնուցանեն արդեօք այն ամուսինք՝ որք անձնասիրութեամբ կամ հպարտութեամբ անյարմար հողեր կը բեռցունեն իրենց կանանց, աշխատանքով դիշեր ցերէկ այր մարդկան յատուկ եղած աշխատութիւններու : Ո՛րչափ մանկամարդ կիներ իրենց էրկներուն անխոհեմութեանը զոհ գացած են, անխոհեմութիւն՝ որ չընելը շատ դիւրին էր, և վերջէն ալ իրենց կնոջ դադաղին վրայ արատաւք թափելու չէին պարտաւորուեր :

Ս, յը մարդոց հողերը պարտուց մէջ, սուրբ առաքելալն Պօղոս կինը կրօնքին մէջ հաւատարիմ պահելը առաջին պարտք կը սեպէ : Յիրաւի, էրկանը խելամբտութիւնը աւելի ընդարձակ, դործողութիւնները աւելի հզօր և դատողութիւնը աւելի հաստատուն ըլլալով, իրեն յատուկ պարտքն է իւր լծակիցը, ըստ բանի Առաքելոյն, կենաց խօսքով սնուցանելը, իրեն յատուկ պարտքն է կրօնական հրահանգներ տալը, հաստաքը զօրացնելը և իւր ամուսնոյն բարեպաշտութիւնը եռանդուն պահելը : Առաքելալն Պօղոս իւր պատուէրը աւելի կը պարզէ՝ այրը մօր նմանցնելով, և անկէ՛ ՚ի հողերը մասին մայրական խնամք պահանջելով

կնոջն համար : Ս, յըր, մօր նման, իւր լծակցին հողերը սնունդը պէտք է որ ջամբէ : Ինչպէս մայրը իւր ծոցը առնելով կը ջեռուցանէ զաւակը, նոյնպէս ալ այրը պէտք է որ բարեպաշտութիւնը ջերաջերմ՝ տպաւորէ իւր կնոջ վրայ, պէտք է որ սիրէ և նախանձաւոր խնամքով հողին մշակէ : Ս, յս սիրելի հողին բաւական չէ գեղեցիկ ըլլալը, այլ պէտք է նաև, որ ըստ բանի Առաքելոյն՝ անարատ, սուրբ և վեհանձն ըլլայ : 2

Քրիստոնէական ամուսնութեան այս վսեմութիւնները ներկայ ժամանակի ամուսնութեանցը հետ համեմատեմք անդամ մը : Ո՛հ, ո՛րչափ անհուն տարբերութիւն, որուն վրայ աչք կը շլանայ նայելով և սիրտ կը խառնուի : Շատ հին ատենէ ՚ի վեր է՝ որ այրը իւր կնոջ կրօնական հրահանգին և հողերը դատարակութեան բնաւ պարտական չէ : ոչ միայն բարեպաշտութեան օրինակ չէ իւր կնոջ, այդ ընդ հակառակն դայթակղութիւն ալ է :

Դպրոցներու մէջ բարոյականի անուշադրութիւնը, կրօնական դատարակութեան բոլորովին բարձի թողի ըլլալը և օր ըստ օրէ թուրհաւատններուն եկեղեցւոյ մէջ շատնալն և ասոր նման անլուր աղէտներ՝ պատճառեղած են՝ որ այրը փոխանակ յառաքինութիւն յորդորելու իւր կինը, ինքն անոր համեստադոյն, պարկեշտ և ջերմեռանդ հաւատքին վրայ կը զարմանայ : Իւրերն այսպէս փոխուած են : հիմա այրը չէ՝ որ պարտուց զգացումն կը շնչէ իր կնոջ և հաւատոց մէջ կը կրթէ, ընդհակառակն կինը հարկադրուած է էրկանը առաջնորդ լինել դէպ ՚ի հաւատոս : Եթէ յաջողին, շատ բան :

Ս. առաքելալն Պօղոս էրկանը պարտաւորութիւնները ցուցնելէն ետքը, երբոր կնոջ կարգին կուգայ, այնպէս կը խօսի որ՝ մարդ կը յուզուի և կը շփոթի : Առա-

քեալը երկան կը պատուիրէ որ իւր կնոջ հողեւոր և մարմնաւոր խնամք տանի, փոխարէն սէր չը պահանջէր կնոջմէն, և բնաւ չը յիշէր թէ ի՞նչ բարք և վարք ունենալու է կին մը, այլ երկան հնազանդութիւն կը պահանջէ ըսելով. « կանայ, հնազանդ վերոտ արանց յերոց » :

Միթէ կինը պարտաւոր չէ՞ փոխադարձ սիրոյ, միթէ անպատշա՞ճ էր կնոջ վրայ ալ սիրոյ պատուէրը դրնելը. — անշուշտ ո՛չ. այլ զի կինը բնութեամբ աւելի զգայուն ըլլալով՝ սիրով իւր երկանը պիտի կապուի, ինչպէս բաղեղն իրեն զրկած ծառին կը փաստուի :

Բայց ինձի աւելի հաւանական է՝ թէ սէրը լուսլայն կ'իմացուի Առաքելոյն պատուէրին մէջ. սրովհետեւ առաքելաբար չէղոք, բռնաբարեալ, ծառայական և քրիստոնէի անվայել հնազանդութիւն մը չէր կրնար պահանջել, այլ սիրալիր, ազնուական և անձնանուէր հնազանդութիւն : Միայն հնազանդութեան վրայ խօսելուն պատճառն այն է՝ որ կնոջ պարտուց սկզբնական և ետևան կէտը հնազանդութիւն է, և ասկէ իւր բոլոր պարտքերը կախեալ են, ծառը իւր բունէն բրնուելուն նման :

Կնոջ համար առաջին և գլխաւոր պարտք է հնազանդութիւնը, որմէ իբրև ՚ի բնոյ կախուած են միւս բոլոր պարտքերն ալ : Հնազանդ կինը՝ սիրող, հաւատարիմ և աշխատաւոր կ'ըլլայ, և սուրբ Գրոց Կն Վ. յէլ. 2, 5-րդ Գրքից 1-ը տիտղոսները կ'ունենայ :

Սովորաբար, մանաւանդ մեր օրերը, զարմանալի կը թուի ամենուն՝ Առաքելոյն այս պահանջած բացարձակ հնազանդութիւնը, ըստ այնմ թէ որդեւ եկեղեցի հնազանդ վերոտ արանց արանց յատեայնի = Որովհետեւ ատեն մեր գէշ, անիրաւ և յիմար հրատմաններ չըտար իւր ամուսնոյն կամ եկեղեցւոյն, անոր համար փոխարէն բացարձակ հնազանդութիւն կը պահանջ

Ջէ : Բայց այր մարդիկ իրենց կամքին երաշխաւոր չունին. կրնան անիրաւ, անչափ և բռնաւորական հրամաններ տալ իրենց կնիկներուն. ուրեմն ի՞նչ իրաւամբութերի և ապօրինաւոր հրամանի մը պիտի հնազանդի կինը :

Բայց չըմոռնանք ըսել նախ և յառաջ՝ որ Առաքելաբար այն բացարձակ հնազանդութիւնը՝ զոր Աստուծոյ միայն պարտական ենք՝ չըպահանջէր կնիկներէն, այլ օրինաւոր հնազանդութիւնը, յիթէ այրը կը հրամայէ մեզք գործել, զոր Աստուած կ'արգելու, պարտական է Աստուծոյ հնազանդիլ և ոչ թէ մարդկան :

Ասկէ զատ, մարդկային օրէնքները, իտեքն և ամուսնութեան հանդամանքներն ալ երկան բացարձակ իշխանութեան դէմ կ'ելլեն :

Կինն ալ իրեն իրաւունքներն ունի. պէտք է ամուսնութենէ առաջ պահանջէ՝ որ փեսայն իւր գեղեցիկ խոստումները հաստատուն պայմաններով հաստատէ. օրովհետև օրիորդները գիտեն, կամ եթէ չեն գիտեր, պէտք է գիտնան՝ որ ամուսնութենէ առաջ եղած շատ մը խոստումներ պահուածեալ և խաբէական բաներ են : Թո՛ղ այն շատ մը աւելորդ կեղծաւորութիւնները և հաճոյանալու համար այնչափ չափազանց սիրահարութիւնը՝ որ աղջկան բերնէն « յ » մը կամ հաւանութիւն մը կորզելու համար են : Եթէ այն առաջին խոստումներէն, զիջումներէն և ոխտեալ ծայրայեղ սէրէն բան մ'ալ չըմնայ, միայն այս չափը պիտի մնայ թէ փեսայն իրեն գերի չը գնեց, այլ ընկեր մ'առաւ, որուն հետ իբրև ընկերոջ հետ պիտի վարուի առանց բռնութեան առանց բարկութեան և աւելի սիրով քան թէ երկիւղով : Պատշաճապէս ուրեմն սուրբ առաքելաբար չափաւորեց էրիկներուն իշխանութիւնը ըսելով թէ, « 1, 4 » րաւանցանէս և կանայ յեր :

Այրը իրաւունք չունի այնպիսի հրամաններ ընել

կնոջ՝ որ սովորաբար աղախնոյ կ'ըլլան, ինք իւր կնոջ վրայ իշխանութիւն ունի, այս՝ բայց կինն ալ իւր հաւասարն է, կինը ո՛չ իշխան է և ո՛չ աղախին, այլ ամուսնական ընկերութեան անդամը. այր և կին պարտօք և աստիճանաւ հաւասար են և փոխադարձ պարտաւոր են պատուել զիրար: Սուրբ առաքեալն Պետրոս կանանց համար կ'ըսէ՝ թէ այր մարդոց ժառանգակից են, որով կը պատուիրէ, ուրեմն, որ արք մեծարեն իրենց կանայքը՝ իբրև ամեն բանի մէջ իրենց բաղդին և փառայը հաղորդ և ժառանգակից: Ամուսնութիւնը այն ատեն ներդաշնակաւոր կ'ըլլայ՝ երբ ամուսնացեալներն իրենց փոխադարձ պարտաւորութիւնները կը գիտնան. այն ատեն այրը չըկրնար և իրաւունք ալ չունի որ հրամայէ կնոջն առանց իւր հրամանները վայելուչ քաղաքավարութեամբ և իմաստութեամբ բարեխառնելու և չափաւորելու:

Պետրոսի և Պօղոսի հրամանները նոյն և մի են ՚ի պատիւ քրիստոնէից ամուսնութեան տրուած հոգեշունչ խրատուց մէջ, զի Պօղոս որ կ'ըսէ հնազանդ լեռո՛ւ, կը յաւելու նաև սա պայմանն ալ, որդե՛ս լեռել է ՚ի տէր, և ս կը յաւելու. «էրեցէ՛ գիւնայ՝ յեր, և մի դառնացացուէ՛ գնոս»:

Այս սեղմումներն ըլլալով հանդերձ, կանանց հնազանդութիւնը պէտք է կատարեալ ըլլայ և տարածուի ամեն բանի վրայ. Առաքելոյն պատուէրը նմանութեամբ է. «կանայք պէտք է հնազանդ լինին իրենց երիկներուն, ինչպէս եկեղեցին հնազանդ է Բրիտոսի»:

Այրը իւր հրամայելու իշխանութեամբը կրնայ զեղծանիլ, և Առաքելայը շատ աղէկ գիտէր այս բանս:

Բայց ո՞ր մարդկային օրինաց մէջ սխալ չըկայ, և ո՞վ կրնայ առն և կնոջ դատաստանը կտրել, եթէ ոչ եկեղեցին՝ որ միայն գերազոյն և անսխալ դատաւորն է: Սխալելու ենթակայ իշխանութիւնները, թէ և օ

րինաւոր ալ ըլլան՝ կինը երկանը հնազանդ չեն կրնար ընել. այսպէս են աշխարհի իշխանութիւնները: Ո՛ր և է ընկերութեան իշխանութիւնը պէտք է որ արթուն ըլլայ, մօտէն քննէ հրամայելու մէջ կասկածոտ և վարանեալ չըլլայ. եթէ այսպէս է աշխարհի առհասարակ իշխանութիւնը, ապա ո՞րչափ ամուսնական և ընտանեկան իշխանութիւնը:

Կինը կրնայ՝ և պարտաւոր է իւր այրը խրատելու, պէտք է որ դատէ անոր այս ինչ գործը կամ իրաւունքը իւր գիտցածին և հասկցածին պէս: Պէտք է որ խորհուրդ տայ, դատէ, աղաչէ, սիրոյ հնարքը ձեռք առնու, և մինչև իսկ իւր երկան համար ուխտ և աղօթքներ ալ ընէ: Կերպ մը վարչութիւն է ընտանիքը՝ յորում այր և կին փոփոխակի իրարու խորհուրդ կ'ուտան և զիրար կը դիտեն: Բայց երբ կինը իւր փափաքները, պատճառը, իրաւունքն և աղաչանքը մէջ կը բերէ, էրիկն է այնուհետև իրաւընտիր, և կինն ալ ելքն անստոյգ բայց պատշաճաւոր բաներու մէջ հնազանդել պարտական էրկան: Համողւած ըլլալով որ եթէ այրը կը խարուի այս ինչ բանին մէջ, պէտք հաւանի, իւր դատողութիւնն ալ կրնայ սխալ ըլլալ: Կինը իրեն գէշ երևցած հրաման մը ՚ի գործ դնելով՝ պիտի նմանի այնպիսի զինուորի մը՝ որ իւր զօրապետին չըբացատրուած հրամանացն ալ կը հնազանդի: Եւ հրամանը թէ և անպատեհ ըլլայ՝ պէտք է իւր իմաստուն գործ օնէութեամբը ՚ի բարին փոխէ:

Ամուսնական իշխանութիւնը պէտք չէ որ երկպառակի, տկարանայ և յետոյ ինքնիրեն կործանի, ինչպէս որ Տէրն ըսաւ. Ամնայն դաս բաժանեալ յանչն իւր կործանի: Երկանակիս մղութիւնն այս է հիմա, որով տուն մը չըկայ խաղաղ, տնական մանիքականութիւն մը, այս է երկաստուածեանութիւն մը տիրած է, որովայր և կին ի

5854-57



բարու մէջ պառակտեալ են , աշխարհի տնտեսութեան
 մէջ երկու ներհակ աստուածներ թագաւորելու պէս :
 Այս սկզբունքը սուրբ Գրոց հակառակ է ըստ այնմ թէ՛
 “ Այր է գլուխն հոգիս և Բնութիւնն գլուխն է եկեղեցւոյ ” :

Այրը եթէ այս սուրբ պատուիրաններուն վրայ խո-
 կայ և հասկնայ, չը պիտի զեղծանի իւր իշխանութեամբը,
 իշխանութիւն մը՝ որ չըկրնար մտահաճոյ ըլլալ : Ըստ
 առաքելոյն , այրը իւր կնոջ համար այն է՝ ինչ որ
 է գլուխը մարմնոյն համար , որ խմայականութեան կե-
 դրոնն է , այնպէս՝ ինչպէս որ է Քրիստոս իւր յաւիտենա-
 կան իմաստութեամբն եկեղեցւոյն համար, որ միշտ ՚ի խա-
 զաղութիւն և յարդարութիւն կը տանի իւր եկեղեցին :
 Ամուսնութեան մէջ բռնի բան չըլլար , զի Քրիստոսի
 լուծը թեթեւ և քաղցր է ըստ այնմ “ Լուծի՛ք իմացը է և
 թեան իմ քրոջից ” :



Ո Ր Դ Ի Ք

Ա.

Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Ն Պ Ա Տ Ա Կ Ն Ե Ր Ը

Ամուսնութեան պատիւն ու բարձրութիւնը յայնմ
 է՝ որ մարդս Աստուծոյ հայրութեան կերպարանակից
 կ'ընէ , զի Աստուած է սկիզբն անսպառ կենաց , արա-
 ըիչ ընտանեաց և տէրութեանց , յաւիտենական սկիզբն
 և վախճան ամենայն էութեանց :

Աստուած է իսկապէս հայր : Աստուած կ'ուզէ որ
 ամենքս ալ մեր կոչմանը համեմատ , իւր հայրութեան
 դորձը կատարենք աշխարհի վրայ . քահանայն հոգևոր
 կեանք կ'ուտայ մարդոց , կրօնաւորը բանիւ և գոր-
 ծով հոգևոր կեանք կը բաշխէ , ամուրի աշխարհականը
 եկեղեցւոյն և իւր ընտանեաց ծառայելով մէկ կողմանէ
 ընտանեկան կեանքը կը դարմանէ , և միւս կողմանէ իւր
 ազատութեամբն իւր յատուկ հոգևորական կեանքը
 կ'աճեցունէ . վերջապէս ամուսնացողներն ալ, յետ Աս-
 տուծոյ , մարմնական կենաց հեղինակ , հոգևոր կենաց
 ալ նուիրական գործակիցներ կ'ըլլան :

Ամուսնութեան առաջին նպատակը ծննդաբերու-
 թիւնն է . եկեղեցւոյ որդիք և երկնքի սուրբերը կը
 բազմանան : Այս նպատակը , որուն քրիստոնեայ ամու-
 սինք ամեն բանէ առաջ պարտական են ՚ի միասին , եր-
 կրորդական նպատակներ ալ կը պարունակէ , որ է աշ-

խատութեան տարիներուն քովը ընկեր մ'ունենալուն փափաքը, որուն մէջ չափով արդար փառասիրութիւն կայ, ծերութեան ատենն ալ օգնական և մխիթարիչ մ'ունենալ: Վերջապէս, ամուսնութիւնը մեր բնական կրից օրինակոր առարկայն ըլլալով, չար յօժարութեանց դէմ ալ զօրաւոր դարման մ'է:

Ինչպէս Ս. առաքեալն Պօղոս, նոյնպէս և մենք կը մեծարենք կատարեալ ժուժկալութիւնը, որ է կուսութիւնը, բայց այն պայմանաւ՝ որ քրիստոնէական ընկերսիրութեան և առաքինութեան կողմանէ արդիւնական ըլլայ, և Աստուծոյ փառքն և արքայութիւնը տարածելու համար գործածուի: Սակայն և այնպէս խիստ մեծ բացառութիւն մ'է կուսութիւնը, և ընդհանուր օրէնքին ապացոյց է կուսութեան վիճակը, որ մարմնազդեւատ և երկրաբնակ հրեշտակի մը պատկերը կը ներկայացնէ աշխարհի վրայ, բարոյական բարձրութեամբը զմայրելի է: Բայց երկնային պաշտօն վարող մարդոց վերապահեալ կոչումն է: Ամուրիութիւնը, երբ բնական արգելքով մը չէ, այլ ազատութեամբ կամաց, յոյժ գերազանց կոչումն կամ վիճակ կրնայ սեպուիլ: Բայց պէտք է որ այս կոչումը խղճմտութեամբ և երկար ազօթիւք քննէ մարդ իւր վրայ, և շատ մը փորձերէ ետքը հաւանի:

Բ.

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԿԱՄԱԽՈՐ ԿԱՄ ՄԵՂԱՊԱՐՏ
ԱՄԼՈՒԹԻՒՆ

Քրիստոնէաց, կանոնաւոր և երջանիկ ընկերութեան

մէջ ամուսինք՝ իրենց կոչումը կը ճանչնան, և հաւատարիմ են անոր. այսպիսի ընտանիքներ բազմօրդի կ'ըլլան սովորաբար: Հայրը պատիւ կը սեպէ իրեն շատ մը զաւակներ ունենալն իւր բոլորտիքը, կաղնի ծառոյն իւր բաղում ոստոց վրայ հպարտանալուն պէս:

Այն ժողովրդոց մէջ յորս կրօնի հաւատալիքները թեթեցած են, մալի և մեղի անձնասիրութիւնը աճելով ամուսնութիւնները քիչ և հետեւապէս զաւակները քիչ կ'ըլլան: Ազգի մը կործանման ախտանշանն է ամուսնութեան նուազութիւնը, ինչպէս Հռովմայեցւոյ անկման ժամանակներուն վրայ դրող պատմիչներ կը պատմեն: Ապականութիւնը արմատացած ըլլալով իմաստուն թաղաւորներ որչափ ջանք ըրին, չըկրցան ամուսնութիւնը կանոնաւորել և ազգը բեղմնաւորել. զի այս ախտը կերպ մը ատուածաուաք պատիժ դարձած էր, ամուսնութեան սուրբ օրինաց դէմ գործելուն համար: Նոյն և մի չարիքը կը տեսնուի արդի քաղաքակրթեալ կոչուած ազգաց և ժողովրդեան մէջ, որոնցմէ մեր ազգըն ալ դժբաղդաբար կ'երևի՝ թէ այս ախտով հիւանդացած է, որուն համար է այնչափ ամուսնական անկարգութիւններն, որ 'ի նախատինս կրօնից ամեն անգամ լրագրաց մէջ կը տեսնուի:

Շատ երջանիկ ենք ընդ հզօր հովանեաւ մեր կայսեր, որ մեծաւ խնամով կը պահէ զվեղ, և չի վարէր այնպիսի պատերազմաց մէջ յորս անհամար երիտասարդաց արիւններ կը թափին, հետագայ սերունդներ կ'ոչնչանան, կին և զաւակ անհայր մնալով տառապանօք կը մեռնին: Պատերազմի սոսաւ հազարն արհաւիրաց չէ տուած զվեղ, այլ մանաւանդ ազատ յամենայն կոտորածէ կը պաշտպանէ, իբրև թէ հոտ մը ըլլայինք ոչխարաց՝ որուն հովիւն ինք է, իսկ տէրը Աստուած: Աստուծմէ և թաղաւորէ սոսաւ պաշտպանեալ վիճակի

մէջ ինչ անտանելի ամօթ է մեզի ամուսնութեան մէջ
զեղծանիլ, անդաւակիլ:

Սրբաբն Սատուած երբ մարդն ստեղծեց, ո՛չ մի-
այն մեր նախածնողաց, այլ նաև անոնց յետագայ սերն-
դեան ալ այս վճռական հրամանն ըրաւ. « անեցէ՛ւ և բազ-
մացա՛ր »: Ասկէ աւելի յայտնի և պարզ հրաման կրնայ
ըլլալ: Սուրբ գրոց այս համառօտ՝ միանդամայն և բզ-
մայելի խօսքին՝ եթէ ստուգութիւն վնասուել պէտք
ըլլայ, բնութեան օրէնքը յայտնի կը վկայէ. Սատուած
սոյն օրէնքը իւր ընդհանուր արարչագործութեան խո-
րին օրէնքն ըրած է, և արարածոց անհամար տեսակ-
ներուն ամենուն վրայ տիրացուցած է:

Անեցէ՛ւ և բազմացա՛ր՝ աստուածային հրամանը մեր
ներսը եղած խոր և բռնադատ բնազդումն է, նշանա-
ւոր բոցն է անշիջանելի հրոյն, որ ՚ի մեզ. բայց, աւա՛ղ,
փոխանակ սուրբ պահելու զայն, խիստ շատ անգամ՝ կը
պղծեմք, որուն անունը սէր է:

Աղատութիւնն իսկ, զոր Սատուած տուած է մեզ նոյն
խակ բարոյական օրինաց առջև, որպէս զի մարդուն հնա-
զանգութիւնը չբռնաբարուի, և դերի չըլլայ, աղա-
տութիւնը, որ կայ ու կը կենայ, մանաւանդ երբ Աս-
տուծոյ շնորհքը անոր օգնութեան առնենք, մինչև իսկ
աղատութիւնը կրսեմ՝ ամուսնութեան այս հարկին առ-
ջև շատ սեղմուած է:

Համառօտելով խօսինք. ո՛չ ապաքէն անեցէ՛ւ և բազ-
մացա՛ր՝ աստուածային հրամանը զօրաւոր ընելու հա-
մար է՝ որ Սատուած կանանց գեղեցկութիւն և հրա-
պուրիչ զօրութիւն մը տուած է. Աւա՛ղ, սկզբնական
մեզքը պատճառ եղած է կնոջ անմեղ հրապոյրքները
՚ի չարն փոխելու:

Կինը հիմայ ալ կը տիրէ երկան, և այս տէրութենէ
բան մը չէ կորսուած. բայց անոր առաջին գեղեցկու-

թեան կնիքը անյայտ եղած է, և ասոր համար « անեցէ՛ւ և
բազմացա՛ր » օրէնքին յարդը բնաւ չէ մնացած:

Խօսքս, ինչպէս յայտնի կը տեսնուի, առանց ժուժ-
կալութեան և մտի կամօք եղած ամբլութեան վրայ է.
Ամուսնացեալք, ըստ բանի Առաքելոյն երկուստէք հա-
ւանութեամբ կրնան առ ժամանակ մի դադարիլ յա-
մուսնութենէ, բայց մոռնալու չեն Առաքելոյն հետև-
եալ խօսքը՝ որ կ'ըսէ. « Ինչո՞ւն դուք յիմ »:

Ամուսնութեան մէջի աղատ ժուժկալութիւնը բնա-
արդարանայի չէ՝ երբ պատճառն անձնդիւրութիւնն և
ուրիշ անտախնդատակներ են: Ի սէր Սատուծոյ և ՚ի սէր
հոգևոր կատարելութեան եղած դադարմունքէ՝ ՚ի զատ
ուրիշ ինչ պատճառաւ որ ամուսնացեալք ժուժկալեն,
մեծ մեղք են. բացարձակ ժուժկալութիւնը մեծամեծ
վտանգներ կը բերէ ամուսնացելոց մէկուն կամ մէկալին,
և շատ անգամ՝ երկուքին համար ալ միանդամայն:
Սուրբն Պօղոս չը հրամայելէ զատ կ'արգելու ալ այս
բանը:

Երկու բան կայ որ խիստ ատելի է. մէկ մը առանց
սիրոյ ամուսնութիւնը, մէկ մ'ալ յատուկ դիտմամբ և
կամաւ ամբլութիւն կամ անպտղութիւն պահելու համար
եղած ամուսնութիւնը:

Գ.

Թի՛ Ո՛ՐԶԱՓ ՉԱՐԱԳՈՅՆ Է ԴԻՏՄԱՄԵ ԱՄԼՈՒԹԻԻՆՆԸ՛

« Անեցէ՛ւ և բազմացա՛ր » աստուածային օրինաց զանցա-
ռութեան ազէտալի հետևանքները՝ որ ազդի մ' ընդհա-
նուր սերնդեան կրմնասէին, բացատրեցինք: Հիմայ ցցնել

հարկ է նաև աղէտալի հետեւանքներն ալ՝ որ'ի մասնաւորի ընտանեաց վրասակար են , որուն թէ՛ կարգաւորութիւնը կը խանդարէ՝ և թէ՛ անտեսութիւնը : Խօսքս ա՛ռ հասարակ ազգի մը կամ մասնաւորապէս ընտանիքի մը մէջ որջացած գիտմամբ ամբողջութեան պահելու արտին վրայ է : Կամուսնանան , բայց շատ զաւակներ ունենալէ կը վախնան , հստարութեամբ և մեղկութեամբ անձնդիրութեան հաշիւներ կ'ընեն , որպէս թէ իրենց ծնած զաւակին աստուածը իրենք են , և թռչնոց ձագերը հոգացող վերին Նախահինամութիւնը իրենցմէ յառաջ եկած այս պատուական արարածներուն վրայ հոգ չունի : Բայց ո՛րչափ անգամ պատահեր է՝ որ իրենց նըկատումները սուտ ելեր են , և մարդկային իմաստութիւնը քանի՛ անգամ աստուածային իմաստութենէն հարածուեր է :

Նախ և յառաջ՝ եթէ մէկ զաւակ ըլլայ տան մէջ որոյ դաստիարակութիւնը իբր թէ աւելի դիւրին կ'ընելի քան թէ շատուոր զաւակներունը , ծնողական սէրը զաւակին դաստիարակութիւնը պիտի ապականէ կարգէ գուրս յորդելով և ծայրայեղութեան դիմելով , որովհետև սէրը շատի համար ըլլալով՝ բնականաբար մէկի վրայ չըկրնար առանց վրասի ամբողջութիւն : Ո՛ր ընտանեաց մէջ որ մէկ է զաւակը , ծնողք իրենց ամուսնական միութեան այն բարակ նրբաթելը չէ՛ թէ կը սիրեն , այլ կուռքի պէս կը պաշտեն : Տղայն որ այսպէս պաշտուելով և շիանալով կը մեծնայ , ո՛չ խնայող կ'ըլլայ և ո՛չ աշխատասէր , որք դաստիարակութեան առաջին պայմաններն են : Տղայն միշտ վարկ մ'ունի թէ ծնողք չեն համարձակիր զինքը կշտամբել , ոչ ալ իրեն հրամայել , ծնողաց գոռանքը , քաղցր խօսքերը , գոհութեան ցոյցերը և պաշտելները , որ իրեն կ'ըլլան , իրմէն բոլորովին կը վերցունեն ընտանեկան համակրութիւնը :

Տան կուռք մը կամ թերափ մը կը դարձունեն զայն ծրնողք , ուստի ինքն ալ դեր 'ի վերոյ իրաւունքներ պիտի պահանջէ իրենցմէ : Այս ընտանի ձեռակերտ աստուածը պիտի պահանջէ որ ամեն բան , մինչև անգամ ծնողաց իշխանութիւնն և արժանիքը իրեն զոհ մատուցուի :

Ի՛նչ պիտի ըլլայ արդեօք՝ երբ այս աստուածացեալ զաւակը երիտասարդ լինի . առաջուան տղայական աննահանջելի հաճոյքներուն տեղ աւելի ծանր և վտանգաւոր պահանջմունքներ պիտի չընէ՞ :

Թերևս պիտի ուզեն այն ատեն ծնողք՝ որ արդէն կորուսած ազդեցութիւնն ին նորէն ձեռք անցունեն , բայց ժամանակը անցած պիտի ըլլայ : Պիտի ստիպուին այն ատեն խեղճ ծնողք ամեն բանի զիջանիլ և ամեն բան յանձն առնուր Գուցէ նոյն իսկ իրենց տանը մէջ չարաչար պիտի նեղուին և տառապին իրենց սիրելի զաւակին ձեռքէն , իրենց ձեռքովը շինած ահագին լծոյն ծանրութիւնը պիտի տանին , և ուրիշ բան չըպիտի կարենան ընել՝ բայց եթէ իրենց ամօթը արտասուօք քաւել : Սակայն ո՛չ յանցանքը դարմանելի է և ո՛չ քաւութիւնը օգտակար :

Դ.

ՄԱՆ ՄԻԱՄՈՐ ՈՐԳԻՈՅ

Գիտեմ որ մինչև հիմա խօսած պայմաններովս ամուսնացող բարի ընտանիքներու շատ չը պատահիր այս տըխուր և սրտատոչոր պատկերը Աստուծոյ ողորմութեամբ . բայց անոր խոշոր գծերը խիստ շատ անգամ կ'երևին

Տնողաց մէջ : Այն ընտանիքները՝ որ իրենց ձեռօք գործած բաներուն տրամաբանական հետեւանքներէն ազատեր են , թո՛ղ բիւր վառք տան Աստուծոյ , որ ուրիշներուն վրայ իբրև պատիժ տուած դառն տրտմութիւնք իրենց խնայեր է , բայց չափազանցութիւն ընելու չեն :

Ենողք մէկ կամ երկու զաւակ կունենան , որոց վրայ դրած կ'ըլլան իրենց բոլոր յոյան և ակնկալութիւնները : Աստուած երկար օրեր պարգևէ անոնց և ծնողք ուրախութեամբ վայելեն : Զաւակները գեղեցիկ են , օր մը հարուստ պիտի ըլլան . ան ո՛րչափ խնամքներ վայելեցին , բայց մա՞հը . մահը որո՞ւ խնայեր է . Աստուած՝ որուն պատուիրանաց անխոյժ ըլլալուդ համար արդար անաչառութեան ենթակայ եղար , տարօրինակ սիրով սրբած զաւակիդ վրայ միթէ չըկրնար մահ զրկել , յանկարծ կայծակ պայթելու պէս :

Շատ զաւակաց տէր եղող ծնողաց կրնայ ըլլալ որ մէկ երկուքը մեռնին . բայց որչափ այս մահը սգալի ըլլայ , միւս զաւակաց վրայ նայելով՝ յոյս կ'ընեն՝ թէ ասոնք պիտի կրնան իւրեանց պատուոյն և ստացուածոց ժառանգորդ ըլլալ , և կը մխիթարուին : Անձնդիւր ծընողք և բազմազաւակ ընտանիք հոգալէ խուսափող վատ ամուսինք ո՛րչափ չարաչար քաւեցին իրենց մեղքը , որովհետև մահը մէկ հարուածով գետին զարկաւ իրենց մէկ հատիկ յոյսը , որուն վրայ իրենց կոյր և մայրկան սէրը հաստատեր էին :

Ե.

ԲԱԶՄՈՐԴԻ ԸՆՏԱՆԵԱՅ ԵՐԿԻԻՂԸ՛

Կը խոստովանիմ՝ որ բազմորդի ընտանիքը ծանրը բեռն է . դոյզն եկամտով մ'ապրող ընտանիքին , ծառայ եղող կամ ցած պաշտօն վարող ընտանիքին մանաւանդ աւելի ծանր է երբ դրամներն ելնեն իջնեն , եկամտին հաւասարակշռութիւնը կորսուի , վիճակ կամ պաշտօն և հետեւապէս ասպրուստի միջոց փոխելու հարկադրուին : Թո՛ղ մէկդի ժամանակի սովորութիւններէն յառաջ եկած և բնական դարձած զեղխութիւններն՝ որ աւելի նեղութեան պատճառ են :

Կարելի՞ բան է անխոհմտութեամբ և առանց մտածելու թողուլ որ զաւակները շտանան , մարդ մ'ընկերութեան մէջ ինչ աստիճան որ ունի , անոր նայելու չէ :

Այսպէս կը մտածեն շատ մ'ընտանիքներ՝ Աստուծոյ օրէնքը հաւատարմութեամբ չը պահենին արդարացնելու համար : Բայց ահա անոնց պատասխանը : Թո՛ղ որ աստուածային հրամանին հնազանդելու համար ամեն նեղութեան , աղքատութեան և մինչև իսկ մահուան յանձնառու ըլլալու են , կը հարցունեմ՝ կրնա՞ն խղճով ըսել թէ իրենց պատճառանքներուն խորն անձրնդիւրութիւն , ունայնամտութիւն և հեշտասիրութիւն չը կայ , Այդ անմիտները կը վախնան՝ որ եթէ զաւակին բազմանայ , իրենց աշխատութիւնը , նեղութիւնն և չարչարանքը պիտի աւելնայ . առանց մտածելու թէ ինչ է եղեր կունակին առած բեռը՝ թեթեւամտութեամբ ամուսնացել են : Տիրապէս աշխատութեան

կողումն ունեցող վիճակը հանդարտ և անուշ հանդրս-
տութեան փոխել կուզենու կուզեն որ իրենց որդին ամուս-
նացած ատենը իրենցմէ երկպատիկ կամ քառապատիկ
հարուստ ըլլայ: կուզեն՝ որ իրենց ժառանգորդն աշխա-
տութեան փրկարար պարտքէն ազատի, և ինչպէս կ'ը-
սեն, բնաւ մէկուն կարօտ ըլլալու վիճակ մը չունենայ:

Թո՛ղ ուրիշն ըսէ՝ թէ այս նպատակեալ հանգստեան,
բարեկեցութեան և ուրիշի կարօտ չըլլալու ջանքին
պատճառը ծնողական դորոջն է. ծնողական սէրն այս-
չափ կոյր ըլլալու է:

Ծնողքէն հարստութիւն չը գանելը՝ գանելէն աղէկ
է երիտասարդաց համար, որովհետեւ երբոր չունենան
հարկաւ պիտի աշխատին ունենալու, եթէ ունենան՝
հարկաւ ծոյլ և վատնիչ պիտի ըլլան: Անկարօտ հարս-
տութիւնը, կամ այն հարուստ վիճակը, յորում երի-
տասարդն իմաստուն մարդոց խնամակալութենէն, խը-
րատներէն և կարծիքներէն անկարօտ պիտի մեծնայ,
այսպէս մեծցած տղան ուրիշ բան չըլլար՝ այլ միայն
հաղուադիւս անառակ մը:

Անկարօտ և աւելի ճիշդը, անհաղորդական վիճակ
կամ հարստութիւն ունենալու համար ազարակ քաշո-
ւելու է: Այս ալ ընտանեկան միութիւն և քաղաքա-
ցութեան բարի ներդաշնակութիւնը կը տկարացունէ,
կրօնական և բարոյական իշխանութեան մեծարանքը կը
մուցունէ, քահանայ, իշխան, քաղաքական տեսչու-
թիւն և մինչև անգամ պետութիւն արհամարհելի կ'ը-
նէ, որով ընկերական կապին թուլանալուն զգայի կեր-
պով ճամբայ կը բացուի:

Այն ամուսինք՝ որ զաւակին շատցունել չուզելով՝
աշխատիլ, նեղուիլ և հոգալ չեն ուզեր՝ անոնց կ'ըսեմ:

Այն օրը՝ յորում զոհի համար պատրաստուած պա-
տարադրուի պէս ազատ կամօք ամուսնութեան դաշանց

ներքև մտաք առաջի սուրբ սեղանոյն, դատարկու-
թեան, ունայնասիրութեան և հպարտութեան և ուրիշ
նման վնասակար հաճոյքներէն հրաժարեցայք, ամեն
վշտաց և մայրական ու հայրական անհրաժեշտ հոգե-
րու յանձնառու եղաք, այնպիսի կեանք մը ստանձնե-
ցիք՝ որ որչափ բարոյապէս վսեմ է և առտըինական,
նոյնչափ ալ տարժանելի է և նեղացուցիչ:

Այս պայմանները ձեզի սոսկումն կը բերեն. բայց
առանց ամուսնութեան, մանաւանդ թէ սրիկայական և
անպիտան կեանքն իւր նեղութիւնները միթէ չունի՞:
Ամուսնացեալք, դուք այնպիսի նեղութեանց մէջ էք՝
որուն մէկ կողմը քրիստոնեայ հօր և մօր առաքինու-
թիւնները կան, և միւս կողմն ալ Աստուծոյ հրամանին
և երդման անհաւատարիմ եղողներուն թշուառութիւն-
ները: Արդիւնք չունեցող նեղութիւններուն տեղ ար-
դիւնք և բարի հետեւողութիւն ունեցող նեղութիւնն
է ձեր վիճակին նեղութիւնը: Մի՛ ցաւիք բնաւ: Աշ-
խարհի վրայ աղէկ՝ մանաւանդ իբրև քրիստոնեայ դա-
ղափար ունեցողը դիտէ թէ կեանքը վտրձութիւն մ'է
այս աշխարհիս մէջ: Աստուած Եւան մեղանչելէն յետոյ
լսաւ. « Բազմ-ցոյցանելով Բազմ-ցոյցից զորո՞մն-իւնս +» և զՆե-
ծ-մի-նս +» = Այո՛, որդեծնութեան նեղութիւնները,
արտամութիւններն և տաղնապները բազմացան. բայց
Աստուծոյ պատուիրան է այս, այս է վիճակնիդ, պէտք
է որ հնազանդութեամբ տանիք:

Իրեն զաւակացն ու բարի կնոջն համար ապրող բա-
րի հօր աշխատութիւններն ո՛րչափ պատուական են քան
այն մարդոցը՝ որ առանց ամուսնութեան կուռով և ան-
պատիւ կերպով և խարդախ ու խաբէբայ ջանքերով
կեանքերնին կը մաշեցունեն: Բարի և աշխատասէր ա-
մուսնացելոյն կինն ալ աշխարհային հրապուրանքներէ
խափանուելով՝ աշխատող կեանք մը կ'անցունէ. զինքը

սիրող զաւակաց մէջ չըջապատեալ ապրելով որդիքը հաստատուն պարկապ կ'ըլլան իւր առաքելութիւնը պահելու :

Կը վախնաք թէ ձեր որդւոց պիտոյից և դաստիարակութեան չէք կրնար բաւական լինիլ . բայց Յիսուս Քրիստոս ձեզի խոստացած է՝ թէ երկնաւոր հայրը , որ թուշուներուն ձագերը կը սնուցանէ , առատապէս կը հոգայ նաև ձեր ամեն պէտքերը : Ասոր նախախնամութեան վրայ դրէ՛ք յոյսերնիդ , որ բնաւ չը խաբէր , և աներկիւղ քաղցէք Աստուծոյ և բնութեան ձեզի ցցուցած ճամբան :

Ձեր քաղաքակիցները ձեր վրայ համարումն ունենալով և պատիւ տալով ձեզ՝ պիտի դիւրացնեն ձեր աշխատանքները , ձեր որդւոց առջև աշխատութեան ասպարէզներ բացուելով :

Աստուած կ'օրհնէ բազմազաւակ ընտանիքը , և արդէն փորձով ալ կը տեսնեմք այս բանս .

Քրիստոնեայ և Աստուծմէ օրհնուած ընտանիքը շատ ւոր կ'ըլլայ :

Զ.

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Եկեղեցին՝ որ Աստուծոյ իմաստութեան և հին օրինաց հաւատարիմ աւանդապահն է , կ'օժանդակէ և կը փառաւորէ ծնունդները , ասոր փորձն ամեն օր յայտ յանդիման կը տեսնենք : Մայր եղող կնոջ սխրալի գործակցութիւն մ'ունի իւր քահանայից ձեռօք : Ար-

դանդին մէջ բնակեալ նորաստեղծ մարդոյն ինչ պարտքեր որ ունի կը յիշեցնէ , ըսելով . — Ո՛վ մայր , քու արդանդիդ պտուղն ամենայն զգուշութեամբ և սիրով պէտք է պահես . այս հոգին թէպէտ դեռ լրացեալ դու յութիւն չունի , բայց Քրիստոսի ժառանգակից և արքայութեան հաղորդ ըլլալու համար ստեղծուած է : Արդանդէդ սկսեալ մինչև յաւիտենական կեանքը՝ անոր ապագայն քու պահպանութենէդ կախումն ունի , և դոյզն անխոհեմութեամբ ոչ միայն անոր երկրաւոր այլ և երկնաւոր կեանքն ալ կրնայ պատահիլ՝ որ վտանգի մէջ ձգես : —

Յղութեան ժամանակները պէտք է որ մայրը հրաժարի ամեն ուժգին կրքերէ , ինչպէս երկարատև յոգնութիւն մը պատճառող նիւթական աշխատութիւններէ : Թեթև անխոհեմութիւն մը , եթէ կամաւոր ըլլայ , կ'ըսեն , ծանր մեղքի մը հիմնարկութիւնը կը դնէ ծնեցելոյն վրայ : Որովհետեւ տղուն կեանքը մօրմէն կախումն ունի , եւ եթէ աղետալի դէպք մը պատահի մօրը սըլսալմամբը , անոր պատասխանատուն մայրն է : Հայրն ալ իւր պարտքերն ունի . պէտք է որ զգուշանայ պատճառ տալէ այնպիսի դիպուածոց՝ որմէն եղեռնադործութիւն կրնայ ըլլալ՝ սպաննելով իւր հարազատ ծրնունդը :

Երբ ծնանի տղան՝ այնուհետեւ ուրիշ պարտքեր կ'ուզան առաջիններուն վրայ . ծնանելէն անմիջապէս յետոյ՝ ծնողաց առաջին պարտքն է զաւակին մկրտել տալ : Շատ յանցաւոր են այն ծնողք՝ որ իրենց երախային մկրտութիւնը ութն օրը կ'անցունեն . զի նըրախան է այս թէ ծնողքը կա՛մ մկրտութեան ինչ պարգեւ տալը չգիտէր , որ մեղք է , եւ կա՛մ կարեւորութիւն չըտար , որ մահացու մեղք է : Երախայն մկրտութենէ ուշացնելը , նոյնչափ ժամանակ սկզբնական մեղաց առ-

թիւ մարդկութեան վրայ տիրող դիւական ազդեցու-
թեան տեղի տալ է խեղճ զաւակին վրայ .

Եկեղեցին կը փափաքի՝ որ իւր որդւոց սերունդը
մկրտութեամբ սրբուելով յաւիտեանական փրկութեան
արժանի ըլլան . ուրեմն սրչափ անհանդուրժելի է այն
ճնողաց մեղապարտ անհոգութիւնը՝ որ չնչին և անկա-
րևոր փաստաբանութեամբ երախային մկրտութիւնը
ամիսներով կ'ուշացնեն : Գործն այնչափի կը հասնի որ
երբեմն իրաւամբ տտրակոյս կը ծագի թէ արդեօք այս
անհոգ և անտարբեր ճնողքները հաւատք ունի՞ն թէ
ոչ : Մայրեր , դուք՝ որ այդչափ կը դուրգուրայք ձեր
որդւոց , ձեր դեռաբոյս և նորընծիւղեալ ծաղկանց վը-
րայ , որոնց կենդանութիւնը մէկ չնչով կրնայ վտան-
գիլ , ինչո՞ւ կոյր կ'ըլլաք մկրտութենէ հետի մնացած
երախայներուն վտանգը տեսնելու , որ շատ անգամ կը
պատահի յանկարծակի մահուամբ :

ՍՏՆՏՈՒ

Հայր և մայր որչափ որ կարելի է պէտք է՝ որ շու-
տով նորածինը մկրտութեան անհամեմատ շնորհաց
արժանացնելու հոգ տանին . ասիկայ առաջին պարտ-
քն է ճնողաց , և վերջէն հարկ եղած բարոյական խը-
նամոց և հսկողութեանց սկիզբը պէտք է համարինք :

Թէ մայրն անձամբ սնուցանէ իւր որդին՝ որուն
պէտք է փափաք ընէ՝ եթէ տկար չէ , և թէ անխու-
սափելի հարկէ մ'տոխպեալ ուրիշին սնուցանել տայ ,
միշտ իրեն օգնութեան և իւր թերին լեցնելու համար
ուրիշի կարօտ է : Զո՞վ պիտի ընտրէ այս բանիս հա-
մար : Պիտի նայի՞ որ սնուցիչը բարեպաշտ և համեստ

ըլլայ . անբարեխառն , կատակասէր , անժուժկալ , ա-
նդգոյշ և շատախօս մէկը չըլլայ . նոյն իսկ իւր այրն ալ
համեստ մէկն ըլլալու է :

Երկրորդ իս մէջ անհամեստութիւնն երես դտած
ըլլալուն համար՝ վերն ըսած յատկութիւններովս ստն-
տու գտնելը շատ դժուարին եղած է , որուն համար աւե-
լի անհոգ ըրած է ամեն ընտանիք : Մարմնական ա-
ռողջութիւնը միայն կը վնասուեն , հողևոր կամ բարո-
յական մասին բողբոլին անհոգ կ'ըլլան : Ամենուն հա-
մար յայտնի եղած բան մ'է որ քանի մ'ընտանեաց բա-
րոյականի տկարութիւնն այն աստիճանի հասած է՝ որ
ս և է ստնտու աներկիւղ տուններնին կ'ընդունին . հե-
րիք է՝ որ մարմնոյ կողմանէ առողջ ըլլայ : Երբեմն ալ
սնուցիչ կնոջ անբարոյականութիւնը գիտնալով հան-
դերձ՝ մկրտութեամբ մաքրեալ նորածին տղայն անոր
պիղծ ձեռքը կը յանձնեն :

Հիներն ըսած են , բայց ես չեմ համարձակիր ըսե-
լու՝ թէ մօր կաթին արեանը նայելով մաքուր կամ ան-
մաքուր կ'ըլլայ , և այնպիսի տարերք կը պարունակէ մէ-
ջը՝ որ գէշ կամ աղէկ ուշ կանուխ կ'արթննայ :
Կը փափաքէի՞ որ Ռասին գաղղիացի երևելի բանաս-
տեղծը սխալ նախապաշարման մ'արձագանգն եղած
ըլլար՝ իպպոդիդոսի այս խօսքերն ըսած ատեն .

Այս վիտութիւն՝ ընդ որ դու արդ զար-
մանաս՝ փոքր է յոյժ ,
Զոր ամաղոն մայր ոք ինձ խառն ընդ կա-
թին դիեցոյց :

Իսիտ շատ անգամ՝ նկատուած և ապացուցուած բան
մը կուզեմ ճնողաց գիտողութեան ներկայացնել . տղային
մատաղ հոգին գոնէ այնչափ բարոյական զգուշութեանց
կարօտ է , որչափ տկար մարմինը նիւթական դարմանոց :

Որորոցի աղուն հետ՝ երբոր քաղցրութեամբ և խանդաղատանօք խօսինք, ճշմարտութեամբ և հսկելով խնամենք՝ քաղցր և հեղահամբոյր կ'ըլլայ, քան թէ երբոր խստութեամբ վարուինք ու երեսի վրայ ձդենք: Կենաց բարոյական ունակութիւններն այնպիսի արմատներունին՝ որ ծայրերնին որորոցքին կը հասնին. երբոր մարդ մը կը տեսնենք՝ որ բարկացող, կասկածոտ և չաբասկրտ մէկն է, գիտցէ՛ք որ տղայութեան ատենէն այնպէս է եղեր. միթէ անոր ծնունդը չար էր, Դեռ չը վճռած քննեցէ՛ք, պիտի խմանաք՝ որ դիւեցնողը խտաբարոյ և ցասկոտ մէկն է եղեր:

Դիւեցուցանողն երբոր պէտքը չը կրնալ գոհ ընելուն համար զայրացեր է, տղային մատաղ հոգւոյն մէջ ալ ցասման խոր դրեր է. բարկութենէն տղայն սեղմեր և ճմեր է, ինչպէս որ կայծ կը նետուի եթէ խարոյկը ճնչես:

Երկրորդ զաւակ մ'առաջինին բողբոլին հակառակ կը հեղահոգի կրնայ ըլլալ. բայց ո՛չ ապաքէն երկուքն համարիւն էին. ի՞նչ է պատճառ ուրեմն որ այսչափ իրարու չեն նմանիր. բնութենէ՞ն. — թերևս: Բայց ասիկա վճռելէ առաջ պէտք է քննել թէ ի՞նչ ստնտուի ձեռք մեծցաւ մանուկը:

Գիտեմ՝ թէ զաւակին դիւեցունելու անկարող մայրեր ո՛րչափ նեղն ընկեր են ծծմայր գտնելու կողմանէ: Շատ քիչ կը պատահի՝ որ կարենան կատարեալ մէկն գտնել: Ուստի, կաղաչեմ՝ որ գոնէ գտածնուն վրայ միշտ հըսկողութիւն ընեն, և բնաւ որդին երեսէ չը ձգեն:

Ստնտուն մօրմէն նախամեծար ըլլալու չէ տղային, ուստի մայրը պէտք է որ միշտ տղային քով ըլլայ, զի տղայն ո՛րը որ իւր վրայ շատ նայի՝ այն կը սիրէ. պէտք է միշտ մայրն իւր գիրկը քնացնէ և անուշ երգեր մըմնջելով որանը որորէ:

Մայրը աչքն ու ականջը տղային տալու է բողբոլին, աս է խնամոց ամենէն առաջինը: Որդւոց համար ծընողք են պատասխանատու: Արբունքի մօտ տղայոց ինքնակամ գործածյանցանքին համար անգամ երբոր ծնողք պատասխանատու են, հապա ս՛րչափ դեռ կաթնիկեր զաւակին համար՝ որ տակաւին աջ ու ձախ չը գիրտէր, այսինքն չարն ու բարին չը կրնար որոշել:

Քրիստոնեայ մայրը պէտք է իւր որդւոյն մարմնոյն պատիւը պահէ, զի ընդունարան է սուրբ հոգւոյն: Ազխնոյն տղայն հագուեցնելու, գգուելու և փայտիայելու մասին բռնած կերպին անհոգ նայելու չէ: Ո՛րչափ որ մեծնայ տղայն, այնչափ մայրը խնամքը պիտի շատցունէ, թէ՛ անոր անմեղութիւնը պաշտպանելու և թէ՛ բարիք դաստիարակելու համար. թեթև բաներն անգամ բանի տեղ դնելու է, որովհետև մեծ բաները պղտիկներէն յառաջ կուգան: Առաջին անգամ լեզուն բացուելու ատենը անմիջապէս Աստուծոյ վրայ բարեպաշտական խօսքեր ընել տալու է տղուն. մայրը պիտի նայի՝ որ արտասանութիւնն ալ աղէկ ըլլայ. հնչման ներդաշնակութիւնն և խօսքի ու բառերու արտասանութիւնը բարեկիրթ մարդոց չըրթանց վրայ այլ է, գեղջուկին բերնին մէջ այլ է: Ի՞նչ ջանք որ կ'ընենք գէշ արտասանութեամբ և կէսկտուր ու անյարմար բառերով և խօսքերով տղային լեզուն չաւրելու, նոյնչափ ալ տղային նայուածքին և սովորութեանց հոգ տանելու ենք՝ որ չըլլայ վերջը դղջանք չկրնալ դարմանելուս համար: Տղային մատղաջ հասակին մէջ այնպիսի բաներու վարժեցնելու չենք որ վերջէն խիստ դժուար կ'ըլլայ վերցնել և ուզդել:

Բարոյական մարդն իւր մօրը ծնդաց վրայ կը շինուի: Տիւրոսի ներկիով ներկուած կտան ի՞նչ որ ալ ընէին՝ իւր գոյնը կը պահէր. հողամանը առաջին ան-

գամ մէջը լցուած հեղուկին հոտը և համը կը պահէ : Պատմութեան վկայելուն նայելով, Գրակքոսեանց կուր- նելիէ մօր մաքուր և գեղեցիկ լեզուն՝ զաւակացը հիա- նալի ճարտարխօսութեան հիմն դրաւ . մինչդեռ Ղևո- նիդաս դաստիարակին վարքն ու բարքը բոլորովին աւրեցին Աղեքսանդրի բնատուր ձիրքն և բարձր վար- քերը : Գէշ վարուց ազդեցութիւնները մատաղ հասա- կէն կը ապաւորուին :

Ը.

ՏՂԱՅՈՑՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ ՄԱՅՐՆ Է

Մայրն է որդւոյն առաջին դաստիարակը . Մայրն է որ ընթերցմունք պիտի սորվեցնէ, ամեն կերպով հող պիտի տանի որ կրթանքը զաւակին սիրելի ընէ՝ անոր հետաքրքրութիւնը արթնցնելով և յաճախ հարցմանց տեղի տալով :

Հարցմունքներ ընելու կողմանէ բնութիւնը օդնա- կան եղած է մօր : Տղան սովորաբար հետաքրքիր է . այս բանս նախախնամական բնազդումն է տղուն վրայ , որ ինքնիրեն ճամբայ կրբանայ այն դաստիարակութեան՝ զոր Աստուած կ'ուզէ որ իրեն տրուի . Շատ կըխաբուին ծնողք՝ եթէ այս բանին կարևորութիւն չըտան . զի անոնց բրած հարցումները և պահանջած լուծումները կենսա- կան փոճաքարեր են՝ որ մանկան լեզուն և մտածմունք- ները կը հրահանգեն :

Մանկանց դաստիարակութեան վրայ խօսող Եւրո- պացիք խորհուրդ կ'ուտան՝ որ փղոսկրէ կամ փայտէ

չարժական այբուբեններու վրայ իբրև խաղալիկ տղայք դբօսնուն , և ինչպէս ուզէ տղան , կարգաւ և կամ խա- ուրն 'ի խուռն շարժէ գրերը և արտասանէ : Այս կեր- պով տղայն թէ՛ դբօսանք ունեցած կ'ըլլայ և թէ՛ միան- դամայն դաս :

Յիրաւի , սիրոյ , գգուանաց և քաղցրութեան ու- սումնարանին , այսինքն , մօր գրկաց մէջ կըսովրի տղան առաջին ծանօթութեանց տարերքները , որոց ընդար- ձակ բացատրութիւնը օր մը բարձրագոյն դպրոցաց մէջ պիտի լսէ :

Այս ժամանակներուս մէջ երկար ատեն չեն թողուր աղան մայրական քաղցր դպրոցին մէջ : կըփութան արտօ- րանօք վարժարան զրկել , և անոր մատաղ ու թերա- կազմ գործարանները կը յողենցնեն ուսումնական և մտա- լորական հրահանգներով : Նեղ ջերմանոցներու մէջ բոյ- սեր ճնշելու պէս՝ որ կանուխ պտուղ կ'ուտայ , տղուն հետ իւր կարողութենէն վեր բաներու վրայ կըխօսին : Բոցը ժամանակէն առաջ կը ծիւրի , ծաղիկները տրժ- գոյն , պտուղներն ալ աղաղուն կ'ըլլան : Ո՛րչափ տղայք- ներ տեսնուած են՝ որ իրենց եօթնամեայ կամ տասնա- մեայ հասակին մէջ հրաշալի յառաջագիմութիւններ բ- րած են . բայց անմիջապէս դադրելով իրենց կանխա- հաս ծանօթութիւններէն սպասուած յոյսերը պարապը հանած են : Յաւալի՛ է ինձ , յիրաւի , ծնողաց այս յի- մարութիւնը . Այն հասակին՝ յորում մանուկը խիստ պէտք ունի մարմնամարդութեան , լուսոյ ջերմութեան և օդառութեան , դաշնակաց և ուսման գրասեղանի կը կապեն , որով առողջութիւնը շուտ կըսուժէ , իւր ա- պառնի կորովամտութիւնը և հանգամանքները կը փա- սուին : Իմաստուն ծնողքները պէտք չէ որ բնութեան ստիպումն և բռնաբարութիւն ընեն : Պէտք է որ խիստ մատաղ մանկութեան մէջ , այսինքն , մինչև եօթը կամ ու-

Թը տարւոյ հասակը ամենամեծ զգուշութիւններ դորձածեն Սւելորդ կըհամարիմ ըսել աստանօր՝ թէ աշխատութիւնը և ուսումնական հրահանգները ծանրազնելու չէ անօր վրայ զգալապէս, այլ ըստ կազդուրել հասակին ու բնական և բարոյական զօրութեան յարմարցնել և անուշցնել :

Տղայն աւելի պարզեներով քան թէ պատիժներով պէտք է աշխատութեան ստիպել կրփախաբիմ որ , ըսած է իմաստուն մէկը , խել մը հասակակից մանկունք մէկ տեղ դաստիարակուին , որպէս զի իրարմէ գերադանցելու բարի նախանձ մը ունենան , և մէկուն տըրուած գովեստները միւսոյն համար խթան մ'ըլլան : Պէտք չէ կշտամբել , ըսած է , տղայն՝ եթէ բթամիտ և յաւաջագիմութեան մէջ ծանրաքայլ ըլլայ , այլ խոհական և արժանաւոր գովեստներով դրգուել մատաղ միտքը , այնպէս մը ընել պէտք է որ յաջողութիւնը տըղայն խրախուսէ , և կորուստը ցաւ պատճառէ . բայց աման բանէ աւելի պէտք է զգուշանալ որ ուսմունքը զլուանք չըպատճառէ տղուն , որպէս զի չ'ըլլայ թէ աշխատութենէ յափրանալով մանկութիւնը անցնելէն յետոյ ուսմունքը մէկդի դնէ :

Քրիստոնէական վարդապետութեան նախնական դիտելիքները և անոր վրայ դիւրմբունելի բացատրութիւնները խիստ պատշաճ կրթութիւններ են ազայոց դատումը կրթելու և խճողուած միտքը հրահանգելու մասին : Հին և նոր կտակարանաց պարզ և բացայայտ պատմութիւնները անոր թարմ մտաց մէջ քրիստոնէական բարոյականի սկզբունքները վայելչապէս կը տպաւորեն :

Տղան մատաղ հասակէն 'ի վեր ազօթքի վարժեցընելու է : Ազօթք և դաս իրարու յաջորդելու են : Թօղ կարճաւաս , բայց խիստ յարմար ըլլայ այն ազօթքը տը

ղուն յօժարութեանց և կարողութեանց, այնպէս որ չ'ըլլայ թէ այն հասակէն չրթանց ծայրերով ազօթք հնչելու վարժուի , այլ սրտէն յօժարութիւն զգալով :

Շատ հարկաւոր է նաև՝ որ բուն ծնողքը , այսինքն հայրը և մայրը տղուն դաստիարակութեան հոգը ուրիշի չը յանձնեն : Մեծ մօր կամ մօրաքեռ պէտք չէ յանձնել տղայն իբրև ծնողաց : Մեծ մայրերը չեն կրնար սոյն պաշտօնը կատարել , և փորձը կը ցուցնէ թէ անոնք այս բանին յարմար չեն : Տղուն մտաց աւաջին ընծիւզը պէտք է գլխաւորապէս ծնողաց աշայատ ջիւ և անոնց կենդանատու սիրոյն մէջ ըլլայ : Ծնողք ամեն դաստիարակ վարժապետներէ աւելի հնարքներ և միջոցներ կրնան գտնել՝ զաւակն իրենց հաւատքին և սիրոյն մէջ խնամելու մասին : Իւ կրնամ ըսել թէ մեծ մօր և մօրաքեռ չափազանց բարեսիրութիւնը՝ որ շատ անգամ մեղապարտ կ'ըլլայ , տղայոց դաստիարակութեան աւելի քիստ կ'ուտան քան օգուտ կ'ընեն : Դարձեալ կ'ըսեմ . առաջին դաստիարակութեան հոգը միայն և միայն ծնողաց պարտքն է : Ոչ ոք կրնայ իրենց պէս կրթել տղուն միտքը , դատումը , խօսակցութիւնը , կամ քը և իւր յատուկ նկարագիրը , զրայմունքը և խրղճմտանքը . ոչ ոք կրնայ իրենցմէ աղէկ պատրաստել տըղուն մտաւորական և բարոյական կենաց հարուստ տարերքները :

Թ .

ԳՊՐՈՅ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Մինչև հոս տղայն իւր ծնողաց քով զարգանալու

և նոցա դասերով պատրաստուելու վրայ էր խօսքերը նիս : Բայց դաստիարակութիւնը այսչափով չը լիննար : Հոս շատ խնդիրներ կ'ելլեն , որոնք լուծելու մասին պիտի օգնեմք և առաջնորդեմք ընտանեաց :

Խնդիրը գիտնալու վրայ չէ թէ առտնին դաստիարակութիւնը հասարակաց դպրոցի մէջ աւանդուած դաստիարակութենէն նախամեծար համարելի՞ է թէ ոչ : Շատ քիչ ընտանիքներ կան՝ որոնց կարողութիւնը կը ներէ իրենց որդիքը տան մէջ դաստիարակելու :

Բայց այս բանին մէջ երեք անպատեհութիւններ կան . առաջին՝ կատարեալ չը կրնար ըլլալ . երկրորդ՝ նախանձընդդիմութիւն ալ չը կենար , և երրորդ՝ որ տղուն նկարագիրը չը կրնար լաւ ըլլալ , որ կը յաջողի միայն օտարաց հետ յարաբերութիւն ընելով : Շատ ընտանիք պէտք է՝ որ դպրոցին մէջ աւանդուած ուսմունքէն 'ի դատ , տան մէջ ալ դասեր տան , մինչև իսկ բանասիրական ճիւղերը :

Կը կարծեն ոմանք՝ թէ ցորեկեայ աշակերտաց դպրոցը դիչերօթեայ դպրոցներէն աւելի ընտրելի է : Վասն զի թէ՛ մասնաւոր և թէ՛ ընդհանրական ուսմանց օգուաները միանգամայն կը պարունակէ , և սովորաբար անպատեհութիւններէ ալ զերծ է : Սրդարև . շատ ատեն այս խօսքը իրաւ կ'ելլէ , և ցորեկօթեայ դպրոցներու լաւ արդիւնքը փորձով ալ տեսնուած է շատ անգամ , բայց պայմանաւ որ պատանւոյն վրայ հայրը մայրը կարենան մեծ հակողութիւն ընել , և սունը բարեկրթութեան ասպարէզ ըլլայ : Սակայն , քանի՞ տուն կրնաս գտնել բարեկիրթ և քանի՞ հայր պիտի կրնայ հսկել իւր որդւոց վրայ : Դարձեալ նայելու է թէ տան մէջ պիտի կրնայ տղան կրօնական ամեն հրահանգները կատարելապէս ընդունիլ՝ որոնցմէ սովորաբար ցորեկեայ դպրոցին մէջ տղան զուրկ կը մը .

նայ .

Բայց ի՞նչ ընթացք պէտք է ունենայ ցորեկեայ դպրոց մը : Այս հարցման պատասխան պիտի տամք հետևեալ գլխոյն մէջ , ցուցնելով աղէկ ուսումնարանի մը գլխաւոր պայմանները :

Ժ .

ԱՂԷԿ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԸ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Խիստ դժուար պիտի ըլլար աղէկ ուսումնարանի մը ամէն մէկ պայմանները և յատկութիւնները նկարագրելը՝ թէ որ փոխանակ միայն սկզբունքներն աւանդելու մանրամասնութեանց վրայ խօսէինք : Գիտեմ որ կան բաւական դպրոցներ , թէ՛ մասնաւորաց և թէ՛ ընդհանրական : Առանց ակնառութեան պիտի ընեմ ընտրութիւնս : Խնդիրը մէկ բանի վրայ է միայն , այն է բարի դաստիարակութեան , որով միայն կ'ըլլայ մարդ՝ ճշմարիտ քրիստոնեայ , ուստի հարկաւոր է ազատաբար խօսիլ : Զաւակին ապագայն անոր համար որոշուած դպրոցին վիճակէն կախեալ է : Դաստիարակութեան միջոցը կարճ , միանգամայն և շատ տարժանելի է , որով հետև ընտրած միջոցը երբ առաջին անգամ սխալ ելլէ , ետ դառնալ և վերստին սկսիլ , այս ոճը ձգել և այն ինչ ոճը ձեռք առնել ինչ սոսկալի հետևանք ունի : Բայց այս վայրկեանը լիննալէն յառաջ՝ դաստիարակութեան կերպին սխալ սկզբնաւորութիւնը տղուն ապագայ կենաց վրայ առ հասարակ կը տարածուի : Կրնան այնպիսի դպրոցներ ըլլալ , որոնցմէ ամենե

ւին քրիստոնեայ և առաքինի մարդ դուրս չ'ելլէր : Ծնողք որչափ ալ խնամք տարած ըլլան անոր մանկութեան վրայ , բաւական է որ այնպիսի դպրոց մտած ըլլայ տղան , շատ չ'անյնիր անհաւատութեան և անբարոյականութեան ապականացու սկզբունքները կը մտնեն տղուն միտքը և դողցես հոն մշտնջենաւորապէս բոյն կը դնեն :

Ո՛չ միայն բարոյապէս՝ այլ և նիւթապէս առողջութիւննին կ'ապականեն : Ամենէն զօրաւոր մարդն ալ երբոր ճախճախուտ դաշտադետին բնակի , վաղ կամ անադան տենդի պիտի բռնուի : Ես ինք զինքս կը պաշտպանեմ ըսելը բնաւ օգուտ չունի . ինչ որ ըսեն և ընեն ցնորք է : Այս կողմանէ երևութէ խաբուիլը վրտանդաւոր է :

Շատ փայլուն տեսած դաշտադետինդ շատ ալ կանաչագեղ կ'ըլլայ . ասդիս անդին ջրալից , խորունկ և երկայնաձիգ առուներ և ակօսներ կը տեսնես , գեղեցիկ տեսարան մը՝ ուր կարծես թէ անհազին ոչխարաց հօտ մը կրնայ արածիլ և պարարտանալ : Բայց բաւական է որ մէկը այդ պարարտ հողին վրայ ծնած ըլլայ , անմիջապէս կը տկարանայ , ջերմը զայն կը մաշէ , և մինչև կը մեռցնէ : Խելացի ճանապարհորդը կ'աճապարէ շուտով անցնիլ այսպիսի խաբէտաւոր մարդադետինէն , և անկէ ազատելէն վերջն ալ դեռ դիմացն ելած դալկահար և վտիտ մարդկանց պատկերը մտքէն չը հեռանար :

Հայրե՛ր , մայրե՛ր , դպրոցի մը վրայ անոր տեսքէն կամ համբաւէն խաբուելով դատումն մի ընէք , չէնքը լայն է , ճեմելիքը ընդարձակ և հովանաւոր , պարտէզները դալարագեղ . բայց բարոյական ջերմը , այսինքն , ո՛չ թէ մարմինը այլ հողին թունաւորող այս ջերմը մշտնջենաւորապէս կայ . տասնէն մէկը չը կրնար խալսիլ

այս հողեւոր տենդէն՝ որով մեծ ընտանիքներ դժբաղդաբար կը փճանան :

Հասարակաց լաւ վարժարանի մը դիւսաւոր պայմանները հետեւեալներն են .

Ա. կրօնից պաշտօնը և դործածութիւնը դաստիարակութեան խարխիւր ըլլայ , կրօնից ուսումը առաջին տեղը բռնէ , պատուականագոյն մրցանակները նոյն ուսման համար պահուին : Իւ պէտք է կրօնի ուսումն ընդարձակուի տղուն հասակին ըմբռնման չափով :

Բ. Տէրերը , դասատուները և տեսուչները պէտք է մի և նոյն ճշմարիտ հաւատքն ունենան , որովհետեւ կըրօնական վարդապետութեանց խառնակութիւնը կրօնականի մասին դաղջութիւն , անհաւատութիւն և ամբարշտութիւն յառաջ կը բերէ , որոց հարկաւ կը յաջորդէ անբարոյականութիւնը :

Գ. կարեւոր է յոյժ որ դպրոցը կրօնական դպրոցի ընդհանուր հանգամանքը և նշանն ունենայ , որովհետեւ դպրոցին այսպիսի հանգամանք ունենալը դիտնալով՝ այն ծնողք , որք իրենց զաւակները կրօնականի հակառակ սկզբունքներով մեծցունել կ'ուզեն , այսպիսի կրօնական դպրոց չը պիտի զրկեն զաւակնին , որով շատ դիւրին կ'ըլլայ իմաստուն և բարեկիրթ տղաքներ հաւաքուիլը : Եւ այսպիսի յօժարակամ հաւաքում մը նաև երաշխաւորութիւն կ'ընծայէ յաջողութեան : Քրիստոնեայ ընտանիքներ այս դպրոցը պիտի ընտրեն , անհաւատները պիտի հեռանան , ամեն ինչ բարի պիտի ըլլայ , զի մէկ հիւանդ ոչխարը կրնայ բովանդակ հօտը վատթարացունել : Մաքրութեան ջանքը 'ի շնորհս բարեհոգ վերատեսչին շուտով պիտի ընդհանրանայ :

Հիմա ժամանակն է որ հրաժարին ազգայինք խառնակ դաստիարակութենէ , մանաւանդ իրենց դաւա

նութենէ չեղողներուն յանձնելէ, եթէ կը վախաբին հաւատքը իբրև ուսումն պահել միշտ :

Խառնակ դաստիարակութիւնը, որ բուն հայը, բողոքականը և պապականը, հաւատացեալները և անհաւատը մէկտեղ ուսուցանելու և ամեն այոն և ոչը անխտիր ընդունելու և պաշտպանելու վրայ կը կայանայ, գլխաւոր պատճառն է աշխարհիս մէջ կրօնքի և ազդութեան անտարբերութիւն յառաջ դալուն և կրօնի յերկուականութեան զորանայուն : Տղան միամըտութեամբ ամեն կրօնք հաւասարապէս պիտի ըմբռնէ, զի իւր խղճին առջև ամենքն ալ հաւասարապէս ճշմարիտ քարոզուեցան : Վերատեսուչը թո՛ղ բողոքէ որչափ կրնայ այս հաւասարութեան դէմ, որովհետեւ այլադաւան հերձուածողները պիտի պնդեն թէ իրենց կրօնքը ճշմարիտ է և դերագոյն :

Պիտի ըտուի թերևս թէ դասատուին պարտքն է ամեն կրօնք մեծարել. բայց իւր ուսուցչութիւնը որչափ որ ալ չէզոք ըլլայ, մանուկ ունկնդրաց ուշադրութիւնը պիտի գրաւէ : Ձի եթէ կրօնական ճշմարտութիւնը մարդուս դերագոյն չահն է, ինչպէս որ է հաւաստեալ, նա միայն յարգելի լուծութիւն մը չը պահանջէր : Այս չէզոքութիւնը կեղծիք է, անշուշտ դասատուն բանի մը կը հաւատայ, ուրեմն անկարելի է որ իւր հաւատքը չը յայտնէ, եթէ բնաւ բանի մը չը հաւատար, այսինքն անաստուած կամ աստուածեան և այլն և այլն է, հաւատոյ այս թերութիւնը իւր ուսուցչութեան մեծամեծ վտանգներ պիտի հասցունէ :

Եթէ ըսեն՝ թէ ուսողութեան, լեզուագիտութեան և բնագիտութեան դասերը անխտիր դասեր ըլլալով անհաւատն ալ կրնայ աւանդել, կը սխալին :

Յիրաւի, կրնայ ըլլալ երբեմն ասիկայ : Բայց քանի որ Աստուած ամեն բանի սկիզբն և կատարածն է,

ուստի անպատճառ պիտի պատահի այնպիսի տեղ մը՝ յորում անհաւատ դասատուն պիտի դպչի կրօնքին : Արդ, նախատինք չէ՞ միթէ Աստուծոյ շարունակ արարչութեան վրայ խօսի մէկը և արարչին անունը լռէ, և մինչև վերջը Աստուած ըսելու տեղ բնութիւն ըսելով անցնի : Երկրաբանութեան և բնագիտութեան ուսմունքը թէ որ անաստուածը կամ նիւթապաշտը աւանդէ՝ միշտ վտանգաւոր բան է. զի այս ուսմունքները Աստուծոյ դոյութիւնը թէ՛ կը հաստատեն և թէ՛ իմաստակներու ձեռքին մէջ կը հերքեն :

Բայց ի՞նչ ըսեմ պատմութեան դասին համար ալ, երբոր հակասական քննադատութեանց միջամուխ եղող մէկն աւանդէ, որ իւր պատմութեան ընթացքին մէջ պիտի ջանայ հարկաւ մերժել նախաինամութիւնը, զրպարտել եկեղեցին, նորա հաւատքը և ամեն դարերու մէջ ըրած գործերը : Շատ իրաւամբ կ'ըսեն որ անհաւատից դարէ մը 'ի վեր շարագրած պատմութիւնը բողոքովին ճշմարտութեան հակառակ կ'ելլէ :

Այսպիսի ստութեան դպրոցի մը մէջ դաստիարակեալ տղայէն ի՞նչ կրնայ սպասուիլ. ինչպէ՞ն կարելի է որ քրիստոնեայ մանուկը դիմագարձէ դասատուին՝ որուն միշտ հրապուրմամբ կը նայի աշակերտը, և ամեն բան անկէ օրինակել կ'ուզէ. ո՞չ ապաքէն ողորմելի տղային հաւատքը վտանգի մէջ է :

Այն դպրոցները, զորս պիտակ անուամբ խառնակ կը կոչեմ, վասն զի չեմ կրնար ուրիշ անուն մը տալ, այն ուսումնարանները ուր կրօնքի մասին անհոգութիւնը դասատուաց օրինակովը և խօսքովն աշակերտաց վրայ տըպաւորուած է, այն դպրոցները կ'ըսեմ, այսօրուրնէ սկսած են ահագին փորձութիւն ըլլալ մեր գլխոյն : Անոնց տխուր ազդեցութեան հետեանքն է՝ որ այսօր մերթ առ մերթ լրագրաց մէջ հայրենի եկեղեցւոյ ա-

ւանդական սովորութեանց, եկեղեցւոյ բարի պաշտօնէից
դէմ անգամ անլուր թշնամանքներ կ'երևին :

Վերջերս Մնգղիա առաջարկեց որ իւրանտայի մէջ
կղերական վարժոցներ հաստատուին, որոց մէջ ամեն
կրօնքէ աղայք ժողվուին : Կը խոստանայր նաև որ հը-
ռովմէական զաւակաց ծնողքներուն բոլոր ծախքը վրայն
կ'առնու : Հռովմէական եպիսկոպոսներ մերժեցին՝ հետե-
ւանքը նախատեսելով : Բայց մենք ընդհակառակն բնաւ
բանի տեղ անգամ չենք դներ՝ թէ՛ բողոքականաց և
հռովմէականաց և թէ՛ մեր աղգին դպրոցները ղրկենք
մեր զաւակները : Մանաւանդ թէ ծանր ծախքերով կը
յանձնեմք մեր զաւակներն անոնց՝ որոց պատմութիւնը և
ներկայն միշտ աղգին արիւնը ծծել եղած է :

Հայոյն համար խնդիրը պարզ է . ո՛ր վարժարան որ
կասկածելի է կրօնքի դաստիարակութեան կողմանէ ,
հոն իւր զաւակը պէտք չէ որ հաւատայ :

ԺԱ.

Թէ ԻՆՁ ՊԱՐՏՔԵՐ ՈՒՆԻՆ ՄԵՈՂՔ ԻՐԵՆՑ

ԴՊՐՈՏԱԿԱՆ ԶԱՒԱԿԱՅ ՎՐԱՅ

Շատ սխալ է կարծել թէ ծնողք զաւակնին դպրոց
դնելէ վերջը՝ այլ ևս անոնց դաստիարակութեան պար-
տաւորութենէ և պատասխանատուութենէ ազատ են :
Ծնողք՝ որ Ոտուծոյ պատկերն են աշխարհի վրայ , այն-
չափ անդրժելի պարտքեր ունին կատարելու՝ որ և ոչ
մին կրնան մոռնալ : Դաստիարակութեան մէկ կողմն ան-
պատճառ թերի կը մնայ՝ եթէ ծնողք իրենց ազդեցու-
թիւնը մոռնան : Ծնողք իրենց դպրոցական զաւակին

այցելութիւն ընելու են , և ոչ միայն զաւակաց՝ այլ
նաև անոնց վրայ հսկող պաշտօնէից ալ : Կամ գոնէ նա-
մակով հաղորդակցելու են իրարու հետ : Շատ հար-
կաւոր է որ ըստ բաւականին դպրոցին վերատեսչին
տեղեկութիւն տան իրենց զաւակներուն բարուց , բնու-
թեան , թերութեանց և յօժարութեանց վրայ : Զաւակի
մը վարքը , մասը կամ յաջողութիւնը , դէպ 'ի բարին
ջանքը կամ ծուլութիւնը ծնողաց մտածման դիտար
առարկայն պէտք է ըլլայ : Պէտք է վերատեսչին հետ
միանան և աղգոյ հնարքներ ձեռք առնուն չարը ուղ-
ղելու և 'ի բարին խրախուսելու , և անանկ ճարտար ձե-
ւեր գործածել՝ որ ծնողաց լեզուն և վերակացուացը
մէկ բան խօսին :

Թեթևամիտ են այն ծնողք՝ սր իրենց զաւակները
իբրև բեռն վրանէն թօթափելու համար միայն դպրոց
կը դնեն : Այսպիսի ծնողաց զաւակները հարկաւ օր
մ'ալ իրենց որդիքը իրենց բեռն պիտի համարին :

Դաստիարակութիւն մը՝ յորում ծնողք իրենց զաւ-
կին ուսման , աշխատութեան և յառաջադիմութեան
հոգ չեն տանիր , և բարեպաշտութիւնը զարգացնելու
մտովն անփոյթ կ'ըլլան , այնպիսի դաստիարակութիւնը
ողորմելի է :

Այս են ահաւասիկ ծնողաց պարտքերը . ոչ միայն
եռամեայ տշխատութեան , յառաջադիմութեան և ըն-
թացից հաշիւները պէտք է նային և քննեն , այլ ևս
կարելի եղած ատեն ամսականներն և շաբաթականներն
իսկ , որպէս զի առանց հայրական խրախուսանաց չան-
ցունէ տղան և ոչ մէկ շաբաթը . Եթէ այսպէս ընեն ,
տղան ինքնին իւր հաշիւը և աստիճանը պիտի իմացը-
նէ : Ծնողք նաև տարեկան ընդհանուր քննութեանց
ներկայ գտնուելու են , որով պիտի տեսնեն թէ՛ դպրո-
ցին պաշտօնէից եռանդը , թէ՛ ուսմանց ընթացքները ,

կարգերը , հրահանգները , և թէ՛ ամենայն ինչ՝ որով
դաստիարակութիւն մը բարի կամ չար , վսեմ կամ դը-
ձուձ , զօրաւոր կամ տկար կ'ըլլայ :

Սակայն ծնողաց միջամտութիւն ըսելով հասկնալու
չենք՝ թէ ծնողք վարժարանին յատկութեանցը և կա-
նոններուն վրայ ազդեցութիւն բանեցնելու են . զի ա-
մենէն նուազստ վարժարան մ'ալ՝ որուն վրայ հարկաւ
մէկէ աւելի մարդիկ խորհած են , մէկ ծնողքէն աւելի
հմտութիւն և փորձ ունի դաստիարակութեան ընդ-
հանուր ոճոյն և կերպին վրայ : Մանաւանդ ծնողք
պարտական են դպրոցին կանոնները յարդել և մեծա-
րել , բնաւ չը շեղիլ անոնցմէ առանց ծանր և կարևոր
պատճառի , սահմանեալ ժամանակէ դուրս դպրոցին
տեսութեան չըդան , և բաց 'ի արձակուրդի համար նը-
շանակուած ատենէն ամենևին ուրիշ ժամանակ ոչ ինչ
պատրուակներով տղայքնին զբօսանքի չը կանչեն :

Տղայն դպրոց դնելէ վերջը առանց ստիպողագոյն
հարկի դպրոցէն հանել զբօսուցունելը այնչափ վնաս է՝
որ բնաւ մտքէ չեն կրնար անցունել ծնողք : Յաճախ
կանոնէ դուրս ելլող տղայն ժամացոյցներու կը նմանի՝
որ երբ մէկ մ'աւուրին , խիստ դժուարաւ կը շինու-
ւին :

Եթէ ծնողքները դպրոցի մը կանոն չը պահեն , այս
չար օրինակը տղուն բոլոր կեանքը անկանոն և անկարգ
կ'ընէ :

Եւ մանաւանդ արձակուրդի ատեն ծնողաց յա-
ճախ դորժած թերութեամբքն է որ տղային բարի
դաստիարակութիւնը կ'ապականի , և այսպէս մէկ ա-
ւուր մէջ ամբողջ շարձմաներու և երբեմն տարուան մը
աշխատութիւնը կ'ոչնչանայ :

Տղայք կրնան , և պարտին իսկ իրենց աշխատու-
թիւններէն դադրելով հանգիստ առնուլ . բայց ծնողք

իրենք զիրենք աղատ պիտի չը կարծեն հսկողութիւն
ընելէ իրենց որդւոց վրայ , որք սովորաբար հետաքըր-
քիր , թեթեամիտ և դիւրախաբ կ'ըլլան : Մէկ անցար-
մար ընկերը , վտանգաւոր ընկերութիւնը և երբեմն
անպիտան սպասաւորը կրնան ապականել զտղայն : Բա-
րի հայրը այս ամեն բաներուն զգուշութիւն պէտք է
ընէ : Բայց ի՞նչ ըսեմ այն ծնողաց՝ որ չը դիտնալով թէ
դաստիարակութիւնը մէկ բան է , տուններնին և իրենց
դործերը և խօսքերը , և դպրոցն ու դպրոցին պաշտօ-
նէից վարմունքները զատ բան կը նկատեն : Երբեմն
հետաքրքրութեան համար և կամ չարամտութեամբ՝
դասատուաց , կերակրոց և կանոններուն վրայ անխելք
հարցումներ կ'ընեն անոր , և դպրոցին իբր աղէկ ըն-
տրածը՝ իրենք կը պարսաւեն : Տղան տեսնելով՝ որ
իւր անհնազանդութիւնը կը շողքորթուի և թէ իւ-
առջևը կը սորանջան դպրոցին վրայ , ինք զինք իւր
խելքովը բան մը պիտի կարծէ , դպրոցին հրահանգներ
ըուն զանցառութիւն պիտի ընէ , և ինքն իրեն անձ-
նապէս դատաստան պիտի տեսնէ , որով և դպրոցը ա-
նախորժելի պիտի ըլլայ իրեն , և թերևս զայն հան-
դարտացնելու համար անոր այս խօսքերն ուղղեն ծը-
նողք . « որի մ'ալ կեցի՛ր , անի վերջ հանեա՛ . . . կամ , որև-
որքա՛նք երբե՛տ մի՛ ալ մնաց : Յաւալի՛ բան . ծնողք մինչև
այս կէտին կը հասնին , այլ ևս ի՞նչ հետեանք կ'ընդու-
նիս , կը հարցունեմ . — հարկաւ պարտաւորութեանց
զանցառութիւն և բոլոր դաստիարակութեան ապա-
կանութիւն :

Թո՛ղ զգուշանան նաև ծնողք իրենց որդւոց մեղ-
կութիւնը սնուցանելէ , անոնց որկրամոլութիւնը ան-
սանձ թող տալու չեն . ի՞նչ բան որ դպրոցին մէջ ար-
դիւեալ է՝ տան մէջ ալ արդիւեալ պէտք է ըլլայ , և ա-
մեն օրերք հնազանդ պահելու են :

Աւելորդ է ըսել՝ որ ծնողք պարտին միշտ Աստու-
ծոյ աղօթել՝ որ իրենց պարտքերը անթերի կարենան
կատարել, և աղօթել տան իրենց զաւակաց :

ԺԲ.

Վ.Ս.ԲԺ.ԱՐԱՆԿԵՆ ԵՆԼՈՂ, ՕՐԻՈՐԳ

Վարժարանէն ելլելով իւր ծնողացը դարձող օրիոր-
դին վիճակը երջանիկ վիճակ է :

Մորա կենաց խիտ գեղեցիկ և երջանիկ օրերը ա-
մուսնական և դպրոցական կենաց այս մաքուր անջր-
պետն է :

Սակայն ասոնց ալ պատուէրներ ունինք տալու : Օ-
րիորդին աշխարհային կեանքը շատ վտանգաւոր է :
Ինողք պէտք է զգուշանան այս կենաց հրապոյրներէն
և փաղաքշանքներէն :

Պէտք է մայրը միշտ աղջիկը իրեն ընկեր առնելով
ցուցնէ թէ ո՞րչափ դիւրապատիր և սնտոի բաներ
կան աշխարհիս մէջ, զորս կրօնքը կը դատապարտէ :
Մայրն այն ատեն սիրած կ'ըլլայ իւր աղջիկ զաւակը,
երբոր անոր հոգւոյն փրկութեան համար ամեն վտանգ-
ներու մէջ օգնական կ'ըլլայ անոր : Մայրը պէտք է
գիտնայ՝ թէ ամեն բանի մէջ աղջկան կենդանի պատ-
կերն ինքն է, և Աստուած զինքը անոր առաջնորդ և
պահապան կացուցած է :

Օրիորդը պէտք է որ ինքն ալ դպրոցէն ելլելէն վեր-
ջըն աշխատի հայրենի տան մէջ իւր առտնին հրահանգ-
ները կատարելագործելու : Բայց այս տեղ ինդիորդ աւե-
լի կրթութեան վրայ է քան թէ ուսանելու : Չըպահան-

ջուիր որ դիտնական կին մը ըլլայ, այլ կը պահանջուի
որ աշխատասէր, գործունէաց և իւր տան համար օգ-
տակար կին մը ըլլայ :

Կան մարդիկ որ կը կարծեն թէ օրիորդները
ուսման ընթացից մէջ մինչև արու տղայոց յատուկ եղած
բարձրագոյն աստիճանները պէտք է ելլեն : Բնդհա-
նուր ուսանելեաց համար իրաւունք կ'ուտամ, որոց
ժամանակ մը պէտք է պարապի աղջիկն ուսանելու :
Բայց ըստ իս՝ բոլորովին աւելորդ են այն դատական ուս-
մունքները՝ որոց այժմու դպրոցներու աղջկունք կը
պարապին, և անհեռատեսները կը խայտան : Չարաչար
կը սխալին այն կարծիքն ունեցողները, որովհետև ասի-
կայ ուրիշ բան ընել չէ՝ այլ աղջիկն իրեն յատկացեալ
գործերէն զգուցնել. « կնոջ ամենէն մեծ թերութիւնը,
ըսած է իմաստուն մը, այրութեան ցանկալն է » : Այս
վատյօժարութեան մէջ չ'իյնալու համար պէտք է աղջիկը
Մողմանի, Ֆենէլօնի և Մօլիերի խրատուց հնազանդի,
ղի այս երեքը մէկէն անկարելի է որ սխալին :

Միայն ճաշակ և տեղեկութիւն առնելու չափ պէտք
ուսանին կանայք. պէտք չէ որ դիտութեան բար-
ձրագոյն աստիճանները ելլելու թևակոխեն, և ո՛չ ալ
այլոց իրենց վրայ այնպիսի կարծեաց տեղի տան : Դար-
ձեալ իրենց վերաբերեալ դիտութեանց մէջ սնապար-
ծելու չափ շողքորթուելու չեն, տիկնոջ մը կամ օրի-
որդի մը գիտուն ըլլալը ո՞րչափ հազուագիւտ է, այս
կողմանէ զիրենք ցուցնել ուզելու. մոլութիւննին այն-
չափ դարչելի է :

Իմաստուն կոմսին մէկը իւր աղջկան այսպէս խրատ
կ'ուտայ. — չ'ըլլայ թէ իգական սեռի վերաբերեալ
գործերը չնչին բան համարես, անոնցմով պիտի յայտ-
նուի քու կին ըլլալդ և կին մնալ ուզելդ. գնա՛ աղա-
չէ տիկնոջ մօրդ որ քեզի համար գեղեցիկ բոք մը և իլ

մը գնէ , և ձեռքդ առ դարձուր , և հասկցու՛ր ինձ թէ
ինչպէս կը գործածես : —

Ընտանիքներ կան որ սխալմամբ այնպէս կ'երևա-
կայեն թէ երևելի ըլլալու համար պէտք է առնացի
գործեր ընեն աղջկունք . — ասկէ աւելի ծաղրելի բան
կրնայ մի ըլլայ : Կնոջ արժանիքը իւր տունը կանոնաւո-
րելու , էրկիր երջանկացնելու , մտխարելու և խրա-
խուսելու , և զաւակները կրթելու , այսինքն բարի մարդ-
ընելու վրայ կը կայանայ :

Խօսքերնիս շատ չ'երկարենք : Ընհանրապէս կանայք
պէտք չէ սը ցանկան այնպիսի հմտութիւններ ստանա-
լու՝ որով իրենց առտնին գործերը մոռնան և երեսի
վրայ ձգեն , Բայց և այնպէս , կ'ըսէ իմաստուն մը , քաւ լի-
ցի թէ ըսել կ'ուզեմ որ բոլորովին ազէս ըլլալու են ,
չեմ ըսեր որ Չինաստանի կանանց պէս բոլորովին ա-
նասնամիտ ըլլան , կամ բիւրաւոր տարիներ առաջ ե-
կած կնիկներու պէս տգէտ :

Աղջիկ տղայոց միտքը մշակելու բաւական են դե-
ղեցկի ճաշակը , բարոյագիտութիւնը և մաքուր ու ա-
նուշ խօսելու արուեստը : Կինը կին ըլլալու վիճակին
մէջ պէտք է երևելի ըլլայ . թէ որ այր մարդոց նմա-
նել ուզէ կապիկ կը դառնայ և ոչ թէ մարդ :

Ծնողք աղջիկին չափաւորապէս պարապեցնելու են
ուսման : Այս ալ անոր համար աւելի՝ որ անարատ բա-
րեպաշտութեան մէջ հրահանգուին : Օրիորդը երբ կին
ըլլայ՝ առջի վիճակը բոլորովին կը մոռնայ . ատեն ալ
պիտի ըլլայ՝ որ բանասիրութեան , երաժշտութեան և
դաշնակի վրայ մտածելու ատեն անգամ պիտի չ'ունե-
նայ . բայց միշտ պէտք ունի զօրութեան և մտխարու-
թեան , որ պտուղ են կրօնասիրութեան :

Ճամանակիս մէջ դպրոցներ ունիմք՝ որ աղջիկները
բանասիրութեան աստիճանները հանելու կը ձգտին ,

Թէպէտ և արդէն իսկ արու զաւակաց աւանդուած
բանասիրութիւնն ալ այնչափ յոռի և այնչափ խանդա-
րուած է՝ այնպէս որ , ո՛ր տղայի որ բանասիրական գրո-
ւած ձեռք առնես , ամենուն ալ յառաջարանը՝ կա՛մարե-
ւը ծագելէն կ'սկսի , կա՛մ գարնան ծաղիկներ դուրս տա-
լէն , և այլն : Ասոր վրայ յաւելցուր նաև դաշնակի ընդ-
հանուր սովորութիւնը՝ սրով զուարճութեան վարժուող
ողորմելի աղջիկը՝ երբ այնպիսի տուն կին կ'երթայ՝ ուր
կերակրոյ քանի մը կաթսայ կամ պնակ միայն գտնուի-
լը մեծ բաղդ է , քանի մը հազար դահեկանի դաշնակ
մնտուելու կ'ելլէ : Ասանկ անտեղի դաստիարակութեան
թէ և արդէն իսկ հոտերն ելած են , բայց ինչ ընել-
նիս հասկնալու համար դեռ սպասելու ենք՝ որ մեր
ազգային ընտանիքը բոլորովին դժոխք դառնայ :

Այսչափս բաւական կը համարիմք , որովհետև Գ. . .
դէպէտ շատնց ՚ի վեր կայ .
և կը հրաւիրեմք մեք ալ քրիստոնեայ ընտանիքները՝
որ Ֆէնէլոնի այս անմահ գիրքը ուշադրութեամբ կար-
դան , փոխանակ այն զաղիւր վիպասանութեանց՝ որոց
բարոյական մ'աւանդելու ճանապարհը այնչափ վշալից
է՝ վատ սիրահարութեան նկարագիրներով՝ այնպէս որ
այսօր աղջիկներուն ո՛չ միայն բարոյականը կը խախտի ,
այլ և Ֆիզիզականը , և մինչև իսկ տարածամ մահեր
կը պատահին :

Ը Ն Տ Ա Ն Ի Ք

Ընտանեաց երջանկութեան խարխիսներն են կրօնքըն, աշխատութիւն, հրահանգ և ծնողաց իրարու հետ ունեցած կատարեալ համաձայնութիւն: Ահա այս նիւթոց վրայ է որ պիտի խօսիմք մենք ալ:

Ա.

Կ Ր Օ Ն Ք

ԸՆՏԱՆԻՔԻ ՄԸ ԱՌԱՋԻՆ ԿՍՆՈՆԵ Է ԿՐՕՆՔԸ .

ՍՈՒՏ ԳԻՏՈՒԹԵԱՆՅ ԱՌՄԻԿՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

ԽՍՐՈՒԵԼՈՒ ՉԵՆ .

Կրօնքն է՝ որ ամեն ընկերութեանց մէջ հաստատուն կանոններ և պարտքեր կը սահմանէ, նա՛ մանաւանդ կրօնքն է որ պիտի առաջնորդէ ընտանեաց, Եզրպատօի, Յունաստանի և Հռովմայ օրէնադիրներէն աւելի լաւ կը տնօրինէ մեր կրօնքը առն և կնոջ, որդւոց իրենց ծնողաց, եղբարց և քերց իրարու հետ ունենալիք յարաբերութեանց կանոնները: Աստուած աւետարանը մեզի առած է իբրև անփոփոխ օրինադիրք ընտանի կենաց՝ յորում աւելի արդարութիւն, դիւրութիւն և քաղցրութիւն կայ, քան իբմէ յառաջ երեցած օրէնադրութեանց մէջ. Աւետարանի օրինաց պէտք է յարմարցունեն իրենց կեանքը ամէն ընտանիքներ:

Վա՛յ անոր՝ որ թողլով Աստուծոյ օրէնքը օտար օրէնքներու մէջ կ'երթայ կը վնասուէ իրեն կանոնը: Մարդկային օրէնքներն երբոր յօդուած առ յօդուած արձագանք են Աստուծոյ օրինաց՝ մեր յարգանաց և հընազանդութեան արժանի են: Բայց երբ այլապէ կը վարդապետեն, պէտք չէ բնաւ ընդունիլ:

Կուսակցութիւններ կան աշխարհի վրայ և առ ժամայն երեցած գիտնական կարծիքներ՝ որ կրօնքի դէմ առարկութիւններ կը հանեն, զորոնք լսելով միամիտ քրիստոնեայ ընտանիքներ կը խռովին:

Ընտանիքներն այս սեսակ յարձակմանց դէմ զիրենք պահպանելու համար սա առաջարկութիւնները միաքառնելը բաւական է: Նախ՝ թէ ի՞նչ արժանիք ունին անձնապէս այս անհաւատ մատենագիրները, երկրորդ թէ ի՞նչ բանի մէջ կը հակառակին մեր հաւատքին. առաջին հարցման կտրուկ պատասխանն այս է, թէ այնպիսիները բնաւ անձնական արժանիք չ'ունին:

Դրութեամբ հաւատքի թշնամիները հարկաւ թըշնամի աջօք կը նային հաւատքի վրայ, որոնց գրեթէ բոլորն ալ թեթեամիտ, հպարտ, սնապարծ, և անբարոյական մարդիկ են. անոր համար է որ կրօնքի դէմ կը յարձակին: Եւ եթէ իրենց գրութիւնները երբեմն ազդու կրնան ըլլալ, պատճառն ալ այն է որ ընթերցողք հեղինակին բուն արժէքը բողբոլովն չեն գիտեր: Եւ մէկ մ'ալ որ այն անհաւատները իրենց գործակից կ'առնեն այնպիսի մարդիկներ՝ որք հակառակ քրիստոնէական բարուց սոսկալի շահասէրներ են, այնպիսի մարդիկներ՝ որ կրօնից սանձին չեն դիմանար, անհանգիստ կ'ըլլան այն արդար և ճշմարիտ սղառնալիքներէն՝ զորս տէրն մեր Յիսուս Ֆրիստոս աւետարանի մէջ իւր պատուիրանը չը պահողներուն դէմ հրատարակեց:

Ո՛հ , թէ որ այս անհաւատները , առաքինի , խոհեմ և հաւատարիմ մարդոց հետ վարուէին , թերևս քիչ մը մեր զարմանքը գրաւէին և տեղի տային քննելու թէ ի՞նչ կրնար ըլլալ արդեօք իրենց թշնամանաց ներքին շարժառիթը : Բայց որովհետև չէ այնպէս , ուստի բացէն յայտնի է թէ անոր համար կ'ուրանան կրօնքը , զի կը դատապարտէ զիրենք , և ևս ելի ճիշդը խօսելով , որովհետև պիտի պատժէ զիրենք :

Այս ըսածներուս մէջ բացառութիւններ կրնան ըլլալ : Չոր օրինակ , երբեմն այնպիսիներ ալ կրնան գրտնուիլ որոց վարքը գէթ արտաքուստ անսողիւտ է : Դիցուք թէ իրօք այնպէս ըլլայ , բայց ասոնց ալ եթէ ամբարշտութեան պատճառը իրենց մոլութիւնները չեն , հարկաւ նախապաշարմամբ անհաւատ մնացած են կամ ծնողքներէն , կամ կուսակցութենէ , կամ անհաւատ ընկերներէ սովորելով :

Այսպիսի մէկն ալ ո՛չ ապաքէն կրօնից և անոր հաւատալեաց , պատմութեան , ապացուցից և անհերքելի վկայութեանց բոլորովին տգէտ ըլլալուն համար անհաւատ մնացած է :

Եթէ մենք մեզի փնտռենք՝ թէ ի՞նչ է պատճառը որ լրագիրներէն , հանդէսներէն և գիրք գրողներէն ու մանք խէնթու խելառ յարձակումներ կ'ընեն կրօնքի առարկայից դէմ և մօտէն դիտեմք՝ պիտի տեսնեմք՝ որ ասոնց բոլորին ալ պատճառը երկու էական մոլութիւններ են . մէկ մը յայտնեալ վարդապետութիւնը սխալ մեկնել , մէկ մ'ալ պատմական եզելութիւն և դիտութեան մը եզրակացութիւն սխալ նկատել : Ասիկա թէ՛ կրօնքն արհամարհել է և թէ՛ բանադատութիւն և ուսմունքը թշնամանել : Այսպիսիները թէ՛ գէշ աստուածաբան և թէ՛ անձնապարծ գիտուններ են :

Ո՛ր ծնողք , մի՛ յուզուիք և մի՛ խռովիք այն առար-

կութիւններէն՝ զորս կրօնի թշնամիները ձեր դէմ կը հանեն . ճշմարտութիւնն և արդարութիւնն այս մեղաց և փորձութեանց աշխարհի վրայ միշտ հակառակութեանց ենթակայ են , Հին օրինաց մարդարէները հալածուեցան , Յիսուս ֆրիստոս խաչուեցաւ , նախկին քրիստոնեայք չարչարանօք մեռան , Առաքեալն ըսած է՝ առ Տիմոթէոս սիրելի աշակերտն իւր գրած թղթոյն մէջ թէ անոնք՝ որ 'ի ֆրիստոս կ'ուզեն ապրիլ , պիտի հալածուին և չարչարուին միշտ . " Եւ անհետէն " որ կառնէն աստուածաշարժմամբ կեալ 'ի ֆրիստոս Յիսուս , 'ի հալածանէն կայէն " : (Բ . Տիմ . Գլ . Գ . 12) :

Երբեմն անհաւատ մատենագիրները համբաւ կը վաստկին , ուրիշներն ալ զանոնք խիստ գիտուն կը հրուշակեն : Անհաւատ մատենագրաց համբաւ վաստկելուն պատճառը , ռամկին՝ կրօնի եւ դիտութեան մէջ տգէտ ըլլալն է : Ո՛վ որ իր չը գիտցած բանին վրայ անգամահամարձակ խօսի՝ տգէտը զանիկայ խիստ գիտուն կը կարծէ , Գիտունը , որչափ ալ անուանական ըլլայ , կրնայ բոլորովին բան չգիտցողին աչքը շլացունել : Տգէտը միշտ խարուելու տրամագիր է :

Կրօնի դէմ եղած փիլիսոփայական և դիտական վէճերուն մէջ՝ միշտ ամօթահար եղած են կրօնի թշնամիները : Վօլթեր՝ որ գիտուն ձեւանալ կ'ուզէր , և այնպէս սլ կը կարծուէր , և ուրիշ անհաւատ հնադէտք , բանասէրք և քննադատք՝ կրօնի դէմ զանազան գրքեր և յօդուածներ հրատարակած և ըսած են՝ որ կրօնքն ու դիտութիւնը իրարու հետ չեն համաձայնիր : Ո՛րչափ սխալ ենթադրութիւն . քրիստոնէական կրօնքն և ճշմարիտ գիտութիւնը 'ի կատարեալ ներդաշնակութեան են իրարու հետ : Անհաւատը միշտ առիթ՝ կը փնտռէ իւր սուտ և սխալ գիտութեամբը կրօնի դէմ յարձակելու : Օրինակի համար , դիցուք թէ հին յիշա-

տակարան մը գտնուի . անհաւատը առանց զայն լաւ մը քննելու՝ անմիջապէս կը վճռէ՝ թէ այն գտնուած յիշատակարանը վաւերական է , և եթէ ձեռքէն գայ՝ անով սուրբ Գրոց ժամանակագրութիւնը և պատմութիւնը սխալ պիտի ցուցնէ :

Անհաւատները ուամկին աչքին մէկ մէկ փրկիստփայ կ'երևին . բայց երբ անոնց բոլոր գրածները ճշմարիտ քննադատութեան բովէն անցունենք՝ իսկոյն պիտի տեսնեմք՝ թէ սխալ և մտացածին են : Քրիստոնէական կրօնքը միշտ հաստատուն կը մնայ , և իւր թըշնամոյն՝ զինքը վիրաւորելու նպատակաւ իր վրայ յարձակած նետերը իրեն չեն հասնիր :

Քրիստոնէական կրօնքին և ճշմարիտ գիտութեան հետևող ողջամիտ մարդիկ պէտք է՝ որ միշտ անհաւատից գիտութիւնը տապալելու ջանան : Արդարև , ծանր դործ է ասիկայ , բայց ասով քրիստոնէական հաւատոյ հիմանց հաստատութիւնը ցցուցած կ'ըլլան ուրիշներուն :

Սա՛ ալ ճշմարիտ է՝ թէ հաւատքին հաստատութիւնը՝ իւր դէմ հանուած առարկութիւններուն անհիմն ըլլալը ապացուցուելէն կախումն չունի : Մենք ամենեւին սուտ գիտնոց քրիստոնէական կրօնից դէմ ժայթքած հայհոյութեանց և թշնամանաց կարևորութիւն չենք տար . քաջ և երևելի աստուածաբանից կը թողումք՝ անհաւատից քրիստոնէական կրօնից դէմ հանած առարկութիւններն ոչնչացուներ ճշմարիտ գիտութեան զէնքերով :

Մեր հաւատքն աւելի իւր վարդապետութեան և իւր բարոյականին գերազանցութեամբը , Յիսուսի Քրիստոսի ծննդեամբը , կեանքովը , մահուամբն և եկեղեցւոյ պատուիրանաց պահպանութեամբը , իւր խորհրդոց զօրաւոր և կենդանարար արդեամբքը կ'ապացուցուի քան ընդունայն վէճերով , որք աւելի բողոքականաց և

քրիստոնէական եկեղեցիէն բաժնուող ուրիշ աղանդաւորաց յատուկ են :

Հա՛րք և մա՛րք , երբ ձեր հաւատքին ճշմարտութիւնն ապացուցանել ուղէք , Յիսուսի Քրիստոսի ըսած խօսքը մտքերնիդ բերէ՛ք . Յարգեցէ՛ք կրօնքը՝ որուն բարերար և գերազանց արդիւքները սխալուած են ամենուրեք՝ ուր որ քարոզուած և ընդունուած է :

Ահե՛նայն ծառ Բարե՛ պտուղ Բարի առնէ , ծառ չար՝ պտուղ չար առնէ . ոչ կարէ ծառ Բարե՛ պտուղ չար առնել , և ոչ ծառ չար՝ պտուղ Բարի առնել :

կրօնքի մասին՝ տգիտութիւնը չենք արդարացունելու ընդ հակառակն կը փափագիմք որ ամեն քրիստոնեայ՝ Քրիստոնէութեան բարի և աստուածային ըլլալուն գիտութեամբ համոզուի . թող ընտանիքները միշտ ընթեռնուն չին և Նոր կտակարաններն և եկեղեցւոյ վարդապետութեանց մեկնութեան գրքերը : Փոքրիկ աղջկայոց քրիստոնէական վարդապետութիւն սորվեցունելը խիստ օգտակար է , սակայն այն ուսման ճշմարտութիւնը լաւ հասկնալու և անոր խորը թափանցելու համար՝ պէտք է որ տղայք քիչ մը հասակնին առնելէ յետոյ՝ ձեռքերնին կրօնական գրքեր տրուին կարդալու համար ինչպէս Ս . Գրիգոր Լուսաւորչի Յաճախապատում գիրքը , Ս . Ներսէս Շնորհալի Հայրապետին ընդհանրականը , և ուրիշ գրքեր , որոց մէջ մեր եկեղեցւոյ վարդապետութիւնները խիստ լաւ բացատրուած են :

Երբէք չեմք խաբուիր բողոքականաց և ուրիշ աղանդաւորներուն հնարած նոր վարդապետութիւններէն՝ զորս մեր ազգայիններէն շատերը տգիտութեամբ ճշմարիտ կը համարին : Այս նոր վարդապետութիւնները խիստ խախուտ են , և ճշմարտութեան ամենափոքրիկ նշան մ'անդամ վրանին չը նշմարուիր :

Վիպագիրք և ուրիշ տգէտ , չըսենք անբարոյական ,

մատենագիրք իբր թէ ընտանեաց մէջ բարեկարգու-
թիւն մտցունել և անոնց աւելի հաստատութիւն տալ
կուղեն, և իրենց այս նպատակին հասնելու համար՝
ամէն ջանք ՚ի գործ կը դնեն. ողորմելիները չեն դիտեր՝
թէ իրենց բոլոր գրածներն և խօսածներն ընտանիքները
կը խռովեն և անոնց մէջ մէջ թերահաւատութիւն կը
սերմանեն : Այս հեղինակներն ընտանեկան խաղաղու-
թիւնը տակն ու վրայ կ'ընեն՝ ընտանեաց մէջ սուտ հա-
ւասարութեան սկզբունքներ քարոզելով, սկզբունքներ՝
որոնք եթէ ճշդիւ գործադրուին՝ անտարակոյս՝ ընտանիք-
ները կորստեան անդունդին կը մօտենան : Մերթ կնոջ
ազատութեան վրայ կը խօսին և մերթ աղայոց՝ տանը
մէջ լիազօր իշխանութիւն ունենալ կը քարոզեն : Այս
վիպագիրք և մատենագիրք հայրութեան նուիրական
իրաւունքն և ընտանեաց գլխաւորին աստուածային
իշխանութիւնը կ'ուրանան, և եթէ ասոնց խօսքին նա-
յինք՝ հայրն ընտանեաց մէջ իւր որդւոյն որպէս թէ ընկե-
րըն և բարեկամն ըլլալու է : Ասոնց ըսածին նայելով՝ ա-
մուսնական միութիւնը կրնայ ըստ հաճոյս լուծուիլ կամ
կապուիլ, ամուսնական կապերը կրնան խզուիլ կամ կա-
պուիլ երկու ամուսնոց հաճոյիցը համեմատ :

Այս յիմար վարդապետութիւններն էւրօպիոյ մէջ
տարածուած և դառն ու աղետալի արդիւնքներ յա-
ռաջ բերած են և կը բերեն միշտ :

Մեր ազգին մէջէն խիստ քիչերն այս յիմար վար-
դապետութեանց սիրահարած, կուղեն՝ որ իրենց աղ-
դին մէջ ալ ընդհանրանան : Սրդարև, կը ցաւիմք է-
րենց տկար խելքին վրայ :

Փնօք Աստուծոյ, այս յիմար վարդապետութիւն-
ները մեր բարեպաշտ և կրօնասէր ընտանեաց մէջ
մուտ գտած չեն, և կը փափաքիմք՝ որ շարունակ այս-
պէս ըլլայ : Եւ յիրաւի, եթէ այս յիմար վարդապետու-

թիւնները դժբաղդարար ընտանիքի մը մէջ մտնեն,
այլ ևս այն ընտանեաց մէջ ընտանեկան երջանկութիւն
և ամուսնական հաւատարմութիւն չը մնար : Այս յի-
մար վարդապետութիւնները քարոզող բանասէրք և
խմբագիրք՝ բնաւ երջանիկ և պատուաւոր ընտանիք-
ները չեն կրնար խռովել : Գիտցէ՛ք՝ որ ընտանեաց խա-
ղաղութիւնը վրդովելու ջանացող այս մարդիկները կամ
կին և ընտանիք չունին, կամ անբարոյական և կամ
տղէտ են, և ասոր համար կ'ուզեն համեստ ընտանեաց
մէջ խռովութիւն ձգել :

Կրօնքն իբրև ընտանեաց օրէնք ընդունելով՝ պէտք
է հրաժարին ընտանիք աւետարանի սկզբանց հակա-
ռակ վարուելէ, պէտք է որ աւետարանի վրայ կատա-
րեալ հաւատք ունենան և իրենց բոլոր գործերն անոր
յարմարցունեն :

Այս ժամանակիս մարդոց մեծ դժբաղդութիւնը ոչ
թէ բոլորովին անկրօն ըլլալը, ալ քրիստոնէական կը-
րօնին վրայ դաղափար չունենալն է : Կը կարծեն՝ թէ
քրիստոնէական կրօնից և իւր պատուիրանաց և վար-
դապետութեանց վրայ բնաւ դաղափար չունենալը նե-
նելի է : Այս կերպով քրիստոնէայ եղած չենք ըլլար .
այս անուան արժանի ըլլալու համար՝ պէտք է որ ըն-
տանիքները կատարելապէս և հաւատարմարար խոս-
տովանին եկեղեցւոյ վարդապետութիւններն, և աւե-
տարանին հնազանդին իբրև իրենց առաջին օրինաց,
առանց երկիւղի և առանց տարակուսի : Քրիստոնէայ
ընտանիքները պէտք է ջերմ նախանձախնդիր ըլլան
ուղղափառ հաւատոյ հաստատուն մնալուն, պէտք է
որ եկեղեցւոյ վարդապետութիւնները պաշտպանեն, և
անոր հակառակ բան մը ծագած ատեն՝ վշտա-
նան : Պէտք է որ յայտնի համարձակ դաւանենք մեր
հաւատքը : Այսպէս ըրին մեր հայրերը, մենք ալ անոնց

օրինակին հետևելնք :

Բ.

ԸՆՏԱՆԵԱՅ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

Ա. Թէ ի՛նչ բանի վրայ կը կայանայ ընտանեաց աշխատութիւնը

Ընտանեաց երկրորդ խարխիսն աշխատութիւնն է . կրօնքի հաւատացող ընտանիքն պէտք է աշխատասէր ալ ըլլայ : Աստուած բոլոր մարդոց վրայ աշխատութեան օրէնքը դրած է : Աստուած զմեզ կը պահպանէ և մեզի կեանք կուտայ՝ երբ մենք աշխատիմք . Մեր նախածնողաց անկմանէն յետոյ Աստուած աշխատութիւնը սահմանեց իբրև փրկաւէտ քաւութիւն , և Յիսուս Քրիստոս, մեր աստուածային օրինակը , իւր բոլոր կեանքը աշխատութեամբ անցուց , նախ իւր ծնողաց քով , և յետոյ ժողովրդեան մէջ՝ իւր վարդապետութիւնը քարոզած ատեն :

Աստուած մեզի բնական զօրութիւն , բարոյական և իմացական կարողութիւն տալով՝ աշխատութեան ըսքանչելի գործիքներ պարգևած է մեզի , զորոնք իւր փառաց , մեր ընտանեաց և մեր հայրենեաց համար պէտք է գործածենք :

Յիսուսի Քրիստոսի հետևեալ խօսքերը յիշենք .

« Եւ զժամայր անպէտան հանէ՛ր ՚ի խոտաբն որբոսին , անք է շէջէ ԼԷ և իրճէ արամանց » :

« Ամենայն շատ՝ որ ոչ ասուն պատու քարէ , հարանի , և ՚ի հարս արխանի » :

« Ահա երեք տէր են՝ յորմէ հետեւ բա՛ ինդրել պոռու ՚ի Թէննաօգր , և ոչ գրանեմ . արդ իորեմ՝ դրա , ընդէ՞ր և շէրիճր Խափանէ » :

Աշխատութիւնը ամէն մարդոց համար հարկաւոր է : Ըսենք թէ մէկն իւր միւս բոլոր պարտքերը անթերի կը կատարէ , բայց աշխատութեան պարտքն առ ուտըն կը կոխէ . այս պատուիրանազանցութիւնն իրեն համար յաւիտենական դատապարտութեան պատճառ կ'ըլլայ : Գատարկութիւնն ոչ միայն իբրև պատուիրանազանցութիւն մեղք է , այլ և մայր է ամենայն մարդութեանց . դատարկութենէ կը ծնանին ձանձրոյթ , կռիւններն և զժտութիւնները . դատարկութիւնը զմարդ անանկութեան , նենգութեանց , զեղիսութեանց , անառակութեանց և վտանգաւոր ընկերութեանց մէջ կը ձգէ :

Աստուած թէ՛ հարուստին և թէ՛ աղքատին յաւիտենական վարձատրութեան պայմանն աշխատութիւնը դրած է :

Ընկերութիւն մը չըկայ՝ յորում իւրաքանչիւց անհատի համար առանձին զբաղմունքներ սահմանուած չ'ըլլան : Եթէ հողային կալուածք ունեցողներ են՝ իրենց գետիններուն հող պիտի տանին , և պիտի նային՝ թէ լաւ մշակուած են , կամ կրնան աւելի լաւնալ , աւելի արգասաւոր ըլլալ . միշտ իրենց կալուածոց հաշիւները աղէկ պիտի տեսնեն . Եթէ բաւական հսկողութիւն չընեն՝ շատ կը կորսնցունեն , և իրենց ժառանգորդներուն ալ մեծապէս կը վնասեն :

Ընտանեաց գլխաւորները շատ պարտքեր ունին կատարելիք : Ամէն օր նորանոր զբաղմունքներ կ'ունենան : Թէ որ սպասաւորներու տէր ըլլալով ամէն բան անոնց յանձնեն՝ գործերն տեղն ՚ի տեղը չ'են կատարուիր :

Մեծատանց համար դբաղմունք չը պակսիր, բայց խիստ շատ անգամ անգործ կը կենան:

Ընտանեաց մայրն իւր յատուկ պարտքերն ունի, ինչպէս նաև մանչ և աղջիկ տղաքները. իրենց օրական դբաղմունքներէն և ոչ մէկ ատեն աղատ կրնան ճանչցուիլ: Ընտանեկան կենաց ամենէն նուաաստ և ստորին անդամներն իրենց կարևորութիւնն ունին, կրնան օգտակար գործի մը ծառայել: Անգործ մարդն որ և է ծառայութեան յարմար չըլլար. բան մը կայ՝ զոր ամէն ոք պէտք է սորվի, այն է, անգործ չը մնալ:

Աշխատութեան պարտքերն անթերի կատարելու համար պէտք է՝ օրը, առաւօտուն անկողնէն ելնելու ժամը, աղօթքի և ընթերցման ժամանակն և վայրկեանը կանոնաւորել: Ըստ իս, շատ լաւ կ'ըլլայ որ աշխատութեան մէջ ամենէն ծանր գործը՝ ամենէն առաջ, սյսինքն անմիջապէս աղօթքէն վերը կատարուի:

Շատ մարդիկ աշխատութեան օրէնքը սխալ կը հասկընան: Ջրօսանքը բուն աշխատութեան հետ կը շփոթեն. պարտէզներու մէջ ծաղիկ տնկել և երաժշտութիւն ընել՝ միայն պարտիզպանի և երաժշտի յատուկ աշխատութիւն է, իսկ սյլոց համար զրօսանք և ժամանակ անցունել է և ոչ ուրիշ բան: Աշխատութիւնը մեծ ջանք և յոգնութիւն կը պահանջէ. բուն աշխատութիւնը իւր ճշմարտ օգտակարութիւնն ունի: Որսորդութիւն, ձկնորսութիւն և կամ ուրիշ ասոնց նման չընչին բաներ աշխատութիւն չեն, ասոնք ժամանակ անցունելու և հանգստանալու կերպեր են, որոնք աւելի տկար և խեղ մարդոց վայելուչ են. առողջ և զօրաւոր մարդն եթէ խիղճ ունի՝ աշխատութեան պարտաւորութիւնն սյսպէսով կատարած չըլլար:

Աշխատութիւնը պէտք է որ օգտակար ըլլայ և բարոյական կամ նիւթական շահ բերէ: Ընտանեաց հայրը

թող աշխատի իւր որդւոց համար, զի իւր ամենէն քաղցր մխիթարութիւնն և իւր աշխատութեանց լաւագոյն հատուցումը՝ իւր սիրելի որդւոց համար պատրաստած երջանկութեան և բարեկեցութեան զգացման մէջ պիտի գտնէ: Հայրն ալ աւելի մեծ բարիք ընելու նպատակաւ պէտք է՝ որ իւր որդւոց կատարեալ դաստիարակութիւն տայ, անոնց ապագայ վիճակին բարի պայմաններն աւելի ապահովէ և ընտանեաց պատիւը բարձրացունէ:

Բազմազաւակ ընտանեաց ամենէն մեծ օգուտներէն մէկն ալ այն է՝ որ հօր և մօր իրենց տղայքը խնամելու հոգը՝ աշխատութեան զօրաւոր խթան մը կ'ըլլայ:

Երբէք չեմք ըսեր՝ թէ ծնողք պարտաւորուած են իրենց որդւոց հարստութիւն թողուլ: Միայն թէ զանոնք քրիստոնէաբար կրթել պարտքերնին է և կրցածնուն չափ ալ նոցա նիւթական օգուտին աշխատիլ:

Ծնողք իրենց պարտքը բոլորովին կատարած կ'ըլլան՝ եթէ իրենց զաւակաց լաւ դաստիարակութիւն տուած և աշխատութեան միջոցներ պատրաստած ըլլան, թէ՛ Աստուած՝ և թէ՛ մարդկային ընկերութիւնն ասկէ աւելի բան չեն պահանջեր իրենցմէ:

Գրիստոնէայ ընտանեաց հօր միակ նպատակն պիտի ըլլայ իւր որդիքը քրիստոնէաբար կրթել, և անոնց ոչ թէ հարստութիւն պատրաստել, այլ աշխատութեան ճաշակը ներշնչել և աշխատութեան միջոցները հոգալ: Պիտի ջանայ որ իւր որդիքը՝ ապագային աշխատութեան հարկէն աղատ չ'ըլլան:

Որդւոց համար ծանր և աններելի յանցանք է իրենց հօր թողած հարստութեան պատճառաւ աշխատութեան օրէնքէն ինքզինքնին աղատ ճանչնալ: Դժբաղդաբար, այս խեղով տղաքներ շատ կը գտնուին, ուրոնք իրենց հայրենական ժառանգութեան վրայ վրս

տասերով՝ բնաւ չեն աշխատիր, այլ միշտ ինքզինքնին կերուխումի կուտան, և պժգալի ու ամօթալի դործոց մէջ կը նետուին. բայց վերջապէս օր մ'ալ աղքատութիւնն և թշուառութիւնն իրենց տուներուն դրանց կը զարնեն, իրենք ալ անմիջապէս դռները բանալու կ'ստիպուին:

Չեւք բերուած հարստութիւնը միայն աշխատութեամբ և խնայողութեամբ կը պահուի:

Բ. Ընտրութիւն վիճակի

Աշխատութեան պարտքն ընդհանրապէս իբրև սկզբունք ընդունուած է. բայց անդդուչութեամբ նոյն ըսկզբունքը լաւ չը գործադրուիր: Ծնողք՝ իրենց որդւոց ապագայ վիճակն ապահովելու հող չեն տանիր միշտ, շատ անգամ բաւական կը համարին իրենց որդիքը դըպրոց դրկել, առանց անոնց դպրոցէն ելնելէ յետոյ ունենալիք վիճակին նախապատրաստութիւնները տեսնելու. Տղայն իւր մանկութեան կամ դպրոցական վիճակին մէջ նախատեսութիւն չունի, չը գիտէր՝ թէ իւր գլխաւոր ջանքերն աւելի ի՞նչ բանի վրայ ըլլալու են:

Եթէ տղայն դպրոցին մէջ քիչ աշխատի, պատճառըն այն է որ առաջուց իրեն իմացուցած չեն՝ թէ ի՞նչ նպատակի հասնելու պիտի ջանայ: Ուսմունքն աւարտելով դպրոցէն կ'ելնէ՝ առանց գիտնալու՝ թէ իւր սորվածները զինքն ո՞ւր պիտի առաջնորդեն. շատ անգամ գիտնալով իւր ասպարէզը կամ վիճակը կ'ընտրէ: Բայց կը պատահի որ բաղդը չը յաջողիր, այն ատեն երիտասարդն իւր առաջին վիճակը կը ձգէ: Սակայն ժամանակը կ'անցնի կ'երթայ, տղայն չը կրնար նոր վի-

ճակ մ'ընտրել, զանազան հնարքներ կը մտածէ աշխատութեան, և անօգուտ դատումներով ինքզինք կը խաբէ: Դատարկութիւնը քիչ քիչ երիտասարդին վրայ կ'ուգայ, և թէ՛ ինքն իրեն և թէ՛ ընկերութեան անօգտակար կ'ըլլայ:

Վնասակար է բողբոլին տղային թողուլ իւր վիճակին ընտրութիւնը. խելացի և հեռատես ծնողք իրենց որդւոց վիճակի ընտրութեան դժուարալոյծ խնդրոյն վրայ ընդ երկար կը խորհին, և զաւակներնուն բնաւորութեան և յօժարութեանցը համեմատ այս կամ այն վիճակը յարմար կը դատեն անոնց:

Ծնողք երբեմն չափազանց 'անձնատիրութեամբ զաւակնին բարձր վիճակի հասցունել կուզեն. թերևս տղային զօրութիւնները չը բաւեն՝ հօրը ուղած վիճակին բարձրանալու: Ծնողք խելացութիւն ըրած կ'ըլլան՝ եթէ իրենց որդւոց համար ամենէն ապահով քան թէ ամենէն փառաւոր ու շքեղ վիճակն ընտրեն:

Նա՛ մանաւանդ հայրն իւր որդւոյն համար այնպիսի վիճակ մ'ընտրէ՝ յորում կարենայ առաքինութիւն գործել: Եթէ ծնողք իրենց որդւոց երջանկութիւնը կ'ուզեն՝ պէտք չէ որ զանոնք շուտով և դիւրաւ հարըստացնելու միջոցներուն վրայ խորհին. թո՛ղ այսպիսի վրտանգաւոր բաղձանքներէ հեռանան: Բայց ի՞նչ ըսեմ, այսօր շատ ծնողք ասանկ երազներ կը տեսնեն իրենց որդւոց համար, և երբեմն այն երազներն ալ կ'իրականանան: Սակայն դիպուածով հարստացող որդիք չեն կրնար երկայն ատեն իրենց հարստութիւնը վայելել:

Կան վիճակներ՝ որոց լաւագոյն պայմաններն աշխատութիւնն և համեստութիւնն են. այս վիճակներուն շահերը քիչ՝ բայց ապահով են: Քրիստոնեայ ծնողք պարտին իրենց որդւոց համար այսպիսի վիճակներն ընտրել:

Գ. Եկեղեցական վիճակ.

Այս նիւթակրօն դարուն մէջ այն ասպարէզները նախամեծար կը համարինք՝ յորում միայն դրամ կրնանք վաստակիլ, և բանի տեղ չենք դներ այն վիճակները՝ յորըս դրամական շահ խիստ քիչ կայ, բայց պատիւ և արժանիք՝ շատ : Երիտասարդն ամեն բանէ յառաջ պէտք է Աստուծոյ, Եկեղեցւոյ և Հայրենեաց ծառայելու փափաքի : Միշտ վեհ գործօնէութեան ասպարէզը բաց պիտի ըլլայ իւր առջև՝ եթէ իւր կոչումը ճանչնայ և անոր հաւատարիմ գտնուի, և միանգամայն անձնանուէր, աշխատասէր և առաքինի ըլլայ :

Անձնուիրութեան և պատուոյ ասպարէզներէն աւելնէն գլխաւորն եկեղեցական վիճակն է :

Գիտեմ որ ընտանիքները նախապաշարմունքով, թեթևամտութեամբ, անխելքութեամբ, վատութեամբ և հպարտութեամբ կ'արդելուն շատ երիտասարդներ՝ որ այս սուրբ կոչումը յանձն չառնուն : Երիտասարդք դժուարաւ յանձն կ'առնուն այս սուրբ պատերազմին մէջ զինուորիլը, որովհետև զոհողութիւն, խստամբերութիւն, խոնարհութիւն և առանձնակեցութիւն կը պահանջէ : Սրդի դարս եկեղեցականութիւնը ասպարէտութեամբ և արհամարհանօք կը վարձատրէ, եկեղեցականութիւնը՝ որ միայնակ կը կռուի աշխարհի մութեանց և հրապոյրներուն դէմ՝ իւր լքեալ և խեղճ վիճակին մէջ :

Չը խաբուինք ստուգիւ, եկեղեցական վիճակը աշխարհի մոլութեանց դէմ կռուելուն համար է՝ որ ուրիշ ամեն ասպարէզներէն աւելի արժանիք ունի :

Դիւցազնական անձնուիրութիւններ հազուադիւտ են, պէտք է անոնց առջև դլուխ ծռել, և երբ այն անձնուիրութիւնները հրապարակ ենեն՝ պէտք է անոնց վրայ զարմանալ և խրախուսել, և սակայն ընտանեաց մեծ մասը զանոնք կ'արհամարհէ : Մասնաւորապէս եկեղեցական կոչումէն կ'երկնչին, անոր բողբոջը կտրելու կ'աշխատին :

Ո՛հ, եթէ ծնողք քննէին՝ որ տղայոց բնութիւնըն ու յօժարութիւնները հակառակ չ'ըլլան իրենց ցանկացած սուրբ վիճակին, եթէ պահանջէին՝ որ ժամանակ տրուի՝ այսպիսի կարևոր գործոյ մը վրայ պէտք եղած խորհրդածութիւններն ընելու, ծնողաց արդելքին պատճառը պիտի հասկնայինք և պիտի գովէինք ալ նոցա այս խոհական զգուշութիւնը : Սակայն ծնողք հպարտութեամբ և անձնասիրութեամբ իրենց որդւոց փափաքն ու եռանդը կ'արհամարհեն շատ անգամ, և ուրիշ փառաւոր ապագայներ կը խոստանան անոնց, Շատ կը ցաւին երբ կը տեսնեն որ տղայն զփրիստոս ամեն բանէ աւելի նախամեծար կը համարի, անոր համար իւր անձն նուիրելու կը բաղձայ : մինչդեռ ընդ հակառակն ուրախանալ պէտք էր : Եւ երբեմն ծաղրելու, ծիծաղելու և մինչև անգամ հալածելու աստիճան չափազանց բաներ կ'ընեն :

Ծնողք այսպէս վարուելով սոսկալի պատասխանատուութեան տակ կ'իյնան, կը թշնամանեն զփրկին մեր Գրիստոս՝ որ իւր երկրաւոր կենաց մէջ հոգւոց փրկութեան համար իրեն հետ աշխատող եօթանասուն և և երկու աշակերտ և տասներկու առաքեալ ընտրելէ ետքը՝ նոյն կոչումը կը շարունակէ դարերէ ՚ի վեր : Բայց հիմակուան կոչումը առաքելոց կոչման պէս ուղղակի եւ զգալի չ'ըլլալէն չըհետեւիր բնաւ թէ անըստոյգ եւ սուտ է :

Այնպիսի ժամանակի մէջ կ'ապրինք՝ յորում Գրիստոս ամեն կողմանէ մատնուած վերստին 'ի Գողգոթա կ'երնէ, այնպիսի ժամանակի մը մէջ, կ'ըսեմ, յորում քահանայական պաշտօնը նախատանօք և թնամանօք կը ծաղրուի . սակայն Աստուծոյ ներքին շնորհաց ազդեցութեամբն է որ շատ երիտասարդներ իրենց քսան տարուան հասակին մէջ կը փափաքին կրօնաւորական վիճակն ընդունիլ, շատ ընտանեաց տէր մարդիկ քահանայական սև պճղնաւորը հաղներլու կը խոնարհին և Գրիստոսի սա խօսքին կը հետևին՝ որ խոտիւ կը վիրաւորէ աշխարհասիրաց ականջները . « Եթէ ոչ Կոթի զհետ Ի՞ գալ, ոչ քոյն զանձն և ոչ ցէ զԿոթի Ի՞ ք և Եթէ ոչ զԿոթի Ի՞ ք » :

Աղէկ հասկնալու համար՝ թէ վշտակիր և խստամբեր կենաց մէջ ալ այնպիսի մխիթարութիւններ և ներքին ուրախութիւններ կան՝ որ աշխարհի և զգայարանաց հաճոյքներէն աւելի քաղցր են, սէտք է Աստուծմէ իրապէս ներշնչեալ և լուսաւորեալ ըլլալ : Գիտցէք, հարք և մարք, դուք որ սնտոի դորովով և դէշ անձնասիրութեամբ շրջեալ էք, քաջ գիտցէք՝ որ Աստուած՝ սրտի մը տօք / բեն նու իրաժ բաներնուդ հարիւրապատիկը կը հատուցանէ ձեզ բուն իսկ այս աշխարհի վրայ : Բարի մարդք արդարութեան և ճշմարտութեան պաշտպան կը կանգնի, և կ'զգայ՝ թէ աշխարհի մէջ բանի մ'օգտակար կրնայ ըլլալ, և կեանքը բարեգործութեամբ անցունել : Այսպիսի տխուր և վաղանցիկ կենաց մէջ անօգուտ օրեր անցունելը միթէ խոհական և զգօնամիտ մէկուն համար ծանր և ատելի չէ՞ :

Ամեն բանէ զլուանք և ձանձրոյթ անոնց համար է՝ որոնք օգտակար աշխատութեան հետամուտ չեն ըլլար և չնչին ու անօգուտ զբաղումներով կեանքերնին կը փճացունեն : Այս տեսակ մարդոց կեանքն անտանելի կ'ըլլայ՝ իրենց կոչման անհաւատարիմ գանուելուն

Համար :

Սուրբ Մատթէոսի աւետարանին մէջ խորհրդածութիւն մը կայ՝ որուն վրայ կ'սքանչանամ՝ ամեն անգամ որ աւետարանը կը կարդամ : Կուզեմ զայն յիշել հոս, որովհետև ըսածս կը հաստատէ : Այս խորհրդածութիւնը Յիսուսի՝ հարուստ երիտասարդին հետ ըրած խօսակցութեան կը հետևի, այն երիտասարդին՝ որ կատարելութեան և առաքելութեան ճամբուն մէջ մլտնել կ'ուզէր . « Եթէ Կոթի Կարեալ լինել, եթէ Վաճառեալ լինել, ոչ ոք և որսը աղտարաց, և ունիցի գանձս յերկնս, և ե՛լ չի՞նէ Ի՞ » : Այս խօսքերուն վրայ երիտասարդը տեսնելով՝ որ մեծ զոհողութիւններ ընել պէտք է՝ ետ քաշուեցաւ . սուրբն Մատթէոս ալ կը յաւելու . « Ե՛ք գնաց որո՞ւեալ » :

Տրամութիւնը, այսինքն, ճակտին վրայ պատած այն սև ամպը, սրտին այն թաղծութիւնը՝ որ ըզմարդ ինքն իրեն անտանելի և այլոց տաղտկալի կ'ընէ, ահա այն տրամութիւնը՝ այս տեսակ յանցանաց պատիժ է : Ե՛ք գնաց . իւր կոչման և իւր պարտուց տնհաւատարիմ մարդը գնացած ատեն՝ այն տրամութիւնը հետը կը տանի :

Աւետարանի երիտասարդն այս խղճի տաղնապէն արդեօք ե՞րբ ազատեցաւ . աւետարանը այս մասին բան մը չ'ըսէր . բայց ես կը հաւատամ որ բնաւ չաղատուեցաւ : Ներկայ կենաց մէջ հանդիստ և երջանկութիւն վայելելու համար՝ պէտք է որ մեր կոչման հաւատարիմ մնանք :

Գ. Զինուորական վիճակ .

Միտք չունիմ խօսելու հոս այն ամեն վիճակներուն վրայ՝ զորս կրնայ ընդունիլ երիտասարդ մը, և որոց

մէջ դիւրութիւն և վարձատրութիւն պիտի գտնէ միշտ՝ եթէ հասուն խորհրդածութեամբ իւր կոչումը քննած և իւր յօժարութեանց յարմարցուցած ըլլայ: Բայց կ'ուզեմ խօսիլ քիչ մը բան ալ զինուորական վիճակի վերայ:

Հայ ընտանեաց ծնողք՝ պէտք չէ որ իրենց որդիքը զինուոր գրելէ խրոչին: Զինուորական կենաց ասպարէզն՝ յորում աշխատութիւնը կատարեալ կը վարձատրուի, ուրիշ վիճակներու նման վտանգներէ ազատ է: Երիտասարդը զինուորութենէ խուսափելու իրաւացի պատճառներ չունի:

Ուրեմն կը պատուիրենք ընտանեաց և յորդոր կը կարգաւք երիտասարդաց՝ որ զինուորական ասպարէզը չ'արհամարհեն: Թո՛ղ մաքերնին դնեն՝ որ եկեղեցակա՛նութիւն և զինուորութիւն այն երկու հաստատուն առանցքներն են՝ որոց վրայ պիտի դառնայ դարերէ 'ի վեր անկեալ ազդ մը՝ եթէ վերակենդանանայ: Այս երկու վիճակներն՝ որոնց էութիւնն անձնանուիրութիւն և զոհողութիւն է, աշխարհի մեղկութեանց դիմադրելու գեղեցիկ օրինակ և լաւագոյն դասեր են: Այս երկու վիճակներն ընդունելով՝ պատիւն՝ ստակէն և անձնանուիրութիւնն՝ անձնասիրութենէ նախամեծար համարած կ'ըլլամք:

Վերջապէս սա՛ կը պատուրեմք՝ որ երիտասարդն իր յօժարութեանց և Աստուծոյ կոչման համաձայն վիճակ մ'ընտրէ:

Սակայն պէտք է համոզուիլ սա՛ գլխաւոր ճշմարտութեան՝ թէ առաքինութիւն գործելու ամենէն անյարմար կեանքը՝ քիչ զբաղմունք ունեցող կեանքն է: Աշխատութիւնը ո՛չ միայն բարեկեցութեան, այլ նաև ընտանեաց խաղաղութեան, պատուոյն և հոգւոց փրկութեան պայմանն է:

Գ.

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Երբ ընտանեաց մէջ կրօնքն և աշխատութիւնը միանգամայն թաղաւորեն՝ բարեկարգութիւն ալ կ'ըլլայ հոն: Բարեկարգութիւն ըսելով՝ կը հասկնամ ամուսնոց մէջ ներդաշնակութիւն, էրկանը քաղցրութեամբ և գորովով ընցուն հեղինակութիւնն, և կնոջ հնազանդութիւնը, գործօնէութիւնը, յարգանքն և սէրը: Ասոնց վերայ դրքիս սկիզբները խօսած ըլլալով՝ այս տեղ կրկնել չեմ ուզեր:

Բարեկարգութիւն ըսելով նախ ստանը մէջի կարգադրութիւնը կը հասկնամ. երկրորդ՝ որդւոց առ ծնողս ունեցած հնազանդութիւնն, զբաղմանց, ընթերցանութեան և մինչև անգամ զբօսանաց ճշգրիտ կանոնապահութիւնը, անդրանկաց՝ փոքրերուն վրայ իշխանութիւնը՝ բարի օրինակ ըլլալով հանդերձ. մէկ խօսքով լաւ դաստիարակութեան մ'ամեն պայմաններն և արդիւնքները: Վերջապէս, ընտանեաց բարեկարգութիւն ըսելով կը հասկնամ նաև ծառայից իրենց պարտուց մէջ ճշդութիւնն, յարգանքն և հնազանդութիւնը:

Ա. Տան մէջ կարգադրութիւն

Քանի մի գործնական խրատներ պիտի տամ այս մասին:

Տանը կարգադրութիւնը նիւթական իրաց բարւոք տնտեսութեան և կարգաւորութեան մէջ կը կայանայ, որոնք բոլորն ալ իրենց յարմար և կանոնաւոր տեղերը պիտի ունենան և մէկէ աւելի ալ պիտի չըլլայ. նա մանաւանդ կարգադրութիւնն ել և մտից հաւասարակը շուտութեան և հաշուեկշիւը խելքով պատրաստելուն վրայ կը կայանայ, այն հաշուեկշիւը՝ որ իւրաքանչիւր պէտքի չափաւոր ծախք կ'որոշէ և աւելորդները դուրս կը ձգէ, և բնաւ չափազանց ծախուց դուռն չը բանար:

Ս,յս ընդհանուր սղութեան ժամանակ՝ յորում նիւթական կենաց հարկաւոր ամեն բաները սղագնի կը վաճառուին, նեղութիւնը դիւրաւ ընտանեաց վրայ կը ծանրանայ, և այս ծանրութեան հետևանքները նոյն իսկ բարոյական կենաց մէջ ալ զգալի կ'ըլլան և նորա գեղեցիկ սլոյմանները կ'այլայլեն:

Հարկաւ պէտք է որ կարելի եղածին չափ մարդս ընկերութեան մէջ իւր աստիճանին և պատուոյն համեմատ վարուի: Բայց պէտք չէ նաև մոռնալ որ աւելի լաւ է անձնասիրութեան պահանջած քանի մի հաճոյքները մէկ դէի թողլով՝ եկամուտէն աւելի ծախք չընել: Երբ դրամական անձկութիւնը տարուէ տարի սաստկանայ, այն ատեն ոչ թէ անձնասիրութիւնը՝ այլ պատիւն և համարումը կը տուժեն: Եթէ յարմար ատենին իմաստութեամբ մեր ծախքերը չը քիչցուենք, որ կուգայ որ կ'ստիպուինք մեր բոլոր ունեցածը չունեցածը մեր սրբուց ապագայովը մէկտեղ դրհելու:

Մեր օրերը կանայք իրենց էրիկներուն դործոց վըրայ տեղեկութիւն չունենալով՝ անոնց կարողութենէն վեր բաներ կը պահանջեն. էրիկներն ալ կ'ստիպուին իրենց կանանց հաճոյքները գոհացնել: Կանանց աւելորդ և ծիծաղաշարժ զարգերն էրիկները վերջին աստիճան չբաւորութեան և թշուառութեան մէջ կը ձը

դեն: Միթէ այս ըսածիս օրինակներ և ապացոյցներ կը պակսին, երբ մի անգամ Պօլսոյ մեր ազգային բազմութիւ ընտանեաց մէջ մտնելով՝ նոցա անցեալն ու ներկայն քննեմք: Քանի՛ քանի՛ կիներ կուզես որ ամեն օր զգեստի կողմանէ մէկ մէկ նորաձևութեան մէջ մրանեն ելնեն, առանց իրենց էրիկներուն գրպանին կամ քսակին խորհուրդ հարցնելու. ալ աւելին կայ. քանի մի կիներ անգամ մը հագած զգեստնին ուրիշ անգամ հագնել չեն ուզեր, որպէս թէ անպատուութիւն և նախատինք է: Ողորմելիները չը գիտեն՝ որ ատով թէ՛ իրենք և թէ՛ էրիկներնին օր մը օրապահիկին հայթայթելու բացարձակ անկարելիութեան մէջ պիտի ինկնան: Հացկերոյթներուն շուտութիւններն ալ վրասակար բաներ են: Պարզ վաճառականը կամ դործաւորը՝ որ ամբողջ տարին հաղիւ կրնայ քանի մի գահեկան աւելի շահիլ, կուզէ որ իւր տանը մէջ բրած խնջոյքը մեծ հարուստներուն ըրածէն վար չը մնայ. երեկոյթներուն մէջ ալ սոսկական կիներ հագած զգեստներով մեծ տիկնայէ չը տարբերի: Բոլոր տարբերութիւնը սա՛ է որ այս վերջնոյն իւր վիճակին յարմար ծախսելու կիրթ ճաշակն և վայելուչ պարզութիւնն առաջնոյն ծախուց անտեղի ըլլալը կը ջուցնէ:

Ինչ վիճակի մէջ ալ ըլլանք, պէտք է աւելորդ ծախքեր ընելէ զուշանանք, թէ և բարեկեցիկ ալ ըլլանք, զի ինչպէս առողջութիւնը ժամանակի մը համար է, նոյնպէս ալ հարստութիւնն և վաճառականական շահերը ժամանակաւոր են, Պէտք է ապագոյն նախատեսել և նմանիլ մըջխնայն և ոչ թէ անմիտ ճարտան: Երբ զեղխութիւնն ընտանեաց մէջ տիրած ըլլայ, շատ դժուար է զայն վերցունելը: Կի՛նն ալ, որդիքն ալ ծառայն ալ զեղխութեամբ ապրիլ կուզեն: Ս,յս տողերը գրած ատենս միտքս կուգայ ընտանեաց հօր մի խօսքը, որուն

գործերն Սասունած յաջողելով՝ բաւական հարստութիւն ձեռք բերեր էր։ Խորհուրդ կուտան և կ'առաջարկեն եղեր ասոր՝ որ իւր տանը ծախքերն աւելցունէ և իւր հարստութեան հաւասարող մարդոց զեղխութիւնն իւր տանը մէջ ալ մտցունէ։ « Յօժարակամ կ'ընէի այդ, պատասխաներ է իմաստուն հայրը, վասն զի կարողութիւնս կը տանի. սակայն կը մտածեմ՝ որ տղայքներս գէշ սովորութեանց պիտի վարժուին. նա մանաւանդ կը մտածեմ որ եթէ հիմակուրնէ անոնց զեղխութեան ճաշակն ներշնչեմ, ապագային իրենց բաժին ինկնալիք ժառանգութիւնով պիտի չըկրնան ուղած հաճոյքնին գոհացնել »։ Մըշտի փափաքելի է որ ընտանեաց բոլոր հայրերն այս իմաստունագրատասնին վրայ ընդ երկար մտածելով՝ զեղխութեան հոսանս գամ չըմտցունեն տուներնին։

Տանը բարեկարգութիւնն անոր մէջ տիրող խնայողութենէն կախումն ունի. բայց զգուշանալու է որ այս առաքինութեան տակ այն պժգայի ախար չը ծածկուի՝ որով խնայողութիւնն ազահութեան կը փոխուի։ Իւր ունեցած հարստութիւնը լաւ գործածող իմաստուն քրիստոնեայն բնաւ սիրտն անոր չը կապէր. « Արժանի շնորհք արձանագրութիւնն է (1) » կ'ըսէ սուրբ Պօղոս Առաքելալը։ Եթէ այս սէրն ազահութեան փոխուի՝ մարդուս սիրտն Սասունմէ կը հեռանայ։ Ազահութիւնը կատարեալ կոտորաչոտութիւն է, կ'ըսէ նոյն Առաքելալը. « Որտե՛ս կ'ախարձուի, անկտէն 'ի փոքրութեան և յարգայն, և 'ի բողոքի ցանկութեան անտես և անտեսութեան, որտե՛ն զնորոգել 'ի ստորակոտն և 'ի կորստոյ (2) »։ Ազահութեամբ է որ երբէք

(1) Ա. Տիմ. 2. 10 :
 (2) Ա. Տիմ. 2. 14 :

աղքատաց չենք ողորմիր և չենք գլխար անոնց վրայ։ Ազահն իւր կինը, որդիքն և ծառայները կը զրկէ ոչ միայն բարեկեցութեան և երջանկութեան համար պատշաճ եղածէն, այլ նաև յաճախ կարևորէն ալ։ Ծանրը կուգայ իրեն իւր որդւոց դաստիարակութեան համար պէտք եղած ծախքերն ընելու, ուստի անոնց ուսման շրջանը կը կարճեցունէ։ Ողորմութիւն ընելէ խոյս կուտայ, առանց մտածելու որ ասով կը դատապարտուի և Սասունծոյ արքայութենէն կը մերժուի։ Ողորմութիւնը հարկաւոր պարտք է, որ վճռաբար պատուիրուած է թէ՛ Հին և թէ՛ Նոր կտակարանաց մէջ։ Ազահն իւր կենդանութեան ատեն այս պատուէրին բնաւ կարևորութիւն չը տար, և եթէ մահուան ատեն Սասունծոյ այս օրէնքը կատարել ալ ուզէ, իւր բարեսրտութիւնն անաղան ըլլալով՝ արժանիք չունենար. սալ այն բանը՝ որ այլ ևս իրեն չը պատկանիր, ողորմութեան պարտքը խիստ թերի կատարել է, այն պարտքը՝ որուն զանցառութիւնը տուժեց արքայութեան և չը փոխուի զժողովոց բոցերուն մէջ։

Կան մարդիկ ալ՝ որ թէպէտ ազահ չեն, սակայն մեծ հարստութիւն ստանալով՝ իրենց գործերը հեաղհեատէ ընդարձակելու նպատակաւ, առ աղքատս և առ եկեղեցին ընելիք առատածեռնութեանց մասին ինքզինքնին կամաւոր անկարելիութեան մէջ կը գնեն։ Այսպիսիներն ալ ծանր կերպով կը մեղանչեն իրենց քրիստոնէական պարտուց դէմ. Պէտք է որ ընտանիքներն ունեցածնէն մաս մը Սասունծոյ նուիրեն. Սասունծոյ տրուելիք մասը նուէր է՝ որ իւրաքանչիւրին վիճակին համեմատ շատ կամ քիչ կ'ըլլայ. այս նուէրը պէտք է տալ թէ՛ աղքատաց և թէ՛ անոնց՝ որք հոգւոց փրկութեան գործով զբաղեալ ըլլալով՝ սյւլոց նիւթական օգնութեան կը կարօտին։

Բ. Հնազանդութիւն եւ մեծարանք որդւոց
առ ճնորդս իւրեանց

Տղայոց բարեկարգութիւնն իրենց գաստիարակու-
թենէն կախումն ունի : Մէկն առանց միւսին չը կրնար
ըլլալ . ասոնք իրարու հետ սերտ կապակցութիւն ու-
նին՝ ինչպէս պատճառն արդեան հետ . զի բարեկար-
գութիւն ըսելով պէտք է հասկնալ միայն արաւաքինը ,
նիւթական պատուէրի կամ կանոնի պահպանութիւնը ,
այլ նաև կամաց բարի գիտաւորութիւնը : Արաւաքին
բարեկարգութիւնը հաստատուն և տևական ըլլալու
համար պէտք է հոգւոյ բարեկարգութեան վրայ հի-
մնեալ ըլլայ :

Բարեկարգութիւնը՝ որ մայր է բարի գաստիարա-
կութեան , միանգամայն ալ արուեստ և գիտութիւն է :
Գիտութիւն է , որովհետև քանի մի սկզբանց վրայ հի-
մնեալ է , արուեստ է , զի որոնք որ բարեկարգութիւն
հաստատել կուզեն , մեծ փորձառութիւն և յաջողակու-
թիւն պէտք է ունենան :

Գիտութեանց մէջէն ամենէն գոյարհասկնալին
բարեկարգութիւնն է , ամեն արուեստներէ աւելի խո-
հեմութիւն և զգուշութիւն կը պահանջէ : Շատ քիչե-
րը կը յաջողին այս արուեստին մէջ , շատերն այսօր պը-
խալ գաստումն կ'ընեն այս արուեստին վրայ և գիպս-
ւածաբար կը գործեն : Այսպիսի կարևոր ուսմունք մը
լաւ չեն ուսանիր և կորարար կը գործեն :

Բարեկարգութեան վախճանն է աղայոց սիրան ու
միտքն՝ ի միասին ազնուացնել , պահպանել անոնց ան-
մեղութիւնը , պատուոյ և յարութեան սկզբունքներ ու-
սանց ել անոնց , գէշ սովորութիւններն արմատախիլ

ընել և անոնց տեղ բարին տնկել , քաղցրութիւն և խոր-
տութիւն ՚ի միասին բանեցնել աղայոց հպարտութիւնը,
լղբշտութիւնը , յիմար ամբարտաւանութիւնը , յանչախ
կըյր անձնասիրութիւնը , ցոխութիւնն և ծուլութիւնը
սանձահարելու համար :

Ահաւասիկ բարեկարգութեան մասին պատշաճ դա-
տուած իբրաներն և հրահանդները կարդաւ քանի մի
դըւթներու կը բաժնեմ :

Ա. ԱՅԻ ՏՆԵՉՅԱԼ ՆԻ ՀՍԻՍԻ ՏՂԱՅՈՅ ՎՐՅՅ

Ծնողաց առաջին պարտքն է ուշադիր ըլլալ իրենց
որդւոց յատկութեանց , սովորութեանց , բնաւորու-
թեան , հաճոյից , նա մանտանդ անոնց վրայ տիրող
կրից և յօժարութեանց :

Ծնողը շատ անգամ կըյր գործով չեն ուղեր իրենց
որդւոց թերութիւններն իմանալ , ճանչնալ և քննել ,
ոյս մասին անդդոյչ կը գտնուին : Տղայոց վրայ երկցած
ամեն հանգամանք գովելու բնութիւնովսին իրենց ար-
դայոց վրայ լաւ հսկողութիւն չեն ըներ , և այլոց ըրած
կրաւացի գիտողութիւններն ալ կ'արհամարհեն :

Թո՛ղ զգուշանան աբեմն ծնողք որ արուն գաստիա-
րակութեան այսպիսի վտանգներ չը յարուցանեն : Ար-
ծուին և բուին առաիը թող իրենց խրատ ըլլայ :

Տղայոց բնութիւնն աղէկ ճանչնալու համար պէտք
է թողալ որ աղատօրէն գործեն առանց անոնց երկիւ-
ղի կամ կասկածանաց տեղի տալու : Տղայոց միայն այս-
չափը իմացնել պէտք է՝ որ իրենց ամենապիւրը թերու-
թեանց վրայ անգամ շատ ցաւ կ'զգան : Մանաւանդ
անոնց խաղացած աստեղը լաւ ուշադրութիւն պիտի ը-

նեն ծնողք, որովհետև աւելի խաղու մէջ կ'իմացուի անոնց ինչ բնաւորութեան տէր ըլլալը, որով դիւրաւ երևան կ'երևնեն նոցա թերութիւնները: Ծնողք իրենց որդւոց խաղացած ատեն պիտի տեսնեն՝ թէ կը բարկանա՞ն, կը նախանձի՞ն ուրիշին՝ վրայ, կեղծաւորութիւն կ'ընե՞ն, նենդութիւն կը բանեցնե՞ն և թէ անձնասիրութեամբ կը ծաղրե՞ն ուրիշը: Այսպիսի դիտողութեամբ ծնողք կը գիտնան թէ տղայոց թերութիւններն ինչպէս պիտի ուղղեն, և թէ ինչ բանի մէջ աւելի ջանալու են՝ որ զսպեն զանոնք:

Բ. ՏՂՈՅ ՎՐԱՅ ԱՃԻՆՅՈՒԹԻՒՆ ԲԱՆՏՆՆԵՒ

— Թէ 1'62 ՊէՏԲ Է ԱՍՈՐ ՀԱՄԱՐ

Ծնողք պէտք է ջանան իրենց որդւոց վրայ մեծ ազդեցութիւն և իշխանութիւն բանեցնել: Ո՛րչափ սրբազան և պատկառելի ալ ըլլան հօր և մայր անունները, դարձեալ անբաւական են իրենց իշխանութիւնն ըստ բաւականին ազդեցութիւն և տղայոց հնազանդութիւնն և մեծարանքը յինքեանս ձգել:

Այս հայրական հեղինակութեան գաղտնիքն ո՛չ հասակին, ո՛չ պատկառելի երևնալու համար ձեռք առնուած միջոցներուն, ո՛չ ձայնի սաստկութեան և ո՛չ սպառնալեաց կամ պատժոց մէջ կը կայանայ, այլ միօրինակ համեստ և հաստատուն բնաւորութեան, անձին գիտակցութեան, ամեն մէկ գործոց կանոնաւորութեան, խօսից հանճարեղութեան, մեծարանաց և սիրոյ մէջ, որ տղոց վրայ խոնարհ և անկեղծ անձնութեան զգացումն կ'ազդեն: Երբ այս չնաչխարհիկ յատկութիւնները մէկուն վրայ գտնուին՝ բնականաբար

կը յայտնուին քաղցրութեամբ և սիրուն վեհանձնութեամբ, որ այլոց վրայ պատկառանք կ'ազդեն, և ուղելով չուղելով կը հնազանդեցնեն զանոնք:

Այս հիղինակութիւնն ամեն բան բարեկարգ վիճակի մէջ կը դնէ և կանոնները պահել կուտայ, և հետեւաբար կը շտամբանաց և պատժոց առաջըն ալ կ'առնու:

Կանուխէն պէտք է ծնողք այսպիսի հեղինակութիւն մը բանեցուցած ըլլան: Եթէ պատեհ առիթը ձեռքէ փախցունեն, վերջէն շատ պիտի նեղուին տանը մէջ բարեկարգութիւն հաստատելու կողմանէ, և այն ատեն տանը մէջ տղան տէր պիտի ըլլայ:

Տղային բռնական հաճոյքներն և անձնասիրութեան կիրքը խիստ փոքր հասակէն կ'երևան վրան շատ անգամ: Օրորոցէն պէտք է տղային չար յօժարութիւնները խափանել: Մէկ խօսքով, սորվեցնել տղայոց զիջանիլ և հնազանդիլ:

Այսպէս ըսելով՝ չենք պահանջեր որ տղայոց բնաներումն չը շնորհուի, այլ կը պատուիրենք՝ որ անոնց լացերուն թուլութեամբ ախանջ չը կախեն ծնողք: Կը պատուիրենք՝ որ ծնողք հասկցունեն անոնց՝ թէ լացով ու աղաղակով ուղամնին չը շնորհուիր իրենց: Տըղայքներ կան՝ որ կերակրոց ատեն բան մը չեն ուզեր, այլ կարգերուն կ'սպասեն, և երբ իրենց ալ տրուի՝ շնորհակալութիւն կը յայտնեն և այնպէս կ'ընդունին: Ուրիշներ ալ կան՝ որ տեսած բաներնին կուզեն և կը պահանջեն ալ որ ամենէն առաջ իրենց տրուի: Ուսկից է այս տարբերութիւնը. — սկիզբէն առած դաստիարակութիւններնուն իրարմէ տարբեր ըլլալէն:

Տղայք զարմանալի բնազուժ մ'ունին, որով կրնամ ըսել թէ իրենց դաստիարակաց բնութեան թերութիւններն անմիջապէս կ'զգան: Գիտեն առաջուց որ ի-

րենց աղաչանքները լսելի պիտի ըլլան : Ուրեմն պէտք է որ ծնողք հանդարտ և հանճարեղ կերպով դիմադրեն անոնց կամաց , և ահա պիտի տեսնեն որ տղան պիտի ստիպուի հնազանդելու : Գաստիարակութեան սկիզբները յառաջապահ զօրքերուն ըրած պատերազմին պէս ծնողաց և տղուն մէջ թեթև պատերազմներ տեղի կունենան , յորում երկուստեք իրենց զօրութիւնները կը փորձեն : Եթէ ծնողք հեռատես և հաստատ բնաւորութեան տէր ըլլան , գաստիարակութիւնն իւր լաւ արգասիքը կը ցուցնէ տղայոց վրայ :

7. ՊԵՏԻ ԵՂԱՆ ԱՏԵՆ ՊԱՏԺԻ ԵՒ ՔԱՅԱԼԵՐԻ :

Որչափ ալ աղէկ ըլլայ տղու մը բնաւորութիւնը , դարձեալ ուղղուելու տեղեր կունենայ : Ծնողաց և գաստիարակաց համեստ վարքը տղայոց վրայ պատկառանք և երկիւղ կ'ազդէ , որով բնաւ պատժոյ հարկ չը մնար , բայց և այնպէս ժամանակ կուզայ որ պատժելու է :

Այս տեղ անուշադրութեամբ գործուած սխալանաց վրայ չէ խօսքս . զի այսպիսի յանցանքները սովորաբար ներողութեան արժանի են , մանաւանդ թէ ասոնց դարմանները ժամանակն և հասակը պիտի ըլլան : Սակայն կը պատահի որ յանցանքին հետ չարամտութիւն ալ խառնուած կ'ըլլայ , այս տեսակ պարագայի մէջ պէտք է յանդիմանել , և եթէ յանդիմանութիւնն ապարդիւն ըլլայ՝ պատժել : Պատիժը յանդիմանութենէն վերջը կը դնեմք : Գարձեալ պատժելէ առաջ խրատելու է , որ յանդիմանութենէն աւելի քաղցր է :

Շատերը կը կարծեն՝ թէ առաջին անգամուն պատ-

ժելով կարճ ճամբան ընտրած կ'ըլլան : Մեք այսպիսեաց կարծիքէն չեմք : Պատժելով դաստիարակութեան ճշմարիտ վախճանին չենք հասնիր , որ է մաքերը համուզել և առաքինութեան սէրը ներշնչել :

Թերութիւններն ուղղելու համար պէտք է քաղցր յանդիմանութիւններ ընել , համոզելու փորձ փորձել , արդարութեան և պատուոյ ճաշկը տալ , մղութեան ատելութիւն՝ և առաքինութեան սէր ներշնչել : Եթէ այս առաջին փորձը չը յաջողի , պէտք է աւելի կծու յանդիմանութեանց դիմել : Յանդիմանութիւնը միշտ խրատէն վերջը պիտի ըլլայ : Իսկ եթէ այս երկու միջոցներն ալ արդիւնք չարտադրեն , ա՛լ հարկ կ'ըլլայ պատժել : Պատիժը նախ բարոյական պիտի ըլլայ , վերջը թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական կրնայ ըլլալ . եւ եթէ այս ըսած բոլոր միջոցներս անօգուտ ելնեն՝ հարկ կ'ըլլայ ծանր պատիժներ տնօրինել , միանգամայն միշտ յոյս տալով տղուն՝ որ ներումն կ'ընդունի՝ եթէ սրբտանց զղջայ ըրածին վրայ :

Պատիժ բերով կ'իմանամ տղուն չար կամքը՝ նուաճելու համար սահմանուած պատուհասը՝ երբ խօսքով անհնարին կ'ըլլայ խափանել զայն , և երբ այս չար կամքը յիմարութեան կը փոխուի , որ ըստ սուրբ Գրոց տղուն սրտին հետ կապուած է . այս յիմարութիւնը միայն կրթութեան դաւադանով կը նուաճուի :

Ո՛վ որ , կ'ըսէ սուրբ Գիրքը , այսպիսի պարագայի մէջ գաւազանին կը խնայէ , իւր որդին կ'ատէ : Ուրեմն նիւթական պատիժն ակնարկել կ'ուղէ : Երբեմն ամեն մարդ սուրբ Գրոց այս բանը բառական նշանակութեամբ կ'առնուր , և թէ՛ ընտանեաց և թէ՛ դրոյրոցաց մէջ կը գործածուէր : Իսկ մենք ոչ միայն գաւազանով պատժել չեմք հրամայեր , այլ նաև կ'արդելումք , վասն զի այսուհետև մեզի համար գաւազանը

ցած և անարդ բան մ'է, և կը վախցուի՝ ալ որ այս տեսակ պատիժը պատճառ չըլլայ տղոց յանդգնութեան և ապստամբութեան նոյն իսկ ընդդէմ առաքինութեան և ծնողաց՝ զորս պարտի ամեն բանէ աւելի սիրել։ Սուրբ Գիրքը հասարակ ո՛ր և իցէ պատիժ հասկցնել կուզէ, կը դատապարտէ ծնողաց սրնոտի գորովն և կոյր ներումը, որ իրենց որդւոց մութեանց աչք դոցելով՝ անուղղայ կը մեծցունեն զանոնք։ Թո՛ղ ծնողք թեթեւ կերպով ալ իրենց տղայոց չը զարնեն, և արժանի չըլլան Ուրախեաց իւր Օրպիդիոս դատարակին տուած մակդրին, զոր « ձաղկիչ, կը կոչէր։ Կիկերոն իւր որդւոյն դատարակութիւնը Գիոնեսիոս անուն աղատ գերւոյն յանձնած էր։ Սոս Գիոնեսիոսը խղճի աէր մէկն էր, զոր մինչև իսկ Կիկերոն ալ կը յարգէր։ Բայց մեծ թերութիւն մ'ունէր, այսինքն, կատիճան կը բարկանար տղայոց դէմ, և անոր համար մեղադրութեան արժանի է. զի, ինչպէս կ'ըսէ Սենեկա, միթէ այսպէ՛ս կ'ընեն ձին մարդերու համար, միթէ խարաղանով կը զարնեն։

Քանի որ այսպէս է, ինչո՞ւ մարդոց դէմ անասուններէն աւելի խստութեամբ վարուիլ։ Վասն որոյ չեմ ուզեր՝ որ խիստ մեծ յանցանաց համար ալ սենեկի մէջ առժամանակեայ կերպով անօթի ծարաւ թողէն անդին անցնին ծնողք։

Ըստ ինքեան թեթեւ պատիժ մ'ազդոյ և զօրաւոր ընելու կերպերն ալ կան։ Նախ պէտք է յանցաւորն իւր յանցանքին մէջ թողուլ և անոր ինք զինք արդարացընելու առիթ չըտալ, չափաւոր պատիժ տնօրինել, կերք կամ բարկութիւն չը ցուցնել. նաև տղայն յանցանքը գործելէն անմիջապէս վերջը չը պատժել, որպէս զի աւելի չափազանցութեան չը տանի գործը, ժամանակ տալ անոր իւր յանցանքին վրայ մտածելու, իւր սխալը

ճանչնալու և պատժոյն՝ իրաւացի և հարկաւոր ըլլալը հասկնալու. ծնողք դէմքերնուն վրայ տխրութիւն ցուցունելու են պատժելու ստիպուած ըլլալնուն համար, և այլ ևս սիրոյ նշաններ պիտի չերեցունեն։ Ֆէնըլոն կը պատմէ թէ ի՛նչպէս այս հնարքներով յաջողեր է։

Երբ երիտասարդ իշխանը, այսինքն, Պուրկօնեի դուքսը, որուն դատարակութեան պաշտօնն ստանձնած էր, չափազանց բարկանար կամ ընդվիշը, որուն իւր ցասկոտ բնութեամբն ենթակայ եղած էր, այն ատեն Ֆէնըլոն, իւր կառավարիչը, միւս դատարակները, բոլոր պաշտօնակալներն, նաև տանը սպասաւորները մտքերնին կը դնէին բնաւ հետը չը խօսիլ։

Երիտասարդ իշխանին հարցմանց չէին պատասխաներ, հետն եղած կամ քովը գտնուած ատեննին բնաւ երեսը չէին նայեր, և եթէ նայէին ալ՝ երկիւղ կը ցուցնէին դէմքերնուն վրայ, որպէս թէ կը վախնային խօսիլ այնպիսի մէկուն հետ՝ որ ինք զինք կը նուաստացունէ իւր խստերախ բնաւորութեամբ և կատաղութեամբ։ Իբրև խելքը գլխէն թուած ողորմելի թշուառի մը կը զթային իրեն. միայն իւր եղկելի կեանքը պահպանելու համար հարկ եղած խնամքները կ'ընէին, իւր ամեն գրքերն և ուսման գործիքները ձեռքէն կ'առնէին, իբրև թէ աւելորդ էին անոնք իրեն պէս չարաբաղդ թշուառին համար։ Բոլորովին ինքն իրեն կը ձգէին իւր տաղնապանաց և թշուառութեան մէջ։ Խեղճ պատանին իւր լքեալ վիճակէն և զարհուրելի մենակեցութենէն զգածուելով, և իւր յանցանքն ու ապերախտութիւնը ճանչնալով, վստահ ըլլալով իւր դատարակին ներողամտութեան՝ կուգար անոր ոտքը կ'ըննար, իւր յանցանքը կը խոստովանէր, խօսք կուտար այնուհետև ինք զինք զսպելու, և արցունքով կ'ողորէր Ֆէնըլոնի ձեռքերը, որ գորովագութ հօր պէս միշտ

պատրաստ էր ներելու :

Օր մը Ֆէնըլըն խտրիւ յանդիմանեց իւր աշակերտը ծանր յանցանք դործած ըլլալուն համար : Երիտասարդ-իշխանը յանդգնեցաւ սա պատասխանը տալու . — Ո՛հ , ո՛հ , Տէ՛ր է՛ , է՛ ո՛ւ լուս . ու յէ՛ ո՛ւ լուս . ու գիտէ՛ — : Ֆէնըլըն բնաւ պատասխան չը տուաւ այս խօսքին . զգաց թէ դեռ ժամանակը չէր և թէ իւր աշակերտն այն վայրկենին իր խօսքերուն բնաւ ականջ պիտի չը կատարէր : Բողբողին լուռ կենալ ձեացուց , և բաւական համարեց իւր այս տխուր լուր թեամբը յայտնել թէ սաստիկ վիրաւորուեցաւ այն խօսքէն : Այն օրը քովէն բաժնուելով միտքը դրաւ որ ազդու դաս մը տայ , և երիտասարդ իշխանն այն դասին յիշատակն երբէք մտքէն չը հանէ :

Հետեւեալ օրը Պուրկօնեի դուքսն անկողնէն ելածին պէս Ֆէնըլըն քովը դնաց , չուղեց իւր աշխատութեան սովորական ժամուն սպասել , որպէս զի իր ըսելիքներն աւելի ազդու կերպով տպաւորուին երիտասարդ իշխանին երեւակայութեան մէջ : Ֆէնըլըն իւր սովորական կերպէն դուրս ծանր և պատկառելի վեհանձնութեամբ հետեւեալ խօսքն ըսաւ երիտասարդ իշխանին . « Պարոն , չեմ գիտեր թէ արդեօք կը յիշէ՞ք երէկուան ինձի ըսած խօսքերնիդ : Ես պիտի ընեմ , թէ գիտէ՛ եւէր թէ՛ ի՛ ո՛ւ լուս . ու թէ յէ՛ ո՛ւ լուս : Պարտքս է ձեզի սորվեցնել թէ երկուքն ալ կ'անդիտանայք . . . և որպէս զի բնաւ ասոր վրայ չը տարակուսիք , զձեզ Նորին վեհախառուութեան քով պիտի տանիմ » :

Պուրկօնեի դուքսը՝ որ նախորդ օրուան իւր դատարակին ցուրտ ընթացքէն խիստ զգածուած և ամբողջ դիչերը տխուր մտածութեանց մէջ ընկղմած կ'ողբար և կը հեծէր , այս խօսքէն այլայլեցաւ . . . : Որտասուաց , հեծեծանաց և ամօթոյ մէջ հեղձամղձուկ

եղած հաղիւ կրցաւ այս կցկտուր խօսքերն արտասանել , « Ո՛հ , Տէ՛ր իմ , երէկուան պատահածին վրայ յուսահատած եմ . եթէ թագաւորին իմայնէք , իւր համարումը վրայէս վերցնել պիտի տաք . . . : Կը խօստանամ . . . : Կը խոստանամ որ այսուհետեւ զձեզ դո՛հ կ'ընեմ » :

Ֆէնըլըն չուղեց զիջանիլ , և ամբողջ մէկ օր երիտասարդ իշխանն անհանդիստ և յուսահատ վիճակի մէջ ձգեց . վերջը Տիկին Մէնթընօնի միջնորդութեամբ անոր ներեց :

Ահաւասիկ պատժոյ դեղեցիկ օրինակ մը , արդարև իմաստո՛ւն օրինակ : Տղան թագաւորին քով տանելը վերջին ծանր պատիժն էր . բայց Ֆէնըլըն այնպիսի զգուշութիւն և խոհեմութիւն կը բանեցնէ՝ որ չը հարկադրուի թագաւորին դիմելու : Լոկ սպառնալիքը բաւական եղաւ երիտասարդ իշխանը զղումի բերելու :

Գ. ՀԱՅՐԵ ՆԻ ՄԱՅՐԸ ՊԵՏԵ Է ՈՐ ԻՐԵՆՑ ԻՆՈՎԱՅԱՆ ԱՆՐԵՍԱՄԱՐՆԻ ԻՐԱՆՈՒԹՅՆԵՐԸ ՊԱՆՏՊԱՆՆԵՆ ՆԻ ԳՈՐԾԱՊԵՆ

Բարեկարգութիւնն Աստուծոյ հաստատած կերպով ընտանեաց մէջ տիրելու համար , պէտք է որ ընտանեաց իւրաքանչիւր անդամոց պատուոյ դիրքն ու աստիճանն որոշ , և իւրաքանչիւրին վերաբերելիք պարտքերը ճշգիւ գծուած ըլլան :

Վերջին դարուս ընկերական նեղութիւնները , դարուս վիլիստփայից լեզուազար իմաստակութիւնք և անոնց ազդեցութեամբ յօրինուած անկատար օրէնքներն և կանոնները չարաչար վատթարացուցին քրիստոնեայ ընտանիքը : Այսօր բազմաթիւ մըլութիւններ այնպիսի սովորութիւններ երեւան հանեցին՝ որք հասարակաց

մաքուր բարքը կ'ապականեն :

Ուղեցին որ սուտ հաւասարութիւնն իբրև ընկերա-
կան օրէնք ընտանեաց մէջ ալ մտցունեն . հայրական և
մայրական հեղինակութիւնն ինկած է . շատերը կը
բողբեն և կ'աղաղակեն՝ թէ ծնողք այլ ևս չեն յար-
գուիր . ախոս . նոյն իսկ ծնողք ինքզինքնին կը նուա-
տացնեն՝ յաճախ իրենց որդւոց առջև իշխանութիւննին
առ ռան կոխելով : Թէ և կայսրներն ու թագաւորներն
գահընկէց կրնան ըլլալ , սակայն հայր մը չը կրնար հը-
րաժարիլ այն իշխանութենէն՝ յորում հաստատեց զին-
քըն Աստուած այն օրը՝ որ ամուսնութիւնն սրբեց և
օրհնեց որ մարդկային սեռն աճի և բաղմանայ : Հօր և
մօր իշխանութիւնն այնչափ հարկաւոր է ընտանեաց
բարեկարգութեան համար , որչափ կարևոր են օրէնքս-
գիր և գործադիր իշխանութիւնք Պետութեան մը եր-
ջանկութեան համար : Վերցո՛ւր ազգի մը մէջէն օրէնք ,
դատաւոր , պատժական կանոնները , այն ատեն պիտի
տեսնես՝ որ զարհուրելի խռովութեանց մէջ անիշխանու-
թիւնը պիտի ծագի : Վերցո՛ւր ծնողական հեղինակու-
թիւնը , և ահա ընտանեաց կապերը պիտի խզուին .
ասոնց բոլորին հետեանքը պիտի ըլլան շփոթութիւն ,
անկարգութիւն և անբարոյականութիւն :

Պէտք է ուրեմն աղէկ համոզուին հայրերն ու մայրե-
րը՝ թէ Աստուած զիրենք իւր յաւիտենական նախախ-
նամութեան գործակից կ'ընէ , զիրենք իւր մշտնջենա-
ւոր իշխանութեան կը հաղորդեցունէ իբրև գլխաւորք ,
հսկողք և դատախարակք իրենց ընտանեաց : իշխանու-
թիւնը ծնողաց կարևոր է . եթէ ծնողաց այս աստուա-
ծային իշխանութիւնն սչնչանայ , ամեն ինչ հետը կ'ս-
չքնչանայ , թէ՛ ընտանեկան և թէ՛ քաղաքային ընկե-
րութիւնք . ամեն ինչ 'ի հիմանց կը քայքայի : Աւա՛ղ ,
մէկ քանի ծնողաց իրենց աւանդուած իշխանութեան

իրաւունքները պահանջելու մասին ցոյցած անհոգու-
թիւնը տարօրինակ բան դարձած է . կ'ըսեն՝ թէ այս
իրաւունքները ծանր են , որովհետև վրայնին պարագ կը
դնեն . իրենց իշխանութեան պակասը մնտոի գորովով
կը լեցունեն : Այս մեծ յանցանքը պատրուակելու հա-
մար հետեւեալ ուղիղ բայց սխալ հասկցուած սկզբուն-
քը մէջ կը բերեն , այսինքն՝ թէ Բեկիսիւնիւնը իստի-
նէն էր Գործիչի Գործիչ : Չեն մտածեր՝ որ ծնողաց առ որ-
դիս սիրոյն նախատիպ օրինակն Աստուծոյ առ մարդիկ
ունեցած սէրն է , որ թէ՛ կը պատժէ և թէ՛ կը սիրէ :
Եթէ տղան չափազանց սիրուելու պէտք ունի և պիտի
զգայ ալ որ կը սիրուի , պէտք է որ այս սիրոյն արդիւն-
քովս ուղղուի , խրատուի , յանդիմանուի և պատժուի :

Ծնողաց առ որդիս ունեցած սէրն երբէք պէտք
չէ նմանի երկու հաւասար ընկերաց մէջ տեղի ունեցած
սիրոյն :

Թող ծնողք զգուշանան խիստ մտերմաբար վարուե-
լէ , զի ասով իրենց պատիւը կը տուժեն , տղան կը մոռ-
նայ թէ իւր հայրն իրեն քով Աստուծոյ տեղը կը բռնէ ,
և հայրական հեղինակութեան դաղափարը կը ջնջուի
կեղծ իւր մտքէն : Տղային մանկութեան ատեն իսկ ծը-
նողք չափազանց գորովով պիտի չը սիրեն տղայքներնին ,
որպէս զի վերջը ապականեալ տղայքներ չըլլան :

« Շողքորթիք , կ'ըսէ Սուրբ Գիրքը , գգուէ տղադ ,
պիտի տեսնես որ գլխուդ պատիժ ըլլայ . խաղա՛ հե-
տը՝ հաղար ու մէկ նեղութիւններ պիտի պատճառէ
քեզ : Տղայիդ հետ շատ մի՛ ընտանենար , մի՛ գուցէ
վերջէն զղջաս և յուսահատիս » :

Ապականեալ կամ երես առած տղայք երբ տասն
երկու տարեկան ըլլան , իրենց մինչև այն ատենուան
բարեբարոյ , հլու , բարեկիրթ բնութիւնն կը ձգեն , և
խաբեբայ , յանդուգն , լիբբ , աներես , անխիղճ և ան-

պատիւ կ'ըլլան . քաղցր և շնորհալից բնաւորութիւն . նին ամբարտաւանութեան , չարամտութեան և լքութեան կը փոխեն :

Քանի՛ քանի՛ անգամ շատերն ըսած են՝ որ հայրն իր որդւոյն բարեկամն պէտք է ըլլայ : Այս սկզբունքն իբրև խելացի սկզբունք ու թն և տասներորդ դարու իմաստասէրներէն կը յարգուէր : Ըստ իս , հայրական և որդիական սէրերն այնպիսի զգացումներ են՝ որ անուշնին ալ բնութիւննին ալ փոխելով՝ բան մը չըլլար . հայրըն և որդին իրարու հետ կապող սէրը բնաւ բարեկամութեան չկրնար փոխուիլ . այս սէրը իրմէ կը հեռացնէ և չընդունիր այն հաւասարութիւնը՝ որ բարեկամութեան սկզբունքն և հիմն է :

Իւր որդւոյն հաւասարը կամ ընկերն ըլլալ ուղող հայրն իւր արժանապատուութիւնը կը կորսնցունէ, պարագ աեղն ընտանեանալ կուզէ անոր հետ , ինքը հայր է և հետեւաբար իշխանութիւն ունի : Իւր հասակն և իշխանութիւնը բարեկամութեան կեղծ դիմակին ներքէ պիտի երևնան միշտ . աղան ալ շուտով պիտի տաղտկանայ այնպիսի ընկերէ մը՝ որ երիտասարդական աշխոյժ և ճաշակ չունի : Հայրն իւր հայրական իշխանութիւնը բանեցնել պիտի ջանայ , սակայն այն կեղծ դիմակը զինքը պիտի խայտառակէ :

Ե. ՄՆՈՂՔ ՊԵՏՔ Ի ԻՐԵՆՑ ԻՊՈՒՆՆՑ ՅԱՐՐԵՉԱՄԱՆ ՊԱՐՏՈՒՑ ԳՈՐԾԱԳՐՈՒ .
ԹԵՍՆ ՄԱՍԻՆ ՀԱՍՏԱՏԱՐԻՑ ԸՂԱՆ

Ծնողք փոխանակ ցած և վատ միջոցներով իրենց որդւոց սէրը գրաւել ջանալու , աշխատին իրենց պարտքերն անթերի կատարել՝ որպէս զի իրապէս արժանա

նան այն սիրոյն : Պէտք է՝ որ իրենց զաւակաց թերութիւններն երեսնին զարնեն , և հաստատամտութեամբ ջանան անոնց պակասութիւններն ուղղելու : Ծնողաց յեղյեղուի բնաւորութեան համար է՝ որ շատ տղաքներ՝ որոնք ընկերութեան օգտակար անհատներ կրնան լին ըլլալ , ընդ հակառակն ողորմելի արարածներու կարգն անցած են :

Ուստի , դարձեալ կ'ըսենք , տղայն կրթելու համար ո՛չ խստութիւն և ո՛չ թուլութիւն բանեցնելու է , այլ անփոփոխ հաստատամտութիւն : Ծնողք , աշխատեցէ՛ք տղային միտքը համոզել իւր դորժած յանցանքին իրականութեան վրայ , ցցուցէ՛ք անոր յանցանքին մեծութիւնը կամ որպիսութիւնը . բարի զգացմունքները , կրօնքը , սարտքն և բարեմտութիւնը տածեցէ՛ք անոր սրտին մէջ . վերջը նայեցէ՛ք որ արդիւնաւոր ընէ՛ք ձեր յանդիմանութիւնները՝ բայց առանց տղային դիւրայող և ցասկոտ բնաւորութիւնը դրդուելու , շատ մի՛ խոնարհիք , բայ ՚ի պէտք եղած ատենէն : Եթէ տղայն կըրկին ինկնայ նոյն և մի յանցանաց մէջ , վերստին յանդիմանեցէ՛ք . ըսէ՛ք անոր՝ թէ յանցանքին ծանրութիւնը զձեզ վշտացուցած և պատժելու հարկադրուած էք : Եթէ երկրորդ անգամին ալ չըյաջողիք , անցադաղ ուրիշ պատիժ մը տնօրինեցէ՛ք և անպատճառ դորժադրեցէ՛ք : Քիչ անգամ ներեցէ՛ք յանցաւորին եթէ տուած պատիժնիդ արդար և իրաւագի է : Երբէք ըստ քմաց կամ բարկութեամբ դորժ մի՛ տեսնէք . խիտա քիչ անգամ ներելի է պակասութիւնը , բայց յանցանքը բնաւ , նամանաւանդ մուլութիւնը :

Ծնողք , մի խաբուիք ամենեւին տղայոց ստացող պատճառներէն , որով հիւանդութիւն կամ վատաւողջութիւն կը կեղծեն պատժոյ ատեն . ասիկա իրենց խորամանկութեան եւ մարց թուլութեան արդիւնքն է :

կը համարձակիմ ըսել՝ թէ աւելի լաւ է որ տղայն մարմնով հիւանդ ըլլայ քան թէ հողւով : Գրիստոնեայ մայր մը սա խօսքերն ըսեր է իւր տղային . « Որդեակ իմ , դու դիտես՝ որ կը սիրեմ դքեղ , բայց աւելի կը փափաքիմ դքեղ մեռած տեսնել , քան թէ մահացու մեղքի մէջ ինկած » :

Ինչպէս որ ծնողք շատ անգամ տղաքնին չըրողնեցընելու համար կը վախնան կարեւոր աշխատութեան պարապեցնելու զանոնք , այսպէս ալ վատութեամբ կը խորշին զանոնք յանդիմանելէ : Անոնց դիմադարձութիւնը պատժելու տեղ կը համբերեն , կը վախնան որ չըլլայ թէ լան , մինչդեռ ընդ հակառակն պէտք է լացունել , կը զիջանին անոնց բարկութեան , մինչդեռ պէտք էր պատուհասել : Այսպէսով տղայն ինքզինք իշխան պիտի կարծէ , տղայն՝ որ առաջ թերափ մը դարձած էր , կը դառնայ կըլլայ բռնաւոր մը :

Դաստիարակութեան մէջ թուլութիւնը այսօր ընկերական աղետից պատճառ կ'ըլլայ :

Տղայն իւր ծնողաց հնազանդած չէ տանը մէջ , դըպրոցական եղած ատեն դպրոցին մէջ պիտի ստամբակի , արհեստաւոր եղած ատեն վարպետին պիտի չը հնազանդի , ղինուոր եղած ատենն ալ զօրապետէն պիտի ապստամբի . մէկ խօսքով , առ հասարակ ամեն իշխանութիւն ատելի պիտի երեւի իւր աչքին :

Այն մայրերը՝ որ վերոյիշեալ քրիստոնեայ կնոջ դիւցազնական խօսքն արտասանելու քաջարտութիւն չունին , անբաւական են տղաքնին կրթելու :

Թո՛ղ չը կարծուի բնաւ թէ այս բաները չեն կրնար դորձադրուիլ այս դարուս մէջ : Ո՛չ , որչափ ալ դժուարութիւն կենայ , մանկութիւնը կրնայ կրթուիլ այնպէս՝ ինչպէս որ կը կրթուէր երբեմն , միայն թէ ծնողք հաստատուն կամք ունենալու են տղաքնին դաստիարակելու :

րակելու , որով իրաւամբ հայր եւ մայր կոչուելու արժանի կ'ըլլան :

Գ.

ԾԱՌԱՅԻՐ

Թէ ընտանեաց գլխաւորք ի՞նչ պարտքեր ունին առ ծառայս

Ծառայական վիճակի պայմաններն իրենց նախկին կացութենէն բոլորովին տարբերած են այսօր . տերանց եւ ծառայից փոխադարձ առընչութիւնները զգալապէս փոխուած են :

Երբեմն ծառայն ընտանեաց մէկ անհատը կը սեպուէր , տանը անդամն էր , անոր բոլոր շահուց եւ կարեաց մասնակից կ'ըլլար , իր կեանքը անոր կը նուիրէր , իւր տէրերուն հաւատարիմ մնալու համար թէ՛ բարեբաստութեան եւ թէ՛ ձախորդութեան մէջ անոնցմէ չէր բաժնուէր՝ ասիկա իրեն պարծանք եւ փառք համարելով : Իւր տիրասէր սիրտն ընտանեկան համակրութեան կողմանէ իւր տիրոջ սրտին կը հաւասարէր : Ո՛չ միայն իւր տիրոջ որդիքն եւ ազգակիանները , այլ նաև անոր կրքերն ալ կը սիրէր , մինչև անգամ երբեմն ուղղել հարկ կ'ըլլար այս մասին , Տարեկան վարձքն ու շաղկապութեան արժանի գլխաւոր կէտ մը չէր , զի քիչ մը բան էր վարձքը : Ծառայն ղինուորի պէս աւելի պատուոյ համար կը ծառայէր :

Բացք ընտանիքն ալ սիրով և մեծամեծ զոհողութեամբք կը վարձատրէր ծառային իրեն մատուցած ծառայութիւնները : Ուսմունք կը սովորեցնէր անոր և պատուաւոր դիրքի մէջ կը բռնէր, վայելուչ կը հագուեցնէր ծառայն և հետը մեծարանօք կը վարուէր . մէկ խօսքով, անոր անձին, պիտոյից, բարեկեցութեան, պատուոյն և երջանկութեան մեծ հոգ կը տանէր : Եթէ ծառայն հիւանդանար, ընտանիքը միշտ իբրև բարեկամ, կամ ազգական և կամ որդի կը խնամէր զանկա . եթէ անկարող կամ ծեր ըլլար՝ տանը մէջ կը պահուէր, ուսկից տէրը բնաւ մնաս չէր կրեր, զի տանը մէկ անկիւնը քաշուած ըլլալով հանդերձ՝ օգտակար կրնար ըլլալ ծեր ծառայն : Եթէ ամուսնանար՝ անոր տուն տեղ կը պատրաստէր ընտանիքը . անոր որդիքը տանը տղայոց սիրելի բարեկամները կը սեպուէին, իրարու հետ կը խաղային, և երբեմն նոյն և մի դաստիարակութիւնը կ'ընդունէին : Ծառայն իւր տիրոջ տղայոց վրայ կը հսկէր, տէրն և տան տիկինն ալ ծառային որդիքը կը խնամէին . բնաւ մէկզմէկ չէին թողուր, և եթէ դէպքը պահանջէր՝ որ իրարմէ բաժնուին՝ իրարու յիշատակ չէին մոռնար, փոխօրհակի իրերաց կը նպաստէին : Եթէ ծառայն տասը կամ քսան տարի տան մը մէջ կենար, ընտանեաց և իր մէջ անպատճառ ազգակցութիւն կը հաստատուէր :

Այսօր այս ամենն ալ գրեթէ չը կան : Հին աւանդութեանց հաւատարիմ քանի մի ընտանիք ծառայներուն հետ անցեալ ժամանակաց համեմատ կը վարուին, կան ծառայներ ալ՝ որոնք իրենց անձնուիրկան զղացմամբք և աղետական համակրութեամբ մեզի հին ժամանակները կը յիշեցնեն : Սակայն այս պատուական իրաց մնացորդներն ալ, եթէ կան, հետզհետէ անհետանալու վրայ են :

Սրդի ծառային վիճակը բոլորովին գէշցած է, ծառայն ինքն ալ չափն անցուցած է . այսօր մեծագումար դրամներու հետ կը փոխէ պաշտպանութիւնն և աղագայ անատուգութեանց դէմ երաշխաւորութիւնն՝ զոր այն ընտանիքը կուտար իրեն՝ յորում ինք կը բնակէր . ծառայն այլ ևս տանը անհատը, ընտանեաց չանդամը չէ, Կ'ըսեն՝ թէ կատուն տունը կը սիրէ, շունն ալ՝ տէրը . իսկ ծառայն ո՛չ տունը ո՛չ ալ տէրը կը սիրէ : Մեծ վարձք և գլուխն աշխատութիւն կը փնտռէ . երբսր մէկը իրեն շատ վարձք խոստանայ և գլուխն աշխատութիւն յանձնէ, առջի տունը կը ձգէ և միւսը կ'երթայ :

Ծառայները վարձկան եղած են . պզտիկ տեղեր ծառայութիւն ընել չեն ուզեր, այլ կը ջանան պալատներու մէջ պաշտօն ունենալ, թագաւորի սենեկակալեալ ըլլալ, որսորդութիւն ընել եւ այլն եւ այլն : Ուզած տեղերնին կը բնակին, աւելորդ երթեւեկութիւններով կը յոգնին եւ ինքզինքնին ազատ կը համարին, եւ բնաւ չեն կրնար գիմանալ՝ որ շարունակ մի եւ նոյն տան մէջ մնան եւ հոն ծառայեն :

Ահաւասիկ տիրոջ եւ ծառային իրարու հետ ունեցած կամուրջնալիք յարաբերութիւնները, որք հետզհետէ կը հաստատուին . խօսքերնիս աւելի այր ծառայի վրայ է . դալով աղախնոյն, սա ալ իւր պաշտօնին բեռը թեթեւցունել կուզէ :

Տէրերն ալ ծառայից նկատմամբ իրենց պարտուց մէջ ճիշդ չեն, ինչպէս էին առաջ : Ծառայ գործածելու զորոնքը կը պահաջեն՝ որ ծառայն քիչ բանով գոհ ըլլայ, որ արդարութեան հակառակ է :

Սակայն այս ալ ըսենք որ ընտանեաց գլխաւորները ծառայ գործածելու հիմակուան կերպերն ընդունելու պարտաւորեալ չեն . իրաւունք ունին առաջուց ծառայ

յին հետ հարկաւոր պայմաններ դնելու :

Նախ և յառաջ պէտք չէ որ իրենց տունը անբարոյ յական և չարօրինակ մէկը մտցունեն : Աւելի աղէկ է ինքն իրեն ծառայել , քան թէ այսպիսի վատութիւն մը յանձն առնուլ :

Երբոր ընտանեաց զխաւորը ծառայ մը տուն առնել ուզէ , պէտք է որ անոր վրայ 'ի մօտոյ տեղեկութիւն ստանայ . ասիկա այնչափ հարկաւոր է՝ որչափ ծառային ընտանեաց մէջ կենալիք ժամանակը երկայն , և ընտանեաց անդամներուն հետ ունենալիք յարաբերութիւնը յաճախ է :

Այլ են օրականով աշխատող մարդոց վրայ դրուելիք պարտքերը , և այլ տանը մէջ կեցող ծառային վըրայ դրուելիքները : Հարկ է որ լաւ զգուշութիւն ըլլուի տղայոց ծառայից հետ ըրած յարաբերութեանց ատեն : Այս կէտին մէջ պէտք է որ ընտանեաց հայրը շատ խըստութիւն բանեցունէ : Տղայք որչափ քիչ հաղորդակցութիւն ունենան ծառայից հետ՝ այնչափ աւելի աղէկ է , բայց ասոր հակառակ , տղայք ս'ըչափ յարաբերութիւն կ'ընեն ծառայից հետ՝ որ շատ անգամ զանոնք կը շողքորթեն և վարպետ ձեւերով անոնց համակրութիւնը վաստկիլ կուզին : Տղան իր ծնողաց քով կ'զգուշանայ , բայց գործի ատեն ամեն բան կ'ընէ կ'ըսէ արձակ համարձակ :

Տէրերն և տան տիկինները պէտք է ուրեմն ջանան որ իրենց ծառայները քրիստոնէարար ապրին տան մէջ և աղօթքն ամեն բանէ առաջ ընեն : Աղօթքն առ հասարակ ամեն մարդու համար ալ պարտք է : Ծառայք թէ՛ յօրինաց և թէ՛ յօրինակաց ստիպեալ պէտք է աղօթեն միշտ : Տէրերը կիւրակէ օրերը սուրբ պահել պիտի տան և ամեն բան այնպէս պիտի կարգադրեն՝ որ ծառայք իրենց քրիստոնէական պարտաւորութիւնները կարենան

կատարել : Իրաւունք չէ որ ծառայներն ամբողջ շաբաթը աշխատել յետոյ՝ պէտք եղած ատեն իրենց հոգւոյն փրկութեան հոգ չը տանին և եկեղեցի երթալ և արարողութեանց ներկայ դառնուելէ և նոյն իսկ հանդիստ առնլէ արգիլուին :

Տէրը ս'ը ատեն որ խոստովանուի և սուրբ հաղորդութեան մօտենայ , պէտք է ստիպէ ընտանեաց բոլոր անդամները , ծառայներն ալ մէկտեղ որ իրենք ալ երթան խոստովանուին և հաղորդութեան մօտենան . ապա սով կը ցուցնէ թէ ս'ըչափ կարեւորութիւն կուտայ կրօնական պարտուց կատարման : Աստուծոյ անհաւատարիմ ծառայն իւր տիրոջ հաւատարիմ պիտի ըլլայ :

Տէրը ծառային իւր վարձքը ճշդիւ պիտի հատուցանէ , ըստ պատշաճի զանկա պիտի կերակրէ եւ պատսպարէ եւ անոր կարողութենէն վեր աշխատութիւններ պիտի չը դնէ վրան . սակայն պիտի նայի նաեւ որ ծառայն աշխատցունէ , որովհետեւ անդործութիւնը մայր է ամեն մնլութեանց :

Տեսակ մը հրամայել կայ՝ որ խիստ եւ խրոխտ ձեւ մ'ունի . եթէ մէկն իւր ազգեցութիւնն ընդ երկար պահել կուզէ , այսպիսի ձեւերէ պիտի զգուշանայ : Քաղցրութեամբ , չափաւորութեամբ եւ կանոնաւոր կերպով հրամայելով է որ ծառայն կը հնազանդի եւ անոր անհնազանդութեան ընտ առիթ չը մնար :

Ծառային թերութեան մէջ ինկնալու տեղի տալ պէտք չէ , բայց ինկած ատենն ալ յանդիմանելու է , առանց կրից եւ ցատման : Զգուշանալու է ծառայներն արհամարհելէ , ընդ հակառակն պէտք է անոնց առողջութեան , բարեկեցութեան , ընտանեաց եւ այլն , խընամբ տանիլ , Յիշենք՝ որ մեր եղբայրներն են 'ի Յիսուս Քրիստոս , որպէս զի անոնց առիթ չը տամք իրաւացի յանդիմանութիւններով այս խօսքը մեզի յիշեցնելու :

Ծառայն թէ և քիչ կրօնասէր ալ ըլլայ, կրօնքի մասին ջերմեռանդ ընտանեաց մէջ կը յուսայ աւելի մեծաւորոյ ըլլալ, բարւոք հրամայուիլ, աղէկ խնամուիլ՝ քան թէ կրօնքի մասին գաղջ ընտանեաց մէջ: Չդուշանամք անոնց այս յոյսը, որ կը պատուէ զԱստուած, 'ի դերև հանելէ, և ինչպէս կ'ըսէ Առաքեալը, զդուշանամք Յիսուսի ֆրիստոսի պատիւը վտանդի մէջ դնելէ և մեր պաշտած Աստուածը հայհոյել տալէ:

Տէրերն այսօր յաճախ կը գանգատին իրենց ծառայից վրայ. բայց միթէ իրենք ալ տեղի չեն տար երբեմն ծառայից իրենց վրայ գանգատելու:

Աւա՛ղ, այսօր ո՛չ հնազանդիլ ո՛չ ալ հրամայել գիտցող կայ:

Դ.

ՄԻՈՒԹԻՒՆ ԸՆՏԱՆԵԱՅ ԱՆԳԱՄՈՑ

Թէ ինչպէս այս միութիւնը կը տկարանայ եւ ինչպէս կը զօրանայ

Ընտանեաց բոլոր անդամոց միութիւնն իւր երջանկութեան վերջին պայմանն է: Ընտանիքը կատարելալապէս բարեկարգ չը կրնար ըլլալ՝ եթէ իւր անդամոց սրտերը սիրով իրարու հետ միացած չըլլան: Հին կտակարանի պատմութիւնը կը ցուցնէ՝ որ խիստ կարգաւոր ընտանիքներն անգամ աղատ մնացած չեն այն խռովութիւններէն՝ որոնք ընտանեկան գոթութենէ յառաջ եկած են. գրեթէ երկրաւոր Դրախտին դրան առջև

Աբէլի իւր եղբօրմէն սպաննուելու ահեղ տեսարանը, Եսաւայ Յակոբայ դէմ ունեցած ատելութիւնն և Յովսէփայ իւր եղբայրներէն վաճառուիլը թշնամութեանց և եղերանց այնպիսի զարհուրելի օրինակներ են՝ զորոնք համահայր որդւոց մէջ եղած գոթութիւնները կը ծընին: Արեւակցաց մէջ պատահած ատելութիւնը զգացմանց ամենէն աւելի դարշելին և չարն է, ուսկից կը ծագին ամենէն մեծ ոճիրներն ալ:

Ընտանեկան գոթութիւնները, յիրաւի այնչափ չափազանց չեն ըլլար, նա մանաւանդ քրիստոնեայ ընտանեաց մէջ. բայց եւ այնպէս մեծամեծ չարեաց պատճառ կ'ըլլան, որով ընտանեկան ուրախութիւնները կը թունաւորուին եւ խռովութիւններ կը ծագին: Մէկ փոքրիկ հակակրութիւնը կամ անսիրելութիւնը կը դատնայ կ'ըլլայ այնպիսի փնտասկար խմոր մը՝ որ ամբողջ ընտանեկան զանդուածը հետը կը խմորէ եւ ապագային մեծամեծ չարեաց առիթ կ'ըլլայ:

Արինահեղ եւ մահառիթ ատելութիւնները թեթև հակակրութիւններէ եւ աննշան պաղութիւններէ ըսկըսած են: Նախանձու սերմը, զոր պէտք էր 'ի բողբոջին կտրել նետել, հեացհետէ կ'աճի թիւրիմաց խօսքերով, հակառակութիւններով, կծու խօսքերով եւ չնչին կռիւներով. նախանձու սերմը պղտոր եւ անզուտ հեղուկի մրուրի պէս կը շատնայ եւ անմիջապէս ամբողջ սիրտը կ'ապականէ: Եթէ հսկողութիւն չըլլայ՝ բիւրաւօր առիթներ տեղի պիտի տան այս սերման իւր խմորը տարածելու եւ քիչ քիչ աճելու. զոր օրինակ մէկուն գեղեցիկ հանգամանքները, յաջողութիւնները, շնորհքներն եւ միւսոյն թերութիւնները, տկարութիւններն ու խօթութիւնները: Մէկուն գերազանցութիւնը միւսոյն նախանձը կը շարժէ, նուաստութիւնն արհամարհանք եւ զգուանք կը պատճառէ: Շատ բնական է

հօր մը որ իւր տղայոց մէջէն ամենէն փոքրը , գեղեցիկն եւ պարկեշտը սիրէ :

Այլ սակայն Յովսեփայ առաքինութիւնն և հօրը սէրն իւր եղբարց նախանձուն առիթ եղաւ և զանոնք յեղեռնագործութիւն դրդեց . Արէլ իւր ընտիր նուէրն երը կ'ընծայէր Աստուծոյ , Աստուած ալ իւր հօտը կ'օրհնէր և կը շատցունէր և իւր բոլոր գործերը կը աջողէր : Այսչափը բաւական եղաւ կայենի նախանձը շարժելու , զի կը տեսնէր՝ որ իւր եղբօր վարմունքը բարի էր . բայց որովհետեւ անոր այս վարմունքն իրենին իբրև անուղղակի յանդիմանութիւն և պարսաւ նը կատեց , սւստի սկսաւ նախ ծուռ նայիլ իւր եղբօրը վրայ , յետոյ յայտնի ատել , և վերջապէս սպաննեց : Եթէ իւր սրտին չարութիւնը զսպէր 'ի սկզբան , և փոխանակ ատելու փափաքող բլլար Արէլի դործոց , հարկաւ այն սպանութիւնը պիտի չը դործէր : Ընտանեաց մէջ ծագելիք դժտութեանց առաջքն առնլու ամենէն լաւ միջոցն է ատելութեան նորաբողոք շառախղներն անմիջապէս կտրել նետել :

Ինչ որ եղբարց համար ըսինք , ընտանեաց բոլոր անհատներուն համար ալ հասկնալու է , Բնութիւնն այն կապը հաստատած է ընտանեաց մէջ , որ անկախ 'ի կամաց , արենակիցներն իրարու հետ կը միացունէ : Բնտանեաց բոլոր անդամները զիրար անկեղծ սիրով սիրելով և մեծարելով է՝ որ կենդանութիւն և ազգեցութիւն կրնան ունենալ : Սուրբ Գրոց մէջ խօսք մը կայ որ շատ ճշմարիտ է . «Եղունկ անոր որ մինակ կ'ապրի » , կրնամ ըսել՝ թէ մենակեաց ընտանիք մը՝ որ իւր նեցուկներն իրմէ դուրս կը փնտռէ , միշտ խղճալի փիճակ կ'ունենայ : Ազգակցութիւն չունեցող ընտանիքը խօթացեալ և անդամահատ մարմնոց կը նմանի , մէկ ճիւղ ունեցող թուփի մը կը նմանի , և ծառի կոճղի մը՝ որ ա-

ռանց մայթի մնացած է :

Երբեմն իրարմէ հեռացած ազգականներուն մէջ բարի յարաբերութիւններն ամրանալու պէտք ունին , ոչ միայն անսողիւտ քաղաքավարութեամբ , որ կրթեալ մարդուն վրայէն բնաւ պակաս չըլլար , այլ նաև փոփոխակի ծառայութիւններով՝ որ արդասիք են սիրալիլ յարաբերութեանց :

Ոնչուչտ , հարկ կ'ըլլայ մերթ ընդ մերթ զօհողութիւն ընել , ինչպէս մասնաւոր շահն ընդհանուրին զօհել . դարձեալ հարկ կ'ըլլայ երբեմն ընդունածէն աւելի շատ տալ և բնաւ փոխարէնը չը պահանջել . այս այսպէս է , բայց ասանկ ընողը գովելի մարդասիրութեան արժանիքն ունենալէ զատ պիտի վայելէ նաև իւր այս քրիստոնէավայել վարմունքին պտուղը . շատ անդամ մեղնէ պղտկին կարօտ կ'ըլլամբ . բաղղն իւր թաւաղանոյն վրայ կեցուցած է այսօր այն մարդը՝ զոր վաղը անկէ վար պիտի ձգէ : Բարեսիրտ մէկն ինքզինք երջանիկ կը համարի իւր աղքատ ազգականն ալ պատուելով և կրօնի պատուէրներուն հնազանդելով՝ որ կը հրամայեն մեզ օգնել նաև օտարին՝ երբ կարօտութեան մէջ ինկած է :

Ընտանեաց բոլոր անդամոց միութիւնը հաստատուն պահելն աւելի ընտանեաց գլխաւորներուն պարտքն է . պիտի զգուշանան՝ որ ազգակցութեան կապը չը թուլնայ կամ չը խղի , Պիտի համոզեն՝ որ ընտանեաց անդամոց միոյն պատիւն և յաջողութիւններն ամենուն ալ կը վերաբերին , և թէ միոյն ձախորդութիւնը կամ անպատուութիւնը բոլորին համար ալ է , Ընտանեաց տարերքներուն հաստատութիւնն պատուոց բուռն զգացում մը կուտայ իւրաքանչիւր անդամոց :

Աւաղ , ցեղական անունը պատիւն և մեծութիւնը օրէ օր մեր մէջէն անհետանալու և փոշխանալու վրայ

են : Մեծամեծ ընտանիքներ քաղաքաց մէջէն անհե-
տացած են , գիւղերուն մէջ ալ սակաւաթիւ են . այս
պատճառաւ ընկերական և կենսական զօրութիւնը նո-
ւազած է :

Ի մանկութենէ որք մնացած մէկուն վրայ 'ի սրտէ
կը գթամ , բայց բնաւ սէր համակրութիւն չունիմ այն
մարդուն վրայ՝ որ ծուլութեամբ , անփութութեամբ ,
հալարտութեամբ կամ ագահութեամբ իւր ընտանիքն
երեսի վրայ ձգելով՝ ողորմելի վիճակի կ'ենթարկուի :

Միաբան , բարեկարգ , աշխատասէր և կրօնասէր
ընտանեաց պրոյմաններուն վրայ խօսեցայ . գիրքս ա-
ւարտելէ առաջ քիչ մ'ալ ընտանեաց սիրոյ զգացմունք-
ներուն վրայ պիտի խօսիմ :

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Այլ ընտանեաց

Սուրբ սէր մը կայ՝ սրուն խոր և կենդանի արմատ-
ները կը թախանցեն և կը ընուն բարեկիրթ սիրտերը ,
սէր մը՝ որ իւր ուժգնութեամբ , կարևորութեամբ և
քաղցր արդասեօք պաշտաման յատկութիւն կ'ստանայ :
Այս սէրն ընտանեաց՝ բայց քրիստոնեաց ընտանեաց սէ-
րըն է : Ընտանեաց պաշտամունքը Աստուծոյ պաշտա-
մունքէն վերջը գալով՝ ասոր պէս իւր տօները , ուրա-
խութեանց ժամանակներն և փրկաւէտ աղբեցութիւն-
ներն ունի , կը մխիթարէ և կը զուարթացունէ հոգի-
ները , երջանկութիւնը կ'աւելցունէ և կենաց անհրա-
ժեշտ վիշտերը կը մեղմացնէ :

Հօր , մօր կամ սիրելի ազգականի մահը դառով
կըյուզէ սրտերը , բայց ամենևին ընտանեաց պաշտա-
մունքը չը տապալէր : Ընդ հակառակն , կարծես թէ
այս աշխարհի մէջ՝ որ սիրելեաց մահուամբ գերեզման-
ներ լեցուցած է , սուրբ բարեկամութեան բողբոջները՝
որոց մահը խնայած է , աւելի մատղաշ և աւելի զօրա-
ւոր կ'ըլլան :

Ընտանիքն ամեն գարու մէջ սկզբնական օրհնեալ
տարերքն և գլխաւոր հիմն է մարդկային ընկերակա-
նութեան : Իւր ամեն անդամները թէպէտ և հետզհե-
տէ մեռնելու դատապարտեալ են , սակայն միշտ կը
վերանորոգի իւր զօրաւոր բողբոջներով՝ որ իւր ար-

մասներն անդադար կը վերընձիւղեն և հին կոճղին տեղը կը յաջորդեն :

Ընտանիքը՝ որ կը կազմուի 'ի հօրէ , 'ի մօրէ և յորդուոյ , երկրպագելի երրորդութեան խորհրդաւոր պատկերը , Աստուծոյ զօրութեան , խնաստութեան և սիրոյն ճաճանչն է :

Ընտանիք . ո՛վ չքեղ սրբատուն այն հեղինակութեան՝ որ կ'ստեղծէ , այն դաստիարակութեան՝ որ կը կրթէ , և այն նախախնամութեան՝ որ կը յարատեւէ :

Ընտանիք . կենդանի՛ և անշէ՛ջ վառարան մարդոց և տղայոց սրահն մէջ գանուած երկու վեհ զգացմանց , այսինքն , երախտագիտութեան և յարգանայ :

Ընտանիք . անմահ առարկայ , առաջին և վերջին նպատակ խնամոց իրկնից և աստուածային օրինաց , ինչպէս նաև աշխարհի օրինաց և ընկերական օրէնքագրութեանց :

Ընտանիք . վերջապէս մարդուս ականջին ամենէն քաղցր և սիրելի անունները . հայր , մայր , որդի , եղբայր , քոյր , դուստր . հոս են անարատ սէրն և կենաց առաջին բարեկամութիւնները , անուշիկ ուրախութիւններն և գեղեցիկ առաքինութիւնները , որք են բարեմտութիւն , պարզութիւն և անմեղութիւն : Տակաւին ինչ ըսեմ ընտանեաց համար : Ո՛հ , մարդկային լեզուին մէջ ասկէ աւելի հիանալի անուն չը կայ , մարդկային սրտին մէջ ասկէ աւելի սուրբ և անեղձանելի յիշատակներ չը կան . . . : վասն որոց երբ Յիսուս Քրիստոս ու զեց ցուցնել՝ թէ ո՛րչափ կը սիրէ իւր երկնաւոր Հօրը պատուէրները կատարողները , սա խօսքն ըսաւ . « Զոր աստիճէ զիսմ հօր իմոյ՝ որ յերկնան է , նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր » :

Իբրև վերջաբան գրքիս , հռչակաւոր եպիսկոպոսի մը խօսքերը մէջ պիտի բերեմ , որոնք աշխատասէր ,

բարեկիրթ եւ միաբան ընտանեաց ճիշդ նկարագրութիւնքն են :

« Կենացս ամենէն քաղցր ուրախութիւններս ընտանեաց սիրոյն կը պարտիմ :

Քահանայական պաշտօնը թէպէտ եւ ստիպեց զիս ծննդական վայրէս , մանկութեանս ընակարանէն եւ առաջին խանդիցս սրբարանէն հեռի ապրելու , սակայն միշտ ծնողական անյաղթելի զօրութիւն մը կղզայի ներսս՝ որ դէպ 'ի այն սրբավայր տեղերը կը ձգէր զիս : Հոն ջեռուցի սիրտս եւ պնդեցի զօրութիւնս : Եւ թէպէտ շատ քիչ կեցայ հայրենի տան մէջ , սակայն չը կրցայ թողուլ զայն առանց խորին սխրանաց , որ փոխանակ հոգիս վհատեցնելու առաւել եւս կը զօրացնէր : Տունէն մեկնելէս վերջն ալ երկայն ատեն ընտանեացս հետ կ'ապրէի և բացակայութիւնս աւելի սիրելի կ'ընէր ինձ զայն :

Սակայն ինչ տեսած էի տանը մէջ , խիտ ընական բան մը . այսօր իսկ ընտանեացս յիշատակը սիրտս կը կախարդէ , չը գիտեմ ինչո՛ւ և ինչպէս :

Երբոր տունը կ'այցելէի , բնաւ ընտանեկան աշխատութիւնը չէր ընդհատուեր . ամենայն ինչ իւր սովորական քայլովը կ'երթար , այնպէս որ շատ անգամ զիս մինակ կը թողուին տանը մէջ :

Քաղցր երջանկութիւն մը կ'ղգայի ներսս՝ երբ ուշադրութեամբ քրիստոնեայ ընտանիքի մը կեանքը կը դիտէի :

Պատմե՛մ թէ ինչպէս կ'անցունէր օրը : Արշալոյսը ծագելուն պէս սանդղիտոց վրայ հօրս ծանրագնաց և հանդարտ քայլերուն ձայնը կը լսէի , որ կանխատեսութեամբ օրուան ամբողջ գործերը միտքը բերելով՝ իւրաքանչիւրին իր առանձին գործերը յանձնելու կը պատրաստուէր : Քունէն դեռ նոր արթնցող ըն-

տանեաց ձայները թռչնոց առաջին դայլայլիկներուն հետ կը խառնուէին . դեռ բոլորովին չըլուսցած՝ տղայոց ցած ձայները կը լսուէին : Այն վայրկենին կ'սպասէի՝ յորում թռչնոց ճռուողումներուն նմանող ձայները դադրելով՝ աղօթքի պիտի կանգնեաք : Առաջին անգամ մեծ եղբայրները կ'երնէին անկողնէն , և մինչև որ պըզտիկներն ալ կարգաւ ելնէին՝ անոնք դուրսը կ'ըրօսնուին :

Իւրաքանչիւրն իւր աշխատութիւնն ունէր , յորում ծնողաց կանխատեսութիւնն և լաւ վարչութիւնը կը տեսնուէր :

Երբ կերակրոյ ատեն կենաց ամեն հասակները մէկտեղ կը ժողովէին , խիստ սքանչելի տեսարան մը կը դառնար , զոր պատկերահանը նկարել կուղէր :

Առանձնական շրջադայլութեանց մէջ՝ զբօսանաց վերապահեալ զուարճալի ընթերցումներս ընդհատելով , բլրակի մը զառ ՚ի վայրին վրայ նստած՝ այն սպիտակ տունը կը դիտէի , որուն շուրջը գտնուած մարդաղետի մտններուն եւ կանաչազարդ դաշտերուն մէջ ընտանիքը ցիր և ցան , այլ զբաղեալ կ'երթեւեկէր , կ'եղնէր , կը մտնէր ժրաջան մեղուաց պարերու պէս՝ որ անդադար փեթակին բոլորտիքը կը թռչտին և մեղր կը գործեն :

Պատմե՞մ'նաև երեկոյեան ընթրիքէն վերջը տեղի ունեցած ուրախութիւնն ալ : Այն վայրկենին՝ յորում հողին իւր օրական պարտքը կատարելուն վրայ բերկրալից՝ հանգստանալու պէտքը կ'ըզայ , և երբ քաղցըր խոնջութիւն մը՝ որ վրկաւէտ քնոյ յառաջընթացն է , կը հրաւիրէ ՚ի հանգստութիւն , ըստ բանի սուրբ Գրոց , զիւրաքանչիւր ոք ընդ ինձ և ընդ ինչեւեւ ինձ , հեշտալի էր ընտանեաց երեկոյեան խօսակցութեանց մէջ մտնել , յորս փոփոխակի իրարու խնդակցութիւններ

կը յայտնուէին և երբեմն իրարու դաս կուտային և օրինակ կ'ըլլային : Փորձառութիւնն իմաստնագունից համար ալ այնպիսի դպրոց մ'է՝ ուսկից իւրաքանչիւր ոք կըրնայ օգտիլ :

Փոքրիկ տղայք իրիկուան ընթրիքէն զրգուեալ զուարթագին կը խաղային , վազելով և ցատկելով մեր նստած աթոռներուն քովէն կ'անցնէին և մեր խօսակցութեան ձայները կ'ընդհատէին : Մենք ուշադրութիւնն իս անոնց վրայ դարձունելով խօսակցութեան նիւթը կը փոխէինք և կ'սկսէինք նոցա բարի դաստիարակութեան միջոցներուն վրայ խոկալ :

Վերջին նշանը տրուելուն պէս ամեն ձայն կը լռէր : Այն ընտանեկան աղօթից ժամանակն էր՝ յորում օրական յաջողութեանց համար դոհութիւն կը վերառաքուէր Աստուծոյ , եւ հետեւեալ աւուր համար նորանոր առաջադրութիւններ կըլլային . տղայոց անմեղ ձայնն ալ յերկինս կը բարձրանայր իբրև զխուճկ երեկոյեան պատարագաց :

Հետեւեալ առաւօտը նախատօնակի կը նմանէր . կը զուարճանայինք այսպէս միաբան աշխատեմունս վրայ , իբրև վտակ մը՝ որ միշտ նոյն ընթացքն ունի եւ նոյն եւ մի մրմունջը կը հանէ :

Իւրաքանչիւր տարի հայրենի տունս այցելած ատեն՝ ընտանեացս մէջ կը դիտէի ինչ որ երկրագործը մայիս եւ յունիս ամսոց մէջ կը դիտէ մշակեալ դաշտին մէջ՝ ուր գարնան առաջին օրերէն ՚ի վեր գայած չէ :

Այս դաշտին մէջ երկրագործին բացակայութեանը ամեն բան աճած կ'ըլլայ . կըտեսնէ երբեմն մերկ գետնոյն վրայ կանաչութիւն , նորաբոյս ծաղիկներ եւ հասկալից պարարտացած ցորեններ : Այսպէս ալ ընտանեաց մէջ ամեն բան աճած եւ զարգացած էր : Աստուածային նախախնամութիւնն ինչպէս հողին՝ նոյնպէս ալ ընտա-

նեաց մշտանորոգ տեսիլ մը կուտայ : Կը դիտէի զսան՝
դիացն՝ որ մայրական գրկէն ելած՝ իւր դողդոջուն
ծունկերուն վրայ քայլելու փորձ կ'ընէր . մանկիկը պա-
տանեակ եղած էր , երիտասարդ աղջիկը դիւրակոր
բունի նման բարձրացած էր , զգացումներն արթնցած ,
յիմար զուարճութիւններն անհետացած , խորհրդածու-
թիւնը հասունցած և իւր պարտուց վրայ կը մտածէր :
Հայրն և մայրն նոր մեղուանոց մը պատրաստած կ'ըլլա-
յին և փոքրիկ մեղուն կ'երթար աստուածային օրինաց
համաձայն ուրիշ նոր պար մը յօրինելու ։

Ո՛վ ֆրիստոս փրկիչ , անսպա՛ռ աղբիւր սիրոյ , խա-
ղաղութեան և երջանկութեան , այս անհաւատ դարն
իւր անձնասիրութեան և անհաւատութեան շրջանակէն
հանէ՛ , յորում՝ վրդովեալ կը ծփայ , որպէս զի վերանո-
րոգի ՚ի ծոց սիրոյ , հաւատոյ , բարեկարգութեան և
միութեան քրիստոնեայ ընտանեաց :



Յ Ա Ն Կ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՄՈՒՄԵՈՒԹԻՒՆ	1
Ա . Հիմնական պայմանք ամուսնութեան	1
Բ . Ամուսնութիւնն իբրեւ խորհուրդ	6
Գ . Փոխադարձ պարտիք առն եւ կնոջ	10
ՈՐԴԻՔ	19
Ա . Ամուսնութեան նպատակները	19
Բ . Ամուսնութեան մէջ կամաւոր կամ մեղա- պարտ ամուսնութիւնք	20
Գ . Թէ ո՛րչափ չարագոյն է դիտմամբ ամուսնութիւնը	23
Դ . Մահ միամօր որդւոյ	25
Ե . Բազմորդի ընտանեաց երկիւղը	27
Զ . Մկրտութիւն	30
Է . Սանտու	32
Ը . Տղային առաջին դաստիարակը մայրն է	36
Թ . Գպրոց եւ ուսումնարան	39
Ժ . Աղէկ ուսումնարանի մը ընտրութիւնը	41
ԺԱ . Թէ ի՛նչ պարտքեր ունին ծնողք իրենց դպրոցական զաւակաց վրայ	46
ԺԲ . Վարժարանէն ելող օրիորդը	50
ԸՆՏԱՆԻՔ	54
Ա . Կրօնք . ընտանիքի մը առաջին կանոնն է կը- րօնքը . սուտ գիտութեանց առարկութիւն- ներէն ընտանիքներ խաբուելու չեն :	54

Բ . ընտանեաց աշխատութիւնը	62
ա. Թէ ի՞նչ բանի վրայ կը կայանայ	62
բ. Ընտրութիւն վիճակի	66
գ. Եկեղեցական վիճակ	68
դ. Զինուորական վիճակ	71
Գ . Բարեկարգութիւն	73
ա. Տան մէջ կարգադրութիւն	73
բ. Հնազանդութիւն եւ մեծարանք որդւոց առ ծնողս իւրեանց	78
ա. Լաւ ճանչնալ եւ հսկել տղայոց վրայ	79
բ. Տղոց վրայ ազդեցութիւն բանեցնելու համար ի՞նչ պէտք է	80
գ. Պէտք եղած ատեն պատժել եւ քաջալերել	82
դ. Հայրը մայրը պէտք է որ իրենց անբռնա- բարելի իրաւունքները պաշտպանեն ու գործադրեն	87
Դ . Ծառայք . Թէ ընտանեաց գլխաւորք ի՞նչ պարտքեր ունին առ ծառայս	93
Ե . Միութիւն ընտանեաց անդամոց . Թէ ի՞նչ պէս այս միութիւնը կը տկարանայ եւ ի՞նչպէս կը վորանայ	98
ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ	103
Սէր ընտանեաց	103

1638

15m

0073

« Ազգային գրադարան



NL0057152

